




**Հայաստանի
Հանրապետության
Ազգային ժողովի
արտահերթ
ընտրություններ
2018թ. դեկտեմբերի 9
«ԱՆԿԱԽ ԴԻՏՈՐԴ»
հասարակական դաշինք**

Զեկույց

Վանաձոր 2019



**Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի արտահերթ
ընտրություններ**

2018թ. դեկտեմբերի 9

«ԱՆԿԱԽ ԴԻՏՈՐԴ»

հասարակական դաշինք

Զեկույց

2019թ.

Վանաձոր

Խմբագիր՝

Արթուր Սաքունց

Հեղինակներ՝

Վարդինե Գրիգորյան

Անտոն Իվչենկո

Ռուբեն Սարգսյան

Արտուր Հարությունյան

Վահրամ Թոքմաջյան

Վիկտորյա Անդրեասյան

Դիտորդական առաքելությունն իրականացվել է «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի անդամ և գործընկեր կազմակերպությունների կողմից՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ «Զաղաքացիական հասարակությունը Հայաստանում ընտրությունների նախապատրաստման և մոնիտորինգի գործընթացներում. ընտրություններ բոլորի համար» ծրագրի շրջանակներում:

#Elections4All

Սույն հրապարակումը թողարկվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Սույն հրատարակության բովանդակության համար պատասխանատու է «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը և այն պարզադիր չէ, որ արտացոլի Եվրոպական միության տեսակետները:

Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են:

Բովանդակություն

Նախաբան	7
Մեթոդաբանություն	9
Քաղաքական համատեքստ	13
Օրենսդրական դաշտ	27
Ընտրությունների կազմակերպումը	33
Ընտրական հանձնաժողովներ	33
Տեղամասերի կահավորում և տեսանկարահանում	35
Տեղամասերի մատչելիություն	36
Թեկնածուների գրանցում	36
Ընտրական ցուցակներ	41
Դիտորդական առաքելությունների գրանցում	42
Նախընտրական փուլի դիտարկում	45
Առաջադրված կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների թեկնածուների կազմը	45
Ֆինանսական հաշվետվություններ և հայտարարագրեր	50
Նախընտրական քարոզչություն	53
Քարոզչության փուլում ՉԼՄ մշտադիտարկում	63
Քվեարկության դիտարկում	68
Քվեարկության նախապատրաստում	69
Քվեարկության ընթացքում իրադրություններ տեղամասերի շրջակայքում	71
Քվեարկության ընթացքում իրադրությունը տեղամասում	76
Շրջիկ խմբերի դիտարկումների ամփոփում	97
Ձայների ամփոփում	98
Տարածքային ընտրական հանձնաժողովների դիտարկում	105
Արդյունքների վերլուծություն	108
Հետընտրական զարգացումներ և միջազգային արձագանք	108
Կանանց ներկայացվածություն	110

Համեմատականներ 2017թ. ԱԺ ընտրությունների հետ	111
Արձանագրված խախտումների առնչությամբ «Անկախ դիտորդ» դաշինքի գործողությունները և իրավասու մարմինների արձագանքը	120
Հիմնական եզրակացություններ	124
Առաջարկություններ	128
Ընդհանուր	128
Ընտրակարգ	128
Կանանց և ազգային փոքրամասնությունների ներկայացվածություն	129
Ընտրական հանձնաժողովներ	130
Տեղամասերի կահավորում և տեսանկարահանում	133
Ընտրական գործընթացների մատչելիություն	133
Ընտրական ցուցակներ	134
Դիտորդների, վստահված անձանց, ՉԼՄ ներկայացուցիչների և թեկնածուների գրանցումը և իրավունքները	135
Նախընտրական քարոզչություն, քարոզչության ֆինանսավորում և ծախսերի հայտարարագրում	137
Զվեարկության ընթացք	139
Զվեարկության արդյունքների ամփոփում	140
Խախտումների վիճարկում	141
«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի կազմի մասին	143

Նախաբան

2018թ. գարնանը թավշյա հեղափոխության արդյունքում ձևավորված անցումային կառավարությունն իր առաջնահերթությունը հռչակեց մեկ տարվա ընթացքում բարելավված օրենսդրական հիմքով, առանց տարածքային ընտրակարգի, «արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացումը, որը կլինի իրապես ազատ, արդար, թափանցիկ, ժողովրդավարական»¹:

2018 թ. սեպտեմբերի 28-ին Կառավարության կողմից հաստատվեց Ընտրական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգը: Ըստ գործող սահմանադրության, եթե Ազգային ժողովը սահմանված ժամկետում չի ընտրում ԶԶ վարչապետ կամ հավանություն չի տալիս Կառավարության ծրագրին, այն արձակվում է իրավունքի ուժով և նշանակվում են արտահերթ ընտրություններ: Զոկտեմբերի 2-ին Ազգային ժողովի (ԱԺ) Հայաստանի հանրապետական, «Ծառուկյան» և Հայ հեղափոխական դաշնակցություն խմբակցությունները, արտահերթ նիստ հրավիրելով, ընդունեցին «Ազգային ժողովի կանոնակարգ օրենքում» փոփոխություն կատարելու մասին նախագիծը, որն ուղղված էր այդ պահին ԱԺ արձակելու առավել հավանական սցենարի իրագործմանը խոչընդոտելուն: Վարչապետ Ն. Փաշինյանը հրամանագիր ստորագրեց վերոնշյալ խմբակցությունների կուսակցական նախարարներին և մարզպետներին պաշտոնանկ անելու մասին, իսկ հոկտեմբերի 16-ին հրաժարական տվեց, ինչով սկսվեց Ազգային ժողովը իրավունքի ուժով ազատ արձակելու սահմանադրական գործընթացը: Զոկտեմբերի 22-ին Ազգային ժողովում ձախողվեց առաջին ընթերցմամբ Ընտրական օրենսգրքի փոփոխությունների ընդունումը: Զոկտեմբերի 23-ին ԶԶ նախագահ Արմեն Սարգսյանը չստորագրեց հոկտեմբերի 2-ին ընդունված նախագիծը և ուղարկեց այն Սահմանադրական դատարան: Զոկտեմբերի 24-ին Սահմանադրությամբ նախատեսված քվեարկության պահանջը կատարելու նպատակով՝ ԶԶ վարչապետի պաշտոնում առաջադրված Նիկոլ Փաշինյանը չընտրվեց Ազգային ժողովի կողմից: Զոկտեմբերի 28-ին

¹ Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի մասին ԶԶ Կառավարության որոշում, հունիսի 1 (<http://www.gov.am/files/docs/2782.pdf>)

Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ կրկին տապալեց Ընտրական օրենսգրքի փոփոխությունների նախագիծը: Նոյեմբերի 1-ին Ազգային ժողովը երկրորդ անգամ չընտրեց վարչապետ, որի պաշտոնի միակ թեկնածուն էր Նիկոլ Փաշինյանը, իսկ նախագահ Ա. Սարգսյանը հրամանագիր ստորագրեց ԱԺ արտահերթ ընտրությունները դեկտեմբերի 9-ին նշանակելու մասին:

2018թ. դեկտեմբերի 9-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունները տեղի ունեցան առանց ընտրական օրենսգրքի փոփոխությունների:

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը անդամ և գործընկեր կազմակերպությունների հետ² իրականացրեց արտահերթ ընտրությունների երկարաժամկետ և կարճաժամկետ դիտարկում՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում:

Սույն զեկույցն ամփոփում է «Անկախ դիտորդ» դաշինքի երկարաժամկետ և կարճաժամկետ դիտարկումների արդյունքները:

² Դրանք են՝

Հելսինկյան Զաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

Իրազեկ քաղաքացիների միավորում

Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ

«Սոցիոսկոպ» ՀԿ

«Գործիսի մամուլի ակումբ» ՀԿ

«Հաշմանդամություն և ներառական զարգացում» ՀԿ

«Ազաթ» Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն
հասարակական կազմակերպություն

Մեթոդաբանություն

«Անկախ դիտորդ» դաշինքը նախընտրական քարոզչության դիտարկումն իրականացրել է երկարաժամկետ դիտորդության շրջանակներում: Երկարաժամկետ դիտարկման աշխատանքներում ներգրավված են եղել 84 իտորդ, որոնք իրենց աշխատանքներն իրականացրել են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Դիտարկումների իրականացման ընթացքում հավաքագրված տեղեկատվության համակարգվածությունն ապահովելու նպատակով կիրառվել են կիսաստանդարտացված դիտարկման/հարցազրույցների քարտեր:³

- Հանդիպում/հարցազրույցներ թեկնածուների, շտաբերի ղեկավարների, տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հետ
- Ընտրողների հետ հանդիպումների/հավաքների դիտարկում
- Հարցազրույցներ հանդիպումների/հավաքների մասնակիցների հետ
- Արագ արձագանքում/խախտումների արձանագրում

Վերոնշյալ քարտերի միջոցով իրականացվել են հարցազրույցներ/դիտարկումներ՝

- 207 կուսակցության/դաշինքի ընտրական տարածքի կենտրոնական նախընտրական շտաբների ղեկավարների հետ,
- 371 նախընտրական հանդիպման մասնակցի հետ,
- 290 ԱԺ պատգամավորի թեկնածուների հետ (կուսակցության/դաշինքի տարածքային ցուցակով առաջադրված),
- 191 տարածքային թեկնածուների նախընտրական շտաբերի ղեկավարների հետ,
- 38 տարածքային ընտրական հանձնաժողովների նախագահների և 2 քարտուղարների հետ,
- 121 տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների հետ,

³ Ընդհանուր առմամբ երկարաժամկետ դիտարկման իրականացման նպատակով օգտագործվել են 10 տարբեր տեսակի դիտարկման/հարցազրույցների քարտեր:

- 199 կուսակցության/թեկնածուի ընտրողների հետ հանդիպումներ,

Դաշինքի կողմից իրականացվել է հեռուստաալիքների, առցանց լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի մշտադիտարկում: Նոյեմբերի 19-ից (պաշտոնական քարոզարշավի մեկնարկից մեկ շաբաթ առաջ) մինչև դեկտեմբերի 9-ը ներառյալ մշտադիտարկման են ենթարկվել վեց հեռուստաալիք՝ Զանրային («Առաջին ալիք») «Արարատ» (նոյեմբերի 25-ից այն վերանվանվել է «5-րդ ալիք»), «Արմենիա TV», «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շանթ», և 5 առցանց լրատվամիջոց՝ «Առավոտ», «Հայկական ժամանակ», 1in.am, tert.am, news.am: Հայաստանում սոցիալական ցանցերից քաղաքական նպատակներով օգտագործվում է հիմնականում Facebook-ը, հետևաբար, ուսումնասիրվել է միայն այս սոցցանցը:

Հեռուստաալիքների և առցանց լրատվամիջոցների մշտադիտարկման ժամանակ հաշվարկվել է ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին, դրանց անդամներին և այդ ուժերի հետ այս կամ այն կերպ փոխակապակցված անձանց հատկացված ժամանակը և տեքստի ծավալը՝ վայրկյաններով ու տոկոսներով: Հեռուստաալիքների մշտադիտարկումն իրականացվել է ժամը 18:00-24:00 ընկած ժամանակահատվածում (փրայմ թայմ՝ ամենաշատ դիտումներ ունեցող ժամանակահատվածը): Առցանց տիրույթում ուսումնասիրվել է ամբողջ օրվա լրահոսը՝ բացառապես միայն տեքստային բովանդակությունը:

Ընդ որում, քանակական վերլուծության են ենթարկվել քաղաքական ուժերի մասին այն դրվագները, որտեղ հասցեավորված հիշատակվել է քաղաքական ուժի կամ այդ ուժի հետ փոխակապակցված անձի անունը: Անհասցե հայտարարությունները քանակական վերլուծության ենթարկվել:

Բացի հատկացված ժամանակից՝ հաշվի է առնվել նաև լուսաբանման տոնայնությունը՝ դրական, բացասական և չեզոք, և այն՝ արդյոք քաղաքական ուժը/գործիչը լուսաբանվում է իր ինստիտուցիոնալ (ի պաշտոնե, օրինակ, որպես վարչապետ) գործառույթների շրջանակում, թե քարոզարշավի:

Ֆեյսբուք սոցիալական ցանցում վերլուծության են ենթարկվել ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի պաշտոնական էջերը, ինչպես նաև նրանց առաջին համարների օգտահաշիվներն ու պաշտոնական էջերը:

Քվեարկության օրվա դիտարկումն իրականացվել է շուրջ 800 հոգուց բաղկացած դիտորդական խմբի կողմից՝ մի քանի դիտարկման քարտերի հիման վրա: ՀՀ ողջ տարածքում դիտարկվել է 300 տեղամաս՝ բոլոր տեղամասերի շուրջ 15% տոկոսը: Դիտարկվելիք տեղամասերն ընտրվել են նպատակային բազմաստիճան ընտրանքով, որի նպատակն է եղել համեմատել Ազգային ժողովի 2017թ. ապրիլի 2-ի ընտրությունների ընթացքում տարբեր վարք և արդյունքներ արձանագրած տեղամասերի արդյունքներն ու վարքագիծը արտահերթ ընտրությունների ժամանակ: Դիտարկվող տեղամասերի քանակը յուրաքանչյուր ընտրական տարածքում հիմնվել է տվյալ տարածքում հաշվառված ընտրողների թվի վրա: Իսկ տեղամասերի ընտրանքի հիմքում դրվել է 4 առանձին չափանիշ, որոնք առանձին-առանձին կիրառվել են յուրաքանչյուր ընտրական տարածքում տեղամասեր, որտեղ 2017թ.-ին.

- Հայաստանի հանրապետական կուսակցությունը ստացել է առավել շատ ձայներ,
- «Ծառուկյան» կուսակցությունների դաշինքը ստացել է առավել շատ ձայներ,
- «Ելք» դաշինքը ստացել է առավել շատ ձայներ
- գրանցվել է ընտրողների նվազագույն մասնակցություն:

Քվարկության օրն առանձին դիտարկման քարտերի միջոցով հավաքագրվել է տեղեկատվություն.

- Հանձնաժողովի նիստի
- Ժ. 14:00-ի, 20:00-ի դրությամբ տեղամասի շրջակայքի
- Ժ. 14:00-ի, 20:00-ի դրությամբ տեղամասային կենտրոնի
- Արդյունքների հաշվարկի և ամփոփման
- Տարածքային ընտրական հանձնաժողովների նիստերի վերաբերյալ:

Միաժամանակ շրջիկ դիտորդների կողմից դիտարկվել են առաջադրված կուսակցությունների շտաբերը և ընդհանուր իրավիճակը տեղամասերի շրջակայքում՝ վերահսկվող քվեարկության դեպքերը բացահայտելու նպատակով:

Սույն զեկույցում մշակվել և ամփոփվել է տեղեկատվություն՝

- 299 տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստի
- 300 տեղամասային կենտրոնում քվեարկության ընթացքի
- 325 տեղամասային կենտրոնում ձայների ամփոփման
- 36 տարածքային ընտրական հանձնաժողովի նիստի վերաբերյալ

Շրջիկ խմբերի կողմից լրացվել է 130 դիտարկման քարտ՝ 139 խախտման վերաբերյալ:

30 անձից բաղկացած իրավաբանական թիմի կողմից դիտորդներին տրամադրվել է իրավական խորհրդատվություն, իսկ խախտումների վերաբերյալ ահազանգերի դեպքում իրականացվել են համապատասխան գործողություններ:

Հաշվի առնելով, որ Դաշինքը տեղամասային կենտրոններում դիտարկումն իրականացնում է երկու դիտորդից կազմված խմբերով, իսկ տեղական դիտորդական կազմակերպություններից միաժամանակ միայն մեկական դիտորդ կարող է ներկա գտնվել տեղամասում, Դաշինքի դիտորդները հավատարմագրվել են անդամ և գործընկեր կազմակերպությունների կողմից: Միաժամանակ հաշվի առնելով, որ դիտորդների հավատարմագրման ժամկետը քվեարկության օրվանից 15 օր առաջ է և այդ ժամանակահատվածում հնարավոր չէ վստահաբար նախատեսել, թե որ դիտորդները, որ տեղամասերում են դիտարկում իրականացնելու, ըստ այդմ Դաշինքը որոշում է կայացրել մինևույն դիտորդներին հավատարմագրել մեկից ավելի կազմակերպությունների միջոցով: Սա հնարավորություն է տվել մինչև քվեարկության և արդյունքների ամփոփման ավարտը կատարել տեղափոխություններ և փոխարինել դիտորդություն իրականացնելուց հրաժարված կամ Դաշինքի կողմից հեռացված անձանց: Դիտորդների գրանցման ժամկետի էական կրճատումը կամ դիտորդական դաշինքների նկատմամբ այլ պահանջների սահմանումը հնարավորություն կտար խուսափել նման մեթոդի կիրառումից:

Քաղաքական համատեքստ

2018թ. մարտի վերջին ՀՀ Ազգային ժողովի «Ելք» խմբակցության ղեկավար Նիկոլ Փաշինյանը և Քաղաքացիական Պայմանագիր կուսակցության մի խումբ պատգամավորներ ու ներկայացուցիչներ Գյումրի քաղաքից սկսեցին քայլերթ, որի նպատակն էր կանխել Սերժ Սարգսյանի կողմից ՀՀ Վարչապետի պաշտոնը՝ փաստացի կառավարման երրորդ ժամկետի ստանձնումը:⁴

2018թ. ապրիլի 13-ին Ն.Փաշինյանը և համախոհները հասան Երևան, որտեղ տեղի ունեցավ առաջին հանրահավաքը և մեկնարկեց նստացույց Ֆրանսիայի հրապարակում, իսկ ապրիլի 15-ին մեկնարկեցին քաղաքացիական անհնազանդության ոչ բռնի զանգվածային ապակենտրոնացված ակցիաները Երևանում և ողջ Հայաստանում: Ապրիլի 16-ին Բաղրամյան պողոտայում Ոստիկանությունը ցուցարարների նկատմամբ լուսաձայնային նռնակներ կիրառեց, ինչի հետևանքով վիրավորվեցին երկու տասնյակից ավելի անձինք այդ թվում ոստիկաններ:⁵ Նույն օրը Ազգային ժողովի շենքը շրջապատած փշալարերն անցնելիս վիրավորվեց նաև Նիկոլ Փաշինյանը: Ապրիլի 17-ին Սերժ Սարգսյանը 77 կողմ և 17 դեմ ձայնով Ազգային ժողովի կողմից ընտրվեց վարչապետ, սակայն ԱԺ պատերից դուրս կարելի էր վստահաբար արձանագրել Սերժ Սարգսյանին վարչապետի պաշտոնից հեռացնելուն ուղղված զանգվածային շարժման շարունակական հզորացումը: Հաջորդող օրերին, ոստիկանությունը պարբերաբար բերման ենթարկեց կամ ձերբակալեց շարժման ակտիվ մասնակիցների, այդ թվում «Մերժիր Մերժին» նախաձեռնության անդամներին:⁶

Ապրիլի 22-ին տեղի ունեցավ Նիկոլ Փաշինյանի և Սերժ Սարգսյանի հրապարակային հանդիպումը, որը 3 րոպեից քիչ տևեց և արձանագրեց, որ զանգվածային շարժման ներկայացուցչի և նորընտիր վարչապետ Ս. Սարգսյանի

⁴ Թավշյա հեղափոխության ժամանակագրությունը (ինֆոգրաֆիկա) <https://hetq.am/hy/article/88683>

⁵ Լևոն Երանոսյանի վերաբերյալ քրեական գործի նախաքննությունն ավարտվել է. ՀԶԾ <https://www.azatutyun.am/a/29831661.html>

⁶ Լևոն Բարսեղյան. Մարդիկ ինքնաբուխ, տարաբևեռ իրենց քաղաքացիական անհնազանդությունը հայտնում են, <https://www.azatutyun.am/a/29187624.html>

միջև բանակցություններն հնարավոր չեն: Ն. Փաշինյանի հանդիպմանը հաջորդած ասուլիսից միտ մեկ ժամ անց ուժայինները ձերբակալեցին նրան, իսկ այնուհետև Ազգային ժողովի պատգամավորներ Արարատ Միրզոյանին և Սասուն Միքայելյանին:⁷ Անհնազանդության գործողությունները շարունակվեցին մեծ թափով՝ ըստ ելության կաթվածահար անելով երթևեկությունը Երևան քաղաքում և այլ բնակավայրերում: Ապրիլի 23-ին Նիկոլ Փաշինյանը և մյուսները ազատ արձակվեցին, իսկ Սերժ Սարգսյանը հրաժարական ներկայացրեց:

ՀՀ վարչապետի պաշտոնում «Ելք» խմբակցությունն առաջադրեց Նիկոլ Փաշինյանի թեկնածությունը: Մայիսի 1-ին Ազգային ժողովի արտահերթ նիստում Նիկոլ Փաշինյանը չընտրվեց ՀՀ վարչապետի պաշտոնում: Մայիսի 2-ին ցուցարարները կրկին կաթվածահար արեցին երթևեկությունը Երևան քաղաքում և հանրապետության բոլոր միջպետական ճանապարհներին և այլ բնակավայրերում: Մայիսի 3-ին Հանրապետական կուսակցությունը հայտարարեց, որ կպաշտպանի Նիկոլ Փաշինյանի թեկնածությունը և մայիսի 8-ին 59 կողմ և 42 դեմ ձայներով Նիկոլ Փաշինյանն ընտրվեց ՀՀ վարչապետ:

Հայաստանում ստեղծվեց մի իրավիճակ, երբ նախարարական պորտֆելների մեծամասնությունը պատկանում է Ազգային ժողովում 105 մանդատից 9-ը ունեցող քաղաքական ուժին, որը նաև հաջորդող երկու ամիսների ընթացքում արդեն փաստացի գործում էր որպես երկու, երբեմն մրցակցող քաղաքական ուժ՝ մի կողմից Քաղաքացիական պայմանագիր կուսակցություն և մյուս կողմից Լուսավոր Հայաստան և Հանրապետություն կուսակցություններ:

Հայաստանյան հանրության տրամադրություններն իրականում արտացոլող և քաղաքացիներին ներկայացնելու իրական մանդատ ունեցող Ազգային ժողով գումարելը անհրաժեշտություն էր, ավելին, առավելագույնը մեկ տարվա ընթացքում նախատեսվող արտահերթ ընտրությունները պիտի արձանագրեին «հանրության կողմից չվիճարկվող արդյունքներ», ինչի համար

⁷ Ձերբակալվել են Նիկոլ Փաշինյանը, Արարատ Միրզոյանը և Սասուն Միքայելյանը. Դատախազություն

<https://www.civilnet.am/news/2018/04/22/Ձերբակալվել-են-Նիկոլ-Փաշինյանը-Արարատ-Միրզոյանը-և-Սասուն-Միքայելյանը-Դատախազություն/334502>

անհրաժեշտ էր համարվել մասնավորապես՝ «հրաժարվել ռեյտինգային ընտրական համակարգից և անցնել լիարժեք համամասնական համակարգի»⁸։

Հունիսի 1-ին նշանակվեցին 8 նոր մարզպետներ, իսկ Սյունիքի և Արարատի մարզերը դեռևս մնում մարզպետ չունեին։ Հունիսի 6-ին ԱԺ ՀՀԿ խմբակցությունը լքեց թվով 6-րդ պատգամավորը՝ Սամվել Ալեքսանյանը⁹, ինչից հետո ՀՀԿ-ն կորցրեց խորհրդարանական մեծամասնությունը։ Ալեքսանյանին նախորդել էին Շիրակ Թորոսյանը, Արթուր Գևորգյանը, Արտակ Սարգսյանը, Արման Սահակյանը ու Ֆելիքս Յուլակյանը¹⁰։

Հունիսի 16-ին ԱԱԾ-ն բերման ենթարկեց ԱԺ պատգամավոր, ԵԿՄ նախագահ Մանվել Գրիգորյանին և, Էջմիածնում իր փաստացի իշխանությունը վիճարկող, տեղական գործարար, քրեական հեղինակություն վայելող քաղաքացի Արթուր Ասատրյանին՝ «Դոն Պիպո»-ին¹¹։ Մանվել Գրիգորյանի առանձնատան խուզարկության արդյունքում հայտնաբերված զինամթերքի, արտարժույթի, մեքենաների և զինծառայողների համար նախատեսված Պաշտպանության նախարարությանը պատկանող և հասարակական նախաձեռնությունների կողմից հավաքված ապրանքներ¹²։

Ֆեոդալական տեղական ինքնիշխանությունը անթաքույց վայելող, Լեռնային Ղարաբաղի հանրապետության հերոս, Հայաստանի ազգային հերոս Վազգեն Սարգսյանի մտերիմը համարվող և ՀՀԿ-ի «ռազմական» գործիչների թևը ներկայացնող պատգամավորը զրկվեց անձեռնմխելիությունից¹³։

Հունիսի 14-ին ձերբակալվեցին «Երևան» հիմնադրամի տնօրեն Աշոտ Ղազարյանը և Դավիթաշենի թաղապետի տեղակալ Խաչատուր Կարապետյանը՝ պաշտոնական լիազորությունների չարաշահման և պաշտոնական դիրքի

⁸ Հատված ՀՀ [Ժամանակավոր] Կառավարության ծրագրից, հունիսի 1 (http://www.gov.am/files/docs/2782.pdf)

⁹ ՀՀԿ-ն կորցրեց ԱԺ-ում մեծամասնությունը. Ալեքսանյանը լքել է խմբակցությունը
http://www.panarmenian.net/arm/news/256385/

¹⁰ Ֆելիքս Յուլակյանը դուրս է եկել ՀՀԿ խմբակցությունից
https://www.iragir.am/2018/06/04/177896/

¹¹ «Civilnet.am» լրատվական կայք, Ձերբակալվել են Մանվել Գրիգորյանը և «Դոն Պիպոն»
(https://www.civilnet.am/news/2018/06/16/Ձերբակալվել-են-Մանվել-Գրիգորյանը-և-«Դոն-Պիպոն»/339509)

¹² Հանրային հեռուստաալիքի YouTube ալիքում տեղադրված տեսանյութ, ԱԱԾ խուզարկության սենսացիոն մանրամասները (https://www.youtube.com/watch?v=aqwaHxq1yYM&t=2s)

¹³ «Ազատություն» Ռ/Կ, Մանվել Գրիգորյանը զրկվեց պատգամավորական անձեռնմխելիությունից
(https://www.azatutyun.am/a/29305041.html)

օգտագործմամբ խարդախության կատարման հողվածներով:¹⁴ Սա, կարծես, առաջին Էական գործողությունն էր Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի շուրջ գործող կոռուպցիոն սխեմաները վնասազերծելու ուղղությամբ: Տ. Մարգարյանը նախընտրեց չառճակատվել ծավալվող ստուգումների հաջորդ զարգացումներին և հավանական ձերբակալմանը քաղաքապետի պաշտոնում և հուլիսի 9-ին, հրապարակային որևէ հիմնավորում չներկայացնելով, հրաժարական տվեց: Իր հետ ասոցացվող գործերով քննությունը շարունակվեց նաև ընտրություններից հետո¹⁵:

Այսպիսով, ՀՀԿ-ն կորցրեց խորհրդարանական մեծամասնությունը, լեգիտիմության սյուներից մեկը՝ Ղարաբաղյան պատերազմի խորհրդանշային դերակատարների աջակցությունը և Երևանի քաղաքային իշխանությունը: Սակայն, երկրում դեռևս գոյություն ուներ երկիշխանություն՝ օրենսդրի առավել մեծ խմբակցությունը Հանրապետականն էր, իսկ գործադիրը հիմնականում Քաղաքացիական պայմանագիր կուսակցության ձեռքում էր:

Մինչդեռ ՀՀԿ իշխանության վարչական բուրգը շարունակում էր փլուզվել, վարչապետ Ն. Փաշինյանի թիմը ստիպված էր ոչ միայն նոր դիրքերից քաղաքական պայմանավորվածություններ ձեռք բերել քաղաքական և տնտեսական դերակատարների հետ, այլ նաև արագացված տեմպերով նախընտրելի կադրերով լրացնել առաջացած բացը:

Այս համատեքստում է, որ Քաղաքացիական Պայմանագիր կուսակցությունը առաջին անգամ բախվեց անդամագրվել ցանկացողների այնպիսի ներհոսքի, որ հայտերի մշակման կուսակցական հզորությունները պարզապես բավարար չէին: Արդյունքում, շուրջ 10 օրով կուսակցությունը պարզապես դադարեցրել էր հայտերի ընդունումը¹⁶: Չուզահեռ բացվում էին նոր տարածքային գրասենյակներ՝ Երևանում և Հայաստանի որոշ բնակավայրերում:

¹⁴ «Ազատություն» Ո/Կ, «Երևան» հիմնադրամի քրեական գործով կա երկու ձերբակալված (<https://www.azatutyun.am/a/29290271.html>)

¹⁵ «Factor.am» լրատվական կայք, Տարոն Մարգարյանի նկատմամբ կա հարուցված ևս մեկ քրեական գործ. Արթուր Վանեցյան (<https://factor.am/90985.html>)

¹⁶ «Tert.am» լրատվական կայք, Երևանում ԶԴ-ին անդամակցում են ավելի շատ երիտասարդները, մարզերում միջին տարիքի ՀՀ քաղաքացիները. Մեսրոպ Պապիկյան <https://www.tert.am/am/news/2018/05/24/papikyan/2693978>

«Ազգային համաձայնության» կառավարության գործունեությունը նույնպես առանց խնդիրների չէր իրականանում. Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Լուսավոր Հայաստան կուսակցության կողմից նշանակված միակ ներկայացուցիչը կառավարությունում, Մանե Թանդիլյանը հունիսի 12-ին իր հրաժարականը ներկայացրեց՝ կուտակային կենսաթոշակային համակարգի շուրջ իր և կառավարության սկզբունքային անհամաձայնության պատճառով¹⁷: Հունիսի 21-ին, սակայն, վարչապետի՝ հրաժարականը չընդունելու մասին հայտարարությունից հետո Մ. Թանդիլյանը շարունակեց մնալ կառավարության կազմում: Մյուս կողմից, Կառավարության կազմում և այլ պաշտոններում Ն. Փաշինյանի նշանակումներից շատերը հայտնվում էին «արժեզրկող» մեդիայի ուշադրության կենտրոնում:

Փաստացի տարվող քաղաքականությանը կամ պաշտոնյաների խոսքին վերաբերվող վրիպակներից անդին, արժեզրկող խոսքը որպես հիմք էր վերցնում նորանշանակ պաշտոնյաների երիտասարդ (ուրեմն անփորձ, ուրեմն սխալական) լինելը: Երբեմն, աղավաղելով զբաղեցվող պաշտոնի կարգավիճակը, թիրախում հայտնվող պաշտոնյային վերագրվում էր հավելյալ ազդեցություն, իսկ իր նշանակման փաստին հավելյալ ողբերգականություն: Բազմաթիվ դեպքերից առավել զավեշտալի են երկուսը: Այսպես, կառավարության աշխատակազմի գործերի կառավարիչ նշանակված Գևորգ Աճեմյանը, լինելով Կյանքի խոսք եկեղեցի կրոնական կազմակերպության հետևորդ, թիրախավորվել էր, որպես կառավարությունում տեղ գտած «այլադավան»¹⁸: Հուլիսի կեսերին մեդիայի թիրախում հայտնվեց առաջին փոխվարչապետ Արարատ Միրզոյանի մամուլի խոսնակ Կարպիս Փաշոյանը, ով ամսվա սկզբին արտահայտվել էր 2016 թ. ապրիլյան պատերազմի ընթացքում զոհված զինվորների անունները չչափարկելու մասին: Այդ արահայտությունը վերաճեց կերպով, որպես

¹⁷ «Ազատություն» Ո/Կ, Մանե Թանդիլյանը հրաժարական տվեց նախարարի պաշտոնից (<https://www.azatutyun.am/a/29287265.html>)

¹⁸ «Media.am» նախագծի էլեկտրոնային կայք, «Այլադավան» պաշտոնյան՝ ֆեյսբուքահայության խոշորացույցի տակ <https://media.am/gevorg-achemyan-facebook-srach>

«հերոսների ուրացում», իսկ օրեր անց Փաշոյանը աշխատանքից ազատման մասին դիմում գրեց¹⁹:

Եկեղեցու և բանակի զգայուն (սրբացված) թեմաներով ժամանակավոր կառավարությունը վարկաբեկելու և կոնկրետ անձանց աշխատանքը արժեզրկելու քարոզարշավին պակասում էր մշտապես շահարկվող սեռականության թեմայով մեդիա գրոհը և օգոստոսին այդ գրոհը կազմակերպելու առիթը եղավ: Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղում օգոստոսի 3-ին կազմակերպված հարձակում տեղի ունեցավ գյուղում հավաքված մի քանի ԼԳԲՏ ակտիվիստ և ԼԳԲՏ համայնքի հետ ասոցացվող անձանց վրա: Հարձակման առավել հավանական դրդապատճառն էր տուժածներից մեկի, շուռնուխցի երիտասարդի ընտանիքի՝ գյուղում «ընդդիմադիր» կեցվածքը և նույն տարվա գարնանը Գորիսում հավաք կազմակերպելու ընթացքում տեղի ունեցած ընդհարումը երիտասարդի և տեղացի «հանրապետականների» միջև: Դեպքի առթիվ քրեական գործ հարուցվեց, սակայն բազմաթիվ հարթակներից, ներառյալ ՀԱԵ եպիսկոպոսներ, ԱԺ պատգամավորներ և ՉԼՄ-ներ բռնությունը արդարացնող ատելության խոսքի միջոցով մի կողմից ներկայացնում էին դեպքը որպես տեղացիների դիմադրությունը եվրոպամետ/ԼԳԲՏ քարոզին, իսկ մյուս կողմից կառավարությանը մեղադրում էին այդ քարոզը եթե ոչ կազմակերպելու, ապա հովանավորելու մեջ: Ուշագրավ է, որ դեպքը օգտագործվեց նաև հակառակ ճամբարի քարոզիչների կողմից՝ Facebook սոց. ցանցում ստեղծվեց «ԼԳԲՏ Հայաստան» խումբը, որը իբրև աջակցում էր Ռոբերտ Զոհարյանին ԼԳԲՏ համայնքի անունից: Կառավարության, ընդհուպ վարչապետի, արձագանքները ուղղված էին ընդհանուր բռնությունը դատապարտելուն, ինչը որոշ չափով հանդարտեցնում էր կրքերը, սակայն չէր բավարարում որևէ կողմին: Համանման իրավիճակ ծավալվեց նոյեմբերին Հայաստանում պլանավորվող «Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ԼԳԲՏ քրիստոնյաների ֆորումի» շուրջ: Սպառնալիքների և ատելության խոսքի անպատժելի տարածման մթնոլորտում, ինչպես նաև ոստիկանության կողմից՝ անվտանգությունը ապահովելու անհնարինության մասին հայտարարությունների պայմաններում Հայաստանում

¹⁹ «Civilnet.am» լրատվական կայք, Առաջին փոխվարչապետի մամուլի խոսնակը աշխատանքից ազատման դիմում կգրի (<https://www.civilnet.am/news/2018/07/17/Առաջին-փոխվարչապետի-մամուլի-խոսնակը-աշխատանքից-ազատման-դիմում-է-ներկայացրել/341655>)

միջոցառումը ընդունող «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ-ն չեղարկեց ֆորումի անցկացումը:²⁰

Դեռևս «Թավշյա հեղափոխությունից» առաջ Ամուլսարի հանքավայրի շուրջ սկսված բողոքի գործողությունները, որոնք չէին ընդհատվել նաև զանգվածային շարժման օրերին, շարունակվում էին նաև Ն. Փաշինյանի վարչապետի պաշտոնում ընտրվելուց հետո, իսկ մայիսի 18-ին դեպի հանքավայր տանող ճանապարհները փակվեցին Գնդեվազ և Կեչուտ գյուղերի բնակիչների և բնապահպան ակտիվիստների կողմից՝ աշխատանքները դադարեցնելու և խնդրի բովանդակային քննարկման նպատակով²¹: Հուլիսի 6-ին Ջերմուկում տեղի ունեցավ վարչապետի, ազդակիր համայնքների բնակիչների և Լիդիան Արմենիա ընկերության ներկայացուցիչների հանդիպում, որի ընթացքում բանակցող կողմերին բավարարող լուծում չընդունվեց²²: Փոխարենը պարզ դարձավ, որ Ամուլսարի խնդիրը Նոր կառավարությանը ժառանգաբար փոխանցված գործյան հանգույցներից մեկն է: Խնդրի հանգուցալուծումը որոշակիորեն հետաձգվեց ընկերության կողմից ընդերքի ապօրինի օգտագործման վերաբերյալ քրեական գործ հարուցմամբ²³: Պարզ էր սակայն, որ անկախ քննության արդյունքներից, հանքավայրի գործարկման դեպքում կառավարությունը գործ է ունենալու «հեղափոխություն արած» զանգվածի դիմադրության հետ, աշխատանքները արգելելու դեպքում՝ միջազգային արբիտրաժի, կարճաժամկետ հեռանկարում ֆինանսական կորուստների և ներդրումային մթնոլորտի վատթարացման վտանգի հետ:

Մեկ այլ ոչ միանշանակ խնդիր էր Սասնա ծռեր խմբի բանտարկված անդամների գործը. մի կողմից դատական իշխանության անկախության իմպերատիվը, մյուս կողմից խմբի անդամներին քաղբանտարկյալ համարող

²⁰ «Epress.am» լրատվական կայք, Հայաստանում խախտվեց միավորումների և հավաքների ազատության իրավունքը (<https://epress.am/2018/11/06/Հայաստանում-խախտվեց-միավորումների-և-.html>)

²¹ «Aravot.am» լրատվական կայք, «Աստված էլ վերևից իջնի՝ հանքը չենք բացելու». Ամուլսարի ոսկու հանքի շահագործման դեմ ցույցը շարունակվում է <https://www.aravot.am/2018/05/22/958796/>

²² «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի Էլեկտրոնային կայք, Նիկոլ Փաշինյանը Ջերմուկից հեռացավ առանց համաձայնություն ձեռք բերելու. Ամուլսարի հանքի դեմ ակցիաները կշարունակվեն (<https://www.ecolur.org/hy/news/cities/-/10269/>)

²³ «Aravot.am» լրատվական կայք, «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից Ամուլսարի հանքավայրից օգտակար հանածոների առերևույթ ապօրինի արդյունահանման փաստի առթիվ քրեական գործ է հարուցվել (<https://www.aravot.am/2018/08/30/977719/>)

կողմնակիցների և քաղաքացիական հասարակության մի մասի պահանջը ուղիղ վարչապետին՝ «ազատել քաղբանտարկյալներին, ինչպես խոստացվել է»։ Մայիսի 24-ին Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպումից հետո Գարեգին Չուգասյանը դադարեցրեց Սասնա ծռերի բոլոր անդամներին ազատելու պահանջով շուրջ մեկ ամիս շարունակվող հացադուլը։ Լարվածության չեզոքացման ընթացքում կարևորագույն դեր խաղաց օգոստոսի 17-ին խմբի անդամներից երկուսի՝ Վարուժան Ավետիսյանի և Արայիկ Խանդոյանի խափանման միջոցը փոխելը (ստորագրություն չհեռանալու մասին) և վերջիններիս Հանրապետության հրապարակում՝ Նիկոլ Փաշինյանի հրավիրված հանրահավաքին մասնակցությունը։ Թեև Սասնա ծռեր գինված խմբի ապստամբներ, քաղբանտարկյալներ, թե՛ հանցագործներ լինելու կարգավիճակի մասին խոսակցությունը դեռևս շարունակվում է, սակայն, հաշվի առնելով հետագայում ԱԺ արտահերթ ընտրություններին «Սասնա ծռեր» համահայկական կուսակցության մասնակցությունը և բռնություն չգործադրելու մասին հայտարարությունները, կարելի է ասել, որ հարցն այլևս կարևոր օրակարգային նշանակություն չունի հայաստանյան քաղաքական դաշտում։

Հուլիսի 3-ին ՀԶԾ-ի կողմից հարուցվեց ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի 1-ին մասի հատկանիշներով և որպես մեղադրյալ ներգրավվեց պաշտպանության նախկին նախարար, գեներալ-գնդապետ Միքայել Հարությունյանը²⁴։ Այնուհետև, հուլիսի 26-ին ՀԶԾ-ում հարցաքննվեցին ՀԱՊԿ գլխավոր քարտուղար (2008 թ. մարտի 1 դրությամբ Երևանի կայազորի պետ) Յուրի Խաչատուրովը և ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Բոչարյանը։ Հուլիսի 27-ին Բոչարյանը դատարանի որոշմամբ երկու ամսով կալանավորվեց²⁵։ Օգոստոսի 13-ին պաշտպանների կողմից բողոքարկված որոշումը չեղարկվեց Վերաքննիչ քրեական դատարանի կողմից, ինչը նույնպես բողոքարկվեց Գլխավոր

²⁴«Armtimes.com» լրատվական կայք, Բացահայտում Մարտի 1-ի գործով. պաշտպանության նախկին նախարարը ներգրավվել է որպես մեղադրյալ (<https://armtimes.com/hy/article/140779>)

²⁵«Ազատություն» Ռ/Կ էլեկտրոնային կայք, Դատարանը որոշեց երկու ամսով կալանավորել Ռոբերտ Բոչարյանին (<https://www.azatutyun.am/a/29394649.html>)

դատախազության կողմից և Վճռաբեկ դատարանի որոշմամբ գործը ուղարկվեց Վերաքննիչ դատարան²⁶:

Ռ. Զոչարյանի շուրջ ծավալվող քրեական գործին քաղաքական գնահատականներ տալը մինչև Երևանի ավագանու արտահերթ ընտրությունները ընկած ժամանակահատվածում դարձավ որոշ ուժերի հռետորաբանության հիմնական ուղղություններից մեկը: ՀՀԴ²⁷ և Հանրապետական կուսակցությունները դատապարտում էին 2-րդ նախագահ Զոչարյանին կալանավորելու որոշումը, իսկ ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովի ձևակերպմամբ «նաև իրավական տեռորի և քաղաքական տեռորի հետ կապված, խոսքի ազատությունը սպանելու քայլերի հետ կապված, որը արվում է Հայաստանի Հանրապետությունում»²⁸: Իր հերթին, Ն. Փաշինյանը Հանրապետության հրապարակից բարձրաձայնեց իր գլխավորած քաղաքական ուժի քարոզարշավի հիմնական բանաձևերից մեկը. «... ձեզ հայտնի ուժերը՝ հանրապետականները, հակահեղափոխականները լուրեր են տարածում, թե պոտենցիալ ներդրողները չեն գալիս, որ սպասում են, տեսնեն՝ ինչ է լինելու... ...եկեք միասնաբար նրանց ասենք, որ ոչ մի բան էլ չի լինելու, այն, ինչ լինելու էր, արդեն եղել է, և ժողովրդական, ոչ բռնի, թավշյա հեղափոխությունը և նրա հաղթանակն այլևս անշրջելի են... ...Սեպտեմբերին դուք դա հնարավորություն եք ունենալու ապացուցել Երևանի ավագանու ընտրություններում՝ ընտրելով Երևանի նոր քաղաքապետ՝ ի դեմս Հայկ Մարությանի:»²⁹ Նույն հարթակից Ն. Փաշինյանը արտահայտվեց նաև ԱԺ արտահերթ ընտրությունների անցկացման հնարավոր խոչընդոտների վերաբերյալ և հայտարարեց սահմանադրական փոփոխություններ անցկացնելու հավանականության մասին. «Ըստ Էության, սահմանադրական հնարավորությունը հետևյալն է այս պահին, որ ես, որպես վարչապետ, պետք է հրաժարական տամ, և խորհրդարանը պետք է 2 անգամ անընդմեջ չընտրի նոր վարչապետ... ...Բայց հիմա նրանք սկսել են մտածել

²⁶ «Civilnet.am» լրատվական կայք, Դատարանը որոշեց կալանավորել Ռոբերտ Զոչարյանին (<https://www.civilnet.am/news/2018/12/07/Դատարանը-որոշեց-կալանավորել-Ռոբերտ-Զոչարյանին/349958>)

²⁷ «Երկիր մեդիա» Հ/Ա Էլեկտրոնային կայք, Նոր Հայաստանում արդարադատությունը որևէ պարագայում չպետք է լինի կողմնակալ. ՀՀԴ (<http://yerkirmedia.am/1political/hyd-robert-qocharyan-xapanman-mijoc/>)

²⁸ «Ազատություն» Ռ/Կ Էլեկտրոնային կայք, ՀՀԿ-ում չեն բացառում Ռոբերտ Զոչարյանի հետ համագործակցությունը. Շարմազանով (<https://www.azatutyun.am/a/29439126.html>)

²⁹ «Ազատություն» Ռ/Կ, ուղիղ միացում Հանրապետության հրապարակից (https://youtu.be/v_I-Nrrr6ow?t=26543)

հետևյալը. ասում են՝ դե թողնենք հրաժարական տա, հետո արագ, թաքուն ուրիշ վարչապետ կընտրենք, ասենք, օրինակ՝ *չասեմ ում*»: Նման վտանգից խուսափելու համար Ն.Փաշինյանը առաջարկեց սահմանադրական փոփոխություններ նախաձեռնել, որոնք թույլ կտային ԱԺ-ին արձակվել առանց վարչապետի հրաժարականի³⁰: Հետագայում այս տարբերակը որևէ կերպ չգարգացվեց:

Այսպես, Ռ. Քոչարյանը, ավելի ճիշտ «Ռոբերտ Քոչարյան» քաղաքական կերպարը և «հակահեղափոխության վտանգը», միաժամանակ կշիռ էին ավելացնում թե «հեղափոխական», թե «հակահեղափոխական» ուժերին՝ «Իմ քայլի» շուրջ կոնսոլիդացնելով գրեթե ամբողջ հակաքոչարյանական (ներառյալ այլ քաղաքական ուժերին համակրող «ակտիվիստական» կամ «ավանդական ընդդիմության») զանգվածը, միաժամանակ ավելի մեծ կարևորություն հաղորդելով «քոչարյանական» համարվող ուժերի խոսքին:

Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների արդյունքում ավագանին ձևավորվեց 3 քաղաքական ուժերից. «Իմ քայլը» դաշինք՝ մասնակիցների 81%, Բարգավաճ Հայաստան կուսակցություն՝ 7%, «Լույս» դաշինք՝ 5%, որոնք ստացան համապատասխանաբար 57, 5 և 3 մանդատ: Նախընտրական քարոզարշավի տրամաբանության որոշակի նկարագրությունը բերված է տվյալ ընտրությունների վերաբերյալ «Անկախ դիտորդի» զեկույցում³¹, սակայն նշենք, որ հիմնականում այն նույնպես կառուցվում էր հեղափոխության շարունակության, հեղափոխության աջակցության, ավելի հեղափոխական լինելու կամ հեղափոխության հետ [Երևանի կառավարման] ուղղակի առնչություն չունենալու մասին արտահայտությունների վրա, երբեմն բավականին ագրեսիվ տոնայնությամբ, երբեմն էլ հիմք հանդիսանալով ուժայինների գործողությունների համար³²: Նշենք, որ ՀՀԿ-ն նախընտրել էր չմասնակցել Երևանի ավագանու արտահերթ ընտրություններին:

³⁰ «Ազատություն» Ռ/Կ, Նիկոլ Փաշինյանը սահմանադրական փոփոխություններ է նախաձեռնում (<https://www.azatutyun.am/a/29440851.html>)

³¹ «Անկախ Դիտորդ» Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների դիտարկման զեկույց

³² «Civilnet.am» լրատվական կայքի YouTube ալիքում տեղադրված տեսանյութի հատված (<https://youtu.be/j6W7x0W12DQ?t=88>)

Սեպտեմբերի 24-ին վարչապետ Փաշինյանը Նյու Յորքում հայ համայնքի հետ հանդիպման ընթացքում հայտարարեց, որ սկսելու է հայաստանյան քաղաքական ուժերի հետ բանակցային գործընթաց՝ ԱԺ արտահերթ ընտրությունները այս տարի անցկացնելու համար: Հոկտեմբերի 1-ին Փաշինյանը հանդիպեց Հանրապետական խմբակցության ղեկավար Վահրամ Բաղդասարյանի հետ³³: Բանակցային ընթացքը կարծես սկսել էր և կարելի էր սպասել քաղաքական պայմանավորվածությունների մշակույթի զարգացմանը, սակայն հոկտեմբերի 2-ին ԱԺ Հանրապետական խմբակցությունը փորձեց նախահարձակ լինել և ապահովագրել Ազգային ժողովը արձակվելուց: Ծառուկյան կուսակցությունների դաշինքի պատգամավոր Գևորգ Պետրոսյանը նախաձեռնել էր «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխությունների նախագիծ, որն առաջին ընթերցման ժամանակ պահանջ էր դնում օրենքի քննարկման ընթացքում պարտադիր դարձնել նախաձեռնողի կողմից հիմնական կամ հարակից զեկուլցմամբ հանդես գալը: Սակայն երկրորդ ընթերցման համար հանրապետական պատգամավորների կողմից նախագծում ծավալուն փոփոխություններ առաջարկվեցին, որոնք թույլ էին տալիս ԱԺ-ի չկայացած նիստը համարել ընդհատված: Նախագիծը մանրամասն նկարագրում էր նիստի ընդհատման հնարավոր սցենարներ և ըստ ընդունված մեկնաբանության, նախատեսված էր վարչապետի հրաժարականի դեպքում, ԱԺ պատգամավորների մեծամասնության կողմից այլ թեկնածու առաջադրելու դեպքում՝ ցուցարարների հնարավոր շրջափակման պատճառով նիստի անցկացման անհնարինության դեպքում այն մշտապես հետաձգելու հնարավորություն ստեղծելու համար: Այլ կերպ ասած, նախագիծն ուղղված էր ԱԺ-ն հնարավորինս շուտ արձակելը խոչընդոտելուն և ժամանակի հետ հնարավոր հանրային ճնշումը չեզոքացնելուն:

Հանրային ճնշումը, սակայն, իրեն սպասել չստիպեց³⁴ և նույն օրը՝ 19:30 հրավիրված արտահերթ նիստի ընթացքում 67 ձայն կողմ ստանալով օրենք ընդունվեց արդեն տասնյակ հազարավոր ցուցարարների կողմից շրջափակված

³³ «A1plus.am» լրատվական կայք , «Մարիոթ»-ի սրճարանում հանդիպեցին Նիկոլ Փաշինյանն ու Վահրամ Բաղդասարյանը (տեսանյութ) (<https://www.a1plus.am/1643418.html>)

³⁴ «Civilnet.am» լրատվական կայք, ԱԺ-ում նախատեսվում է արտահերթ նիստ (<https://www.civilnet.am/news/2018/10/02/ԱԺ-ում-նախատեսվում-է-արտահերթ-նիստ/345988>)

ԱԺ-ի շենքում: ԱԺ-ի արձակման պահանջով ցույցեր տեղի ունեցան նաև Վանաձոր և Գյումրի քաղաքներում: Ն. Փաշինյանը հրամանագիր ստորագրեց օրենքին կողմ քվեարկած երեք խմբակցությունների կուսակցական նախարարներին և մարզպետներին պաշտոնանկ անելու մասին: Հոկտեմբերի 16-ին Ն. Փաշինյանը հրաժարական տվեց, ինչով սկսվեց Ազգային ժողովը իրավունքի ուժով ազատ արձակելու սահմանադրական գործընթացը: Նախագահ Արմեն Սարգսյանը չստորագրեց ԱԺ-ի կողմից ընդունված օրենքը՝ ուղարկելով այն սահմանադրական դատարան «հանրության մի ստվար զանգվածի անհամաձայնության» պատճառաբանությամբ, ինչը ՀՀ նորագույն պատմության մեջ, աննախադեպ իրադարձություն էր:

Հոկտեմբերի 11-12-ին Երևանում անցկացվեց Ֆրանկոֆոնիայի տասնյոթերորդ գագաթնաժողովը՝ Ն. Փաշինյանի կառավարության առաջին խոշոր միջազգային միջոցառումը:

Հոկտեմբերում տեղի ունեցավ ևս երկու կարևոր քաղաքական իրադարձություն: Հոկտեմբերի 8-ին Ն. Փաշինյանը իր կողմից «հակահեղափոխական օրենքին» կողմ քվեարկած «Ծառուկյան» կուսակցությունների դաշինքի ղեկավար Գագիկ Ծառուկյանի հետ հուշագիր ստորագրեց՝ 2018թ. դեկտեմբերին ՀՀ-ում արտահերթ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու վերաբերյալ³⁵: Այսքանով, կարծես թե, Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների անցկացումը և Նիկոլ Փաշինյանի կառավարության ծրագրային խոստումներից մեկի իրագործումը ապահովված էր, սակայն հոկտեմբերի 29-ին Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը երկրորդ ընթերցմամբ չընդունվեց: Նոյեմբերի 1-ին ԱԺ-ն երկրորդ անգամ չկարողացավ ընտրել վարչապետ, ինչի արդյունքում Ն.Փաշինյանը, կատարելով մի խոստումը, ստիպված հրաժարվեց մյուսից՝ նոր ընտրական օրենսգրքով ընտրություններ կազմակերպելուց:

Ընտրական օրենսգրքով պայմանավորված ընտրություններին մասնակցելու խոչընդոտների մասին արտահայտվեցին ժառանգություն,

³⁵ «Civilnet.am» լրատվական կայք, Փաշինյան-Ծառուկյան հուշագիր, արտահերթ ընտրությունները՝ դեկտեմբերին (<https://www.civilnet.am/news/2018/10/08/Փաշինյանն-ու-Ծառուկյանը-հուշագիր-են-ստորագրել-դեկտեմբերին-արտահերթ-ընտրություններ-անցկացնելու-վերաբերյալ/346325>)

Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան և Այլանս կուսակցությունները: «Ժառանգություն» կուսակցությունը հայտարարեց, որ ժամանակավոր կառավարությունն ու իր ղեկավարը չի կատարել իր առանցքային հանձնառություններից մեկը՝ նոր ընտրական օրենսգրքի հաստատման միջոցով իրապես ժողովրդավար ԱԺ ձևավորելու դրույթը:³⁶ Արդյունքում «Ժառանգություն» և Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունները հրաժարվեցին «հին տրամաբանությամբ» ընտրություններին մասնակցելու մտքից³⁷, իսկ Այլանսը որոշեց մասնակցել ԲՀԿ ցուցակով³⁸:

Նորաստեղծ «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը հայտարարություն տարածեց ԱԺ արտահերթ ընտրությունների մասնակցելու մասին, սակայն միաժամանակ ոչ լեգիտիմ համարեց ՀՀ սահմանադրությունը և անընդունելի անվանեց գործող Ընտրական օրենսգիրքը³⁹:

Նոյեմբերի 26-ին սկսվող քարոզարշավի պայմաններում քարոզչական միջոցառումների վաղաժամ մեկնարկը համատարած էր: Մինչդեռ գրեթե բոլոր կուսակցությունները նախօրոք էին տեղադրում տպագիր քարոզչական նյութերը, բացում կուսակցական շտաբերը և որոշ դեպքերում հանդիպումներ անցկացնում ընտրողների հետ: Առավելապես աչքի էր ընկնում Նիկոլ Փաշինյանի գլխավորած «Իմ քայլը» դաշինքը, ինչի մասին ավելի ուշ՝ երկարաժամկետ դիտորդների հետ հարցազրույցներում վկայում են նաև այլ քաղաքական ուժերի թեկնածուները: Մասնավորապես մատնանշվում էր Նիկոլ Փաշինյանի նոյեմբերի 24-ին հրավիրված «մեծ երթը»⁴⁰

Դեկտեմբերի 5-ին տեղի ունեցավ հայաստանյան քաղաքական մշակույթում աննախադեպ երևույթ, որի անհրաժեշտության մասին խոսվել էր

³⁶ «Ժառանգություն» կուսակցության հայտարարություն, <http://www.heritage.am/hy/news/624-131118>

³⁷ «Aravot.am» լրատվական կայք, Սոցիալ Դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը գաղափարական սկզբունքներից ելնելով՝ չի մասնակցի ԱԺ ընտրություններին (<https://www.aravot.am/2018/11/14/993463/>)

³⁸ «168.am» լրատվական կայք, «Այլանս» կուսակցությունը միավորվում է ԲՀԿ-ի հետ (<https://168.am/2018/11/13/1040860.html>)

³⁹ «armtimes.com» լրատվական կայք, «Քաղաքացու որոշում» կուսակցությունը մասնակցելու է արտահերթ խորհրդարանական ընտրություններին (<https://armtimes.com/hy/article/148411>)

⁴⁰ Նիկոլ Փաշինյանի Facebook սոցիալական ցանցի էջից, (<https://www.facebook.com/nikol.pashinyan/videos/մեծ-երթ-երևանում-նոյեմբերի-24-ին-ժամը-10-ին-սկսում-ենք-նոր-նորից-նազմական-ինստ/2543803665847065/>)

նաև Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների ընթացքում ընտրություններին մասնակցող բոլոր ուժերի ցուցակները գլխավորող անձանց հեռուստատեսային բանավեճը⁴¹:

Դեկտեմբերի 7-ին Վերաքննիչ քրեական դատարանը անփոփոխ թողեց ՀՀ Երկրորդ նախագահ Ռոբերտ Զոհարյանին կալանավորելու առաջին ատյանի դատարանի որոշումը, ինչին հայտարարությամբ արձագանքեց Հանրապետական կուսակցությունը՝ 5 օր տևած նիստի արդյունքում ընտրություններից 2 օր առաջ ընդունված նման որոշումը բնորոշելով որպես քաղաքական պատվեր⁴²: Նշենք, որ Մարտի 1-ի գործի հետ կապված հրապարակվել էին պետական բարձրագույն պաշտոնյաների գաղտնալսման երկու ձայնագրություններ: Առաջինը՝ ԱԱԾ պետ Արթուր Վանեցյանի և ՀԶԾ պետ Սասուն Խաչատրյանի հեռախոսագրույցի ձայնագրությունը համացանցում է հայտնվել⁴³ սեպտեմբերի 5-ին և տարածվել համացանցի հայկական հատվածում սեպտեմբերի 11-ին, ինչի արդյունք դարձավ Երևանի Դավթաշեն համայնքում «Իմ քայլը» դաշինքի քարոզչական հավաքի ընթացքում Նիկոլ Փաշինյանի կողմից «ռեյդեր անելու» բանավոր հրամանի արձակումը⁴⁴, հանրային աջակցության ներքո: Երկրորդ ձայնագրությունը՝ Ա.Վանեցյանի, Ս.Խաչատրյանի և Ն.Փաշինյանի հեռախոսագրույցների ձայնագրությունն էր, որը համացանցում հայտնվել⁴⁵ է դեկտեմբերի 4-ին և տարածվել դեկտեմբերի 5-ին: Այս դեպքում ինչի արձագանքը թե՛ հանրության, թե՛ կառավարության կողմից անհամեմատ ավելի մեղմ էին նախ որդից: Ն. Փաշինյանը սկզբում տարածեց գաղտնալսման ձայնագրությունը իր Facebook էջում, իսկ այնուհետև անդրադարձավ ուղիղ հեռարձակմամբ՝ կոչ անելով քվեարկել «Իմ քայլը» դաշինքի օգտին և տալ իրեն «ուժեղ մանդատ»⁴⁶:

⁴¹ «Հանրային հեռուստատեսության» YouTube սոցիալական ցանցի ալիք, Նախընտրական մեծ բանավեճ (https://www.youtube.com/watch?time_continue=1&v=gPRONKHsF6k)

⁴² «Civilnet.am» լրատվական կայք, ՀՀԿ-ն Զոհարյանի կալանավորումը համարում է «պատվեր» (<https://www.civilnet.am/news/2018/12/08/ՀՀԿ-ն-Զոհարյանի-կալանավորումը-համարում-է-«պատվեր»/350035>)

⁴³ YouTube սոցիալական ցանցի անհայտ հաշիվ, որից առաջինն է հրապարակվել ձայնագրությունը, How armenian justice really works (<https://www.youtube.com/watch?v=AZOc3HxZLLA>)

⁴⁴ «Civilnet.am» լրատվական կայքի YouTube ալիքում տեղադրված տեսանյութի հատված (<https://youtu.be/j6W7x0WI2DQ?t=88>)

⁴⁵ YouTube սոցիալական ցանցի անհայտ հաշիվ, որից առաջինն է հրապարակվել ձայնագրությունը, How Armenian justice works part. 2 (<https://www.youtube.com/watch?v=WSEb9D7QyXE>)

⁴⁶ «Factor.am» լրատվական կայք, Փաշինյանը՝ Վանեցյանի և իր խոսակցության գաղտնալսման մասին (<https://www.youtube.com/watch?v=bT2hafMRGml>)

Օրենսդրական դաշտ

Նոր Կառավարության կողմից ներկայացված ծրագրի առաջնային խնդիր հռչակվեց 1 տարվա ընթացքում Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների անցկացումը՝ միաժամանակ ուրվագծելով բարեփոխման մի քանի ուղղություններ:

- Հրաժարվել ռեյտինգային ընտրական համակարգից և անցնել լիարժեք համամասնական համակարգի,
- Ձևավորել նոր՝ իրական պատկերն արտացոլող ընտրական ցուցակներ, որոնք հետագայում կթարմացվեն ինքնաշխատ եղանակով,
- Բացառել կրկնաքվեարկության հնարավորությունը՝ քվեարկած ընտրողների մատնահետքերի համաժամանակյա և ինտեգրված ստուգման ցանց ստեղծելու կամ համարժեք այլ եղանակով,
- Օրենքով երաշխավորել ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերին անվճար և վճարովի հիմունքներով տրամադրվող եթերաժամերի տեղադրումը ամենադիտվող ժամերին,
- Բացառել քաղաքացիների կամարտահայտման վրա ապօրինի ազդեցությունների գործադրումը, ճնշումներն ու ընտրակաշառքը: Այդ նպատակով իրավապահ համակարգում ստեղծել ընտրողների կողմնորոշման վրա ստիպողաբար կամ սպառնալիքներով գործադրվող ազդեցության, ընտրակաշառքների և օրենքով արգելված նյութական նվիրատվությունների, ծառայությունների մատուցման, ապօրինի խոստումների և ընտրարշավի ապօրինի ֆինանսավորման դեմ պայքարի ստորաբաժանում,
- Իրականացնել Ընտրական օրենսգրքի՝ ընտրողների ազատ կամարտահայտումը երաշխավորող այլ փոփոխություններ:

Ընտրական օրենսդրության փոփոխության համար 2018թ. հունիսի 19-ին ՀՀ Վարչապետի որոշմամբ ստեղծվեց ՀՀ Վարչապետին առընթեր ընտրական օրենսդրության բարեփոխումների հանձնաժողովը, որը շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում 2018թ սեպտեմբերին հրապարակեց

Ընտրական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգը, որը Կառավարության կողմից հաստատվեց սեպտեմբերի 28-ին:⁴⁷

Հաշվի առնելով, որ «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի անդամ կազմակերպությունների ներկայացուցիչներ Դանիել Իոաննիսյանը և Վարդինե Գրիգորյանը ներգրավված են եղել Հանձնաժողովում, Դաշինքը գերծ կմնա հանձնաժողովի գործունեության գնահատումից, այլ միայն կանդրադառնա փոփոխությունների և առաջարկությունների բովանդակությանը:

Հայեցակարգն անդրադառնում էր Կառավարության ծրագրով նախատեսված առաջնահերթություններին և ստացված առաջարկություններին, այնուհետև նախատեսում փոփոխություններ հետևյալ ուղղություններով՝

- Խորհրդարանական տարբեր քաղաքական ուժերի ներկայացվածության խթանում՝ միայն համապետական ցուցակներով համամասնական ընտրակարգի անցման, ընտրական շեմի և ընտրագրավի նվազեցման, մանդատների բաշխմանը առնվազն 4 ուժի մասնակցության, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընտրության մեխանիզմի վերանայման, կոալիցիաների կազմման սահմանափակումների և ժամկետների վերանայման, կուսակցության կողմից ներկայացվող անկուսակացական թեկնածուների թվի ավելացման միջոցով,
- Խորհրդարանում կանանց ներկայացվածության խթանում՝ ցուցակների և խմբակցություններում մեկ սեռի ներկայացվածության նվազագույն քվոտայի բարձրացում առնվազն 30%-ի,
- Ընտրական ցուցակների ճշգրտում և ընտրացուցակների վարման բարելավում՝ վավերականության ժամկետը լրացած փաստաթղթով քվեարկելը արգելելու, անգործունակ ճանաչվելու պատճառով ընտրական իրավունքից զրկված անձանց ընտրական ցուցակներից հեռացնելու (հետագայում սահմանադրական փոփոխությունների համատեքստում այս իրավունքի վերականգնման պայմանով), տեխնիկական սարքավորումների միջոցով

⁴⁷ Հայաստանի Հանրապետության վարչապետին առընթեր ընտրական օրենսդրության բարեփոխումների հանձնաժողով, Ընտրական օրենսդրության օրենսդրության բարեփոխումների փորձագետների հայեցակարգ
http://www.gov.am/u_files/file/A-Mirzoyan/EL-Code%20concept%20adopted%20AM.pdf

գրանցած մասնակիցների ցուցակի հրապարակման և այլ անձի փոխարեն քվեարկության վերաբերյալ անփութությամբ սուտ հայտարարություն տալու ապաքրեականացման միջոցով,

- Ընտրողների ազատ և իրազեկ ընտրության հնարավորության ապահովում՝ հեռուստաբանավեճերի նախատեսման, անվճար եթերաժամանակի ավելացման, առցանց լրատվամիջոցների կարգավորման, քարոզչական նյութերի հասանելիության միջոցով և քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելու դեպքերում քրեական պատասխանատվության խստացմամբ,

- Ընտրակաշառքի բացառում՝ ընտրությունների նշանակման պահից քաղաքական ուժերի հետ ասոցացվող բարեգործության արգելման, ընտրակաշառքի համար սահմանված պատժաչափերի խստացման, հայտարարագրվող նախընտրական քարոզչության ծախսերի ընդլայնման, հիմնադրամների կարգավորման ու վարչական ռեսուրսների օգտագործման հստակ սահմանափակման միջոցով,

- Քվեարկության գործընթացի մատչելիության բարելավում՝ մատչելի տեղամասերի գույքագրման, հրապարակման և տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց համար այլ տեղամասում քվեարկելու հնարավորության սահմանման և քվեաթերթիկների ընթերցելիության բարձրացման միջոցով,

- Չինժառայողների քվեարկության նկատմամբ վերահսկողության բացառում՝ զորամասերում քարոզչական նյութերի հավասարաչափ հասանելիության ապահովման, քվեարկության սենյակում վերադասի գտնվելը բացառելու և զինժառայողների քվեարկության տեղամասերի հրապարակման միջոցով,

- Վերահսկվող քվեարկության բացառում՝ օգնողների ցանկի սահմանափակման և ընտրողի ազատ կամարտահայտման ապահովման պայմանների հստակեցման, բոլոր ընտրությունների դեպքում քվեախցիկներում լրացուցիչ քվեաթերթիկների առկայության և քվեաթերթիկների վավերականության պայմանների վերանայման միջոցով,

- Ընտրական վարչարարության բարելավում՝ տեղամասային հանձնաժողովների անդամների կրճատման տեղամասում գտնվելու իրավունքի

կանոնների հստակեցման, քվեարկության ամփոփման տեսանելիության բարձրացման, և տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից պատահական վերահաշվարկի սահմանման միջոցով,

- Ընտրությունների նկատմամբ հանրային վերահսկողության բարելավում՝ բողոքարկման ժամկետների և սուբյեկտների վերանայման, դիտորդական կազմակերպությունների և ՉԼՍ ներկայացուցիչների գրանցման պարզեցման և ժամկետների կրճատման, տեղամասային կենտրոնում միաժամանակ գտնվող դիտորդների և ՉԼՍ ներկայացուցիչների թվի սահմանափակման վերացման, եռամսյա ժամկետում առաքելության զեկույցի հրապարակման և քաղաքական չեզոքության լրացուցիչ հստակեցումների միջոցով,

- ՏԻՄ ընտրակարգի բարելավում՝ Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների համար ընտրական շեմի նվազեցման, կանանց ներկայացվածությունը խթանող քվոտայի բարձրացման, ընտրագրավի նվազեցման, բնուսային համակարգի վերացման, իսկ հետագայում այս կարգավորումներով համամասնական ընտրակարգի ավելի մեծ թվով համայնքներում կիրառման միջոցով:

Հայեցակարգը նաև նախանշում էր հեռանկարային փոփոխություններ, որոնք պետք է իրականացվեն ԱԺ արտահերթ ընտրություններից հետո, այդ թվում.

- Օրենսդրորեն ամրագրել քվեարկության ընթացքում քվեախցիկների ներսի արկղերից դատարկվող չօգտագործած քվեաթերթիկների հավաքման և պահպանման կարգի սահմանումը ԿԸՀ-ի կողմից,

- Նախաձեռնել ընտրողների գրանցման սարքերի միջոցով ընտրողների կենսաչափական նույնականացման համակարգի ներդրումը, իրականացնել ընտրողների կենսաչափական նույնականացում՝ բոլոր ընտրողներին տրամադրելով նույնականացման քարտեր, ստեղծելով մատնահետքերի միասնական շտեմարան և համաժամանակյա կապ ստեղծելով բոլոր տեխնիկական գրանցման սարքերի միջև

- Քվեարկության օրվա և վայրի վերաբերյալ ընտրողներին ծանուցման գործող ծախսատար և անարդյունավետ փոստային մեթոդը փոխարինել առավել արդյունավետ մեթոդով,

- դիտորդների գրանցման և վկայականների տրման գործընթացում նվազագույնի հասցնել մարդկային գործոնը և կրճատել ժամկետները
- տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը դարձնել առավել թափանցիկ՝ ամրագրելով տեսախցիկներով կահավորելու պահանջ
- դիմում-բողոքների ընդունման համակարգը՝ Կենտրոնական և Տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ընդունելով էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթեր:

Հանձնաժողովի կողմից, հայեցակարգին զուգահեռ, մշակվում էր ընտրական օրենսգրքի փոփոխությունների նախագիծը,⁴⁸ որն e-draft.am իրավական ակտերի նախագծերի հրապարակման կայքում քննարկման դրվեց հոկտեմբերի 5-ից հոկտեմբերի 20-ը: Հարկ է նշել, որ թեև նախագծի վերաբերյալ կայքում ներկայացվել է 14 առաջարկություն, սակայն դրանց ընդունման կամ մերժման վերաբերյալ որևէ տեղեկատվություն հրապարակված չէ:⁴⁹

Օրենսդրական փոփոխությունները զուգահեռաբար քննարկվել են Ազգային ժողովում ներկայացված խմբակցությունների հետ, որի հիման վրա նախագիծը լրամշակվել է: Նախագծով փոփոխություններ են առաջարկվել գործող Օրենսգրքի 70 հոդվածներում, այդ թվում տեխնիկական փոփոխությունների՝ ժամկետների համապատասխանեցման նպատակով:

Նախագծում տեղ չեն գտել կամ ձևափոխվել են հայեցակարգով առաջարկված հետևյալ դրույթները.

- Մանդատների բաշխմանը առնվազն 4 ուժի մասնակցության փոխարեն առաջարկվեց թողնել առնվազն 3 ուժերի մասնակցությունը, իսկ 4-րդ առավել շատ ձայներ ստացած ուժի մասնակցությունը նախատեսել, եթե նա ստացել է կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի առնվազն 2 տոկոսը,

⁴⁸ Placeholder

⁴⁹ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթի ամփոփաթեթ, <https://www.e-draft.am/projects/1236/digest>

- Կոալիցիաների անդամների սահմանափակման վերացման փոխարեն առաջարկվեց դրանց ուժը ավելացնել 3-ից 4-ի, իսկ կայուն քաղաքական մեծամասնության կամ կոալիցիայի չձևավորման դեպքում երկրորդ փուլի անցկացումը նախատեսվել առաջին փուլից 35 օր հետո՝ գործող 28-ի փոխարեն,

- Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ընտրության մեխանիզմը առաջարկվեց թողնել անփոփոխ,

- Մատչելի տեղամասերի գույքագրման գործառույթը նախագծով չնախատեսվեց, սակայն նախատեսվեց ըստ գտնվելու վայրի քվեարկության լրացուցիչ ցուցակների միջոցով տեղաշարժման դժվարություններ ունեցող անձանց թույլատրել քվեարկել այլ տեղամասում, միաժամանակ առաջարկվեց վերացնել ստացիոնար բժշկական հաստատություններում գտնվող անձանց շրջիկ քվեատուփի միջոցով քվեարկելու հնարավորությունը, ինչը հայեցակարգով նախատեսված չէր,

- Չինձառայողների քվեարկության տեղամասերի հրապարակում չնախատեսվեց, իսկ քարոզչության հասանելիության առումով նախատեսվեց միայն հեռուստառադիոհաղորդումներին հետևելու հնարավորությունը և այդ իրավունքի սահմանափակման արգելքը,

- Դիտորդական առաքելությունների և զանգվածային լրատվամիջոցների առումով հավատարմագրման 15 օրյա ժամկետը առաջարկվեց կրճատել մինչև 10 օր, իսկ առաքելության ղեկույցի առումով նախատեսվեց, որ քվեարկությունից հետո եռամսյա ժամկետում ղեկույցի հրապարակման դեպքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այն հրապարակում է իր կայքում,

- Անցումային դրույթներով նախատեսվեցին քարոզչության ֆինանսավորման հաշվետվողականության բարձրացման համար մի շարք իրավակարգավորումներ, որոնք պետք է ուժի մեջ մտնեին Ազգային ժողովի արտահերթ ընտրություններից հետո:

Ընտրական օրենսգրքի նախագիծը 2018թ. հոկտեմբերի 22-ին և 29-ին դրվեց Ազգային ժողովում քվեարկության, բայց չստացավ սահմանադրական օրենքի ընդունման համար բավարար ձայներ: 2018թ. դեկտեմբերի 9-ի ԱԺ արտահերթ ընտրությունները կազմակերպվեցին և անցկացվեցին 2016թ. ընդունված և 2018թ. մայիսին փոփոխված ընտրական օրենսգրքով:

Ընտրությունների կազմակերպումը

Ընտրական հանձնաժողովներ

2018թ. ապրիլի վերջին՝ Սերժ Սարգսյանի հրաժարականից հետո վարչապետի ժամանակավոր պաշտոնակատար Կարեն Կարապետյանն առաջարկեց ԱԺ արտահերթ ընտրությունները՝ որպես մի քանի հասարակական կազմակերպություններ հայտարարություն տարածեցին՝ նշելով, որ «Ժողովրդավարական չափանիշներին համապատասխան, ազատ, մրցակցային և թափանցիկ ընտրություններ անցկացնելու համար անհրաժեշտ են ժողովրդավարական լծակներն ու հավասար մրցակցությունը ապահովող իրավակարգավորումներ, վարչական ռեսուրսը չչարաշահող գործադիր իշխանություն, գործընթացը օրենքի տառին համապատասխան կազմակերպող ԿԸՀ-ի կազմ, մրցակցային հեռարձակումն ապահովող ՀՌԱՀ-ի կազմ, ընտրախախտումների դեմ արդյունավետ պայքարող քրեական հետախուզման ու քննչական մարմինների ղեկավարներ, ինչպես նաև ընտրական վեճերը արդար կերպով լուծող անկախ դատարաններ»⁵⁰ 2018թ. սեպտեմբերի 3-ին ավելի մեծ թվով կազմակերպություններ տարածեցին հայտարարություն, որում վերահաստատեցին նախորդ հայտարարության մոտեցումները, ողջունեցին ՀՀ Ոստիկանության և Հատուկ քննչական ծառայության ղեկավարության փոփոխությունը և ընթացիկ աշխատանքը և կոչ արեցին «ԿԸՀ և ՀՌՀ ղեկավարներին վերանայել համապատասխան հանձնաժողովներում իրենց մասնակցության նպատակահարմարության հարցը և հրաժարվել պաշտոններից՝ հանուն ընտրությունների նկատմամբ հանրային վստահության վերականգնման»⁵¹

Այնուամենայնիվ մինչև Ազգային ժողովի արտահերթ ընտրությունները երկու հանձնաժողովների կազմը մնաց նույնը: Միևնույն ժամանակ տեղական և միջազգային դիտորդական առաքելությունները ընտրությունների ընթացքում հանձնաժողովների գործունեությունը դրական գնահատեցին:


⁵⁰ ՀԿ-ների հայտարարությունը՝ արդար ընտրությունների նախապայմանների մասին
<https://hetq.am/hy/article/88122>

⁵¹ Հայտարարություն ազատ և արդար ընտրություններ անցկացնելու նախապայմանների վերաբերյալ
<https://transparency.am/hy/statements/view/304>

Ազգային ժողովի արտահերթ ընտրություններին նախորդող ՏԻՄ ընտրությունների ընթացքում «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքն արձանագրեց ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և տարածքային ընտրական հանձնաժողովների համագործակցության և խնդիրների լուծման պատրաստակամությունը, միաժամանակ Երևանի ավագանու արտահերթ ընտրությունների ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատանքը ավելի ցածր էր գնահատվել դիտորդների կողմից, քան 2017թ. ավագանու ընտրությունների ժամանակ:

Դաշինքի կողմից դիտարկված 300 տեղամասերից 45%-ում (2017թ. արձանագրված 72%-ի համեմատ) ըստ դիտորդների գնահատման հանձնաժողովի անդամները շատ լավ են տիրապետել իրենց գործառույթներին, 54%-ը բավարար և 1%-ը բոլորովին չի տիրապետել իր գործառույթներին: Ընտրողների նկատմամբ վերաբերմունքը հիմնականում լավ կամ գերազանց է գնահատվել, սակայն նախորդ ԱԺ ընտրությունների համեմատ նկատվել է բացասական միտում: Այնուամենայնիվ դիտարկված տեղամասերի 29%-ի վերաբերյալ դիտորդները նշել են, որ հանձնաժողովի անդամները ընտրողներին չեն ներկայացրել, կամ ոչ միշտ են ներկայացրել քվեարկության կարգը: Նման դեպքեր արձանագրվել էին նախորդ ԱԺ ընտրությունների ընթացքում դիտարկված տեղամասերի 14%-ում: Այնուամենայնիվ, ի տարբերություն նախորդ ԱԺ ընտրությունների, դիտորդները չեն արձանագրել հանձնաժողովների կողմից համատարած կողմնակալ վերաբերմունքը որևէ քաղաքական ուժի նկատմամբ:

Հանձնաժողովի վերաբերմունքը ընտրողների նկատմամբ (1-շատ վատ, 5-գերազանց)



Դիտարկված տեղամասերի 88%-ում դիտորդները նշել են, որ հանձնաժողովի նախագահը տիրապետում է հաշվարկի գործընթացին: Ինչպես 2017թ. ԱԺ ընտրությունների ժամանակ, այս ընտրությունների ընթացքում ևս տարածքային ընտրական հանձնաժողովներում դիտարկում իրականացրած դիտորդներն արձանագրել են, որ տեղամասային ընտրական հանձնաժողովներից բերված ընտրական փաստաթղթերում եղել են բազմաթիվ անճշտություններ և թերություններ, որոնք վկայում են հատկապես քվեարկության արդյունքների ամփոփման փուլի վերաբերյալ տեղամասային ընտրական հանձնաժողովների անիրազեկության մասին:

Տեղամասերի կահավորում և տեսանկարահանում

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով տեսանկարահանում և հեռարձակում ապահովվեց 2010 տեղամասային կենտրոններից 1501-ում: Դաշինքի կողմից դիտարկված 299 տեղամասերի⁵² 96,7% ապահովված էր տասնկարահանմամբ: Այդ տեղամասերից 8-ում (2.9%) քվեախցիկը գտնվել է տեսախցիկի տեսադաշտում այնպես, որ ընտրողի քվեարկության գաղտնիությունը կարող էր խախտվել : 2017թ. ԱԺ ընտրությունների ընթացքում

⁵² Լոգիստիկ խնդրի պատճառով տեղամասերից մեկը լիարժեք չի դիտարկվել:

տեսախցիկի նման տեղակայում արձանագրվել է 22 տեղամասում (2017թ. դիտարկված տեղամասերի 11%-ում): Դիտարկվող տեղամասերից շուրջ 19%-ում քվեասենյակը կահավորված չի եղել այնպես, որ ընտրողը քվեախցիկում քվեարկելիս լինի հանձնաժողովին դեմքով և թիկունքով դեպի պատը: Դիտորդների հորդորով կամ սեփական նախաձեռնությամբ հանձնաժողովին հաջողվել է վերացնել կահավորման թերությունները և նվազեցնել տվյալ պատճառով քվեարկության գաղտնիության բացահայտման ռիսկերը:

Տեղամասերի մատչելիություն

“Քաղաքացիական հասարակությունը Հայաստանում ընտրությունների նախապատրաստման և մոնիտորինգի գործընթացներում. Ընտրություններ բոլորի համար” ծրագրի շրջանակներում «Անկախ դիտորդ» դաշինքը տեղամասային կենտրոնների մատչելիության գնահատման համար համագործակցել է Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի հետ, որն էլ առանձին զեկույցով ամփոփել և վերլուծել է տեղամասերի մատչելիության վերաբերյալ երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդների կողմից հավաքագրած տեղեկատվությունը:

Թեկնածուների գրանցում

Սահմանադրության համաձայն Ազգային ժողովն ընտրվում է համամասնական կարգով՝ նվազագույնը 101 պատգամավոր (89-րդ հոդված): Համամասնական կարգով առաջադրվելու իրավունք ունեն միայն կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները: Մինևույն ժամանակ Ընտրական օրենսգրքով սահմանվել է 13 ընտրական տարածք, որոնցից 4-ը Երևան քաղաքում, իսկ 9-ը՝ մարզերում (78-րդ հոդված): Վայոց Ձորի և Սյունիքի մարզերը միավորված են մեկ ընտրական տարածքում:

Երևան քաղաքի 4 ընտրական տարածքներ են.

1-ին ընտրական տարածք - Ավան, Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններ,

2-րդ ընտրական տարածք - Արաբկիր, Աջափնյակ, Դավթաշեն վարչական շրջաններ,

3-րդ ընտրական տարածք - Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ վարչական շրջանները,

4-րդ ընտրական տարածք - Կենտրոն, Նորք-Մարաշ, Էրեբունի, Նուբարաշեն վարչական շրջաններ

Այսպիսով, Ազգային ժողովի ընտրություններում առաջադրվում են կուսակցություններն ու կուսակցությունների դաշինքները՝ մեկ համապետական և 13 տարածքային ընտրական ցուցակներով: Ընդ որում, քվեարկության համար ընտրողին տրվում է մեկական քվեաթերթիկ գրանցված յուրաքանչյուր կուսակցության/կուսակցությունների դաշինքի համար, որի առաջին էջում նշված է կուսակցության անունը և թեկնածուների համապետական ցուցակի առաջին երեք անունները, իսկ երկրորդ էջում նշված է տարածքային ցուցակը՝ այբենական կարգով, որում թեկնածուների առավելագույն թիվը սահմանվել է ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ ելնելով տվյալ տարածքի բնակչության թվից:⁵³

ՀՀ Ընտրական օրենսգրքի 80-րդ հոդվածի համաձայն Ազգային ժողովի պատգամավոր կարող է ընտրվել քսանհինգ տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

2018թ. դեկտեմբերի 9-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների համար կուսակցություններն ու կուսակցությունների դաշինքները գրանցման համար իրենց փաստաթղթերը ներկայացրել են մինչև 2018թ. նոյեմբերի 14-ը, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից գրանցումը կատարվել է նոյեմբերի 14-ից 19-ը:

Աժ արտահերթ ընտրություններին մասնակցելու համար գրանցվել են հետևյալ քաղաքական ուժերը.

⁵³ ԿԸՀ որոշում N 89-Ա, 2 նոյեմբերի, 2018թ. http://res.elections.am/images/dec/18.89_A.pdf

1. Հայաստանի Հանրապետական Կուսակցություն (ՀՀԿ)
2. «Բաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն («ԲՈ» ՍԴԿ)
3. «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություն (ՀՅԴ)
4. «ԻՄ ԲԱՅԼԸ» կուսակցությունների Դաշինք («ԻԲ» ԿԴ)
5. «Լուսավոր Հայաստան» կուսակցություն (ԼՀԿ)
6. «Զրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» Կուսակցություն (ԶԺՎԿ)
7. «Ազգային Առաջընթաց» կուսակցություն (ԱԱԿ)
8. «ՄԵՆԲ» կուսակցությունների դաշինք («ՄԵՆԲ» ԿԴ)
9. «Օրինաց Երկիր» կուսակցություն (ՕԵԿ)
10. «Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն («ՍԾ» ՀԿ)
11. «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն (ԲՀԿ)

Առաջադրված 9 կուսակցությունների և 2 կուսակցությունների դաշինքների թեկնածուների համապետական ցուցակների առաջին մասով առաջադրվել է 1493 թեկնածու՝ այդ թվում ազգային փոքրամասնությունների 12 ներկայացուցիչ (նախորդ ԱԺ ընտրություններին 9 ուժերը ներկայացրել էին 1565 թեկնածու՝ այդ թվում ազգային փոքրամասնությունների 27 ներկայացուցիչ): Համապետական ցուցակի երկրորդ մասով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ թեկնածու առաջադրելու հնարավորությունից օգտվել են «Լուսավոր Հայաստան» (4 թեկնածու), «Բարգավաճ Հայաստան» (3 թեկնածու) և «Օրինաց Երկիր» կուսակցությունները (1 թեկնածու) և «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքը (4 թեկնածու): Յուրաքանչյուր ընտրական տարածքի կուսակցությունների կամ կուսակցությունների դաշինքների տարածքային ցուցակներով առաջադրած թեկնածուների առավելագույն թիվը սահմանվել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ՝ ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով:⁵⁴ Ընտրական օրենսգրքի համաձայն՝ թեկնածուները կարող են առաջադրվել և՛ տարածքային, և՛ համապետական ցուցակներով, սակայն միևնույն թեկնածուն կարող է առաջադրվել միայն մեկ տարածքային ցուցակով: Տարածքային


⁵⁴ ԿԸՀ որոշում N 89-Ա, 2 նոյեմբերի, 2018թ. http://res.elections.am/images/dec/18.89_A.pdf

ցուցակներով առաջադրվել է ընդհանուր թվով 1335 թեկնածու (նախորդ ԱԺ ընտրություններին 9 ուժերը ներկայացրել էին 1186 թեկնածու):

Ընտրական օրենսգրքի համաձայն կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները թեկնածուների համապետական ցուցակներով կարող են առաջադրել նվազագույնը 80 և առավելագույնը 300 թեկնածու: Ընտրական օրենսգրքը նաև սահմանում է, որ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ցուցակների գրանցման համար անհրաժեշտ է, որպեսզի կուսակցությունը կամ դաշինքը յուրաքանչյուր ընտրական տարածքում առաջադրի առնվազն 5 թեկնածու: ԿԸՀ 2018թ. նոյեմբերի 2-ի որոշման համաձայն թեկնածուների տարածքային ցուցակներով կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները կարող էին առաջադրել առավելագույնը 165 թեկնածու:


2017թ. համապետական ցուցակով առավելագույն 300 թեկնածու և տարածքային ցուցակով առավելագույն 164 թեկնածու էր ներկայացրել «Հայկական Վերածնունդ» կուսակցությունը: 2018թ. որևէ կուսակցություն կամ դաշինք չի ներկայացրել առավելագույն թվով թեկնածուներ: Ավելին՝ առաջադրված կուսակցություններից 3-ի՝ «Քաղաքացու որոշում» սոցիալ դեմոկրատական կուսակցության, «Քրիստոնեա-Ժողովրդական վերածնունդ» կուսակցության և «Ազգային Առաջընթաց» կուսակցության համապետական և տարածքային ցուցակներով առաջադրած թեկնածուների թիվը աննշան է տարբերվում գրանցման համար անհրաժեշտ նվազագույն թվից:

Կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների առաջադրած թեկնածուների թիվը



ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժել է «Օրինաց Երկիր» կուսակցության կողմից առաջադրված մեկ թեկնածուի գրանցումը՝ վերջին 4 տարիներում ՀՀ-ում մշտական բնակությունը հաստատող տեղեկանքի բացակայության պատճառով:

Թեկնածուների գրանցման կարգավիճակը



ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներում առկա վիճակագրության համաձայն միևնույն քվեարկության օրը ինքաբացարկի դիմում է ներկայացրել 39 թեկնածու, իսկ ընտրություններից հետո մանդատից հրաժարվել է 20 թեկնածու, որոնցից 18-ը «Իմ քայլը» դաշինքից՝ այլ պետական պաշտոնի անցնող անձինք:⁵⁵ Աժ ընտրություններից հետո ինքնաբացարկ է հայտնել և Բարգավաճ Հայաստան կուսակցությունից դուրս եկել նաև «Ծառուկյան դաշինքի» նախկին պատգամավոր Հակոբ Նազարյանը:⁵⁶

Ընտրական ցուցակներ

Ինչպես արդեն նշվեց, ընտրողների ցուցակների ճշգրտության ապահովման նպատակով Ընտրական օրենսգրքի փոփոխությունների նախագծով նախատեսվում էր թույլատրել քվեարկել միայն միևնույն վերջին մեկ տարին վավեր փաստաթղթով, ինչը հնարավորություն կտար ընտրողների ցուցակներից հեռացնել այն անձանց անունները, ովքեր արդեն երկար տարիներ բացակայում էին երկրից և հաճախ հանդիսանում այլ երկրի քաղաքացի և որոնց քվեն կարող էր օգտագործվել ընտրությունների ժամանակ: Այս վտանգն ըստ երկրի չեզոքացվել էր Ընտրական Օրենսգրքի 2016թ նոյեմբերի 14-ի փոփոխությամբ, որը նախատեսում էր ընտրողների կողմից ստորագրված ցուցակների սկանավորում և հրապարակում քվեարկության հաջորդ օրը:

Ընտրական օրենսգրքի փոփոխությունների նախագծով նաև նախատեսվում էր ընտրողների գրանցման էլեկտրոնային սարքերի տվյալների հրապարակում առանց անձնագրային տվյալների ինչը հնարավորություն կտար ավելի դյուրին դարձնել տվյալների ստուգումը: Այս փոփոխություններն ընդունվեցին, սակայն քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի փոփոխությունը հնարավորություն տվեց բացառել քրեական պատասխանատվությունը անփութությամբ այլ անձի փոխարեն քվեարկության մասին հաղորդում տալու համար, ինչն իրավացիորեն համարվում էր նման դեպքերի բացահայտումը լռեցնելու միջոց:

⁵⁵ ԿԸՀ որոշում N 1-Ա, 4 հունվարի, 2019թ. https://res.elections.am/images/dec/19.1_A.pdf

⁵⁶ ԲՀԿ պատգամավոր Հակոբ Նազարյանն ինքնաբացարկի դիմում է ներկայացրել ԿԸՀ. նրա գրանցումն ուժը կորցրած է ճանաչվել, <https://armenpress.am/arm/news/961605.html>

Այնուամենայնիվ հարկ է նշել, որ ընտրողների կողմից ստորագրված ցուցակների հրապարակումը միանշանակ չի ընդունվում միջազգային դիտորդական առաքելությունների կողմից և շարունակաբար առաջարկվում է գտնել ընտրողների վստահության բարձրացման և միևնույն ժամանակ նրանց անձնական տվյալների գաղտնիությունը ապահովող այլընտրանքային միջոց:

2017թ. ԱԺ ընտրություններում ընտրելու իրավունք է ունեցել 2 585 134 քաղաքացի, որից քվեարկությանը մասնակցել է 1 575 786: 2018 թ. դեկտեմբերի 9 արտահերթ ԱԺ ընտրություններում, ըստ ՀՀ ոստիկանության նախնական ցուցակի՝ 2 575 939 քաղաքացի, իսկ վերջնական ցուցակի տվյալներով՝ 2 591 276 ընտրող, որից քվեարկությանը մասնակցել է 1 261 105-ը:

Դիտորդական առաքելությունների գրանցում

ՀՀ Ընտրական օրենսգրքի 30-րդ հոդվածը սահմանում է, որ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր և ՀՀ այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:

Ընտրությունների դիտարկման համար հավատարմագրվել է 22 տեղական կազմակերպություն և 7 միջազգային կազմակերպություն:

2018թ. նոյեմբերի 26-ին «Ականատես» դիտորդական առաքելությունը տարածել է հայտարարություն, որում անդրադարձել է «Միացյալ առաջնորդների պալատ», «Համաչափ զարգացում» համայնքային զարգացման, «Իրավագոր» և

«Համահայկական երիտասարդական ասոցիացիա» ՀԿ-ներին, որոնք միասին նախատեսել են հավատարմագրել մոտ 21,600 դիտորդ:⁵⁷ Հայտարարությունում հղում է կատարվել «Հետք» լրատվականի հետաքննությանը, որով բացահայտվել է կազմակերպությունների կապը Բարգավաճ Հայաստան Կուսակցության հետ:

ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժել է «Համահայկական երիտասարդական ասոցիացիա» ՀԿ-ի դիտորդների հավատարմագրումը, քանի որ պարզվել է, որ կազմակերպությունը լուծարված է:⁵⁸ Այս կազմակերպությունը 2017թ. հավատարմագրել է 1479 դիտորդ: Դատելով դիտորդական առաքելության համար հավատարմագրված կազմակերպությունների վերջնական ցանկից, «Համաչափ զարգացում» համայնքային զարգացման ՀԿ-ն հրաժարվել է դիտորդություն իրականացնելուց:

Ի դեպ, ինչպես նշվել է զեկույցի մեթոդաբանության մեջ, հաշվի առնելով, որ «Անկախ դիտորդ» Դաշինքը տեղամասային կենտրոններում դիտարկումն իրականացնում է երկու դիտորդից կազմված խմբերով, իսկ տեղական դիտորդական կազմակերպություններից միաժամանակ միայն մեկական դիտորդ կարող է ներկա գտնվել տեղամասում, Դաշինքի դիտորդները հավատարմագրվել են անդամ և գործընկեր կազմակերպությունների կողմից: Միաժամանակ հաշվի առնելով, որ դիտորդների հավատարմագրման վերջնաժամկետը քվեարկության օրվանից 15 օր առաջ է և այդ ժամանակահատվածում հնարավոր չէ վստահաբար նախատեսել, թե որ դիտորդները, որ տեղամասերում են դիտարկում իրականացնելու, ըստ այդմ Դաշինքը որոշում է կայացրել միևնույն դիտորդների հավատարմագրել մեկից ավելի կազմակերպությունների միջոցով: Սա հնարավորություն է տվել մինչև վերջին պահը կատարել տեղափոխություններ և փոխարինել դիտորդություն իրականացնելուց հրաժարված կամ հեռացված անձանց: Այս պարզաբանումը կարևոր ենք համարում, քանի որ «Ականատես» դիտորդական առաքելության մեր գործընկերները դիտորդական առաքելություններում կրկնվող անուկների առկայությունը համարել էին դիտորդական առաքելության «կեղծ» լինելու

⁵⁷ Հայտարարություն «Կեղծ» դիտորդական առաքելությունների վերաբերյալ
<https://transparency.am/hy/statements/view/307>

⁵⁸ ԿԸՀ որոշում N 136-Ա, 24 նոյեմբերի 2018թ. https://res.elections.am/images/dec/18.136_A.pdf

ցուցանիշներից մեկը: Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում դիտորդական առաքելության հավատարմագրման ժամկետի էական կրճատումը կամ դիտորդական դաշինքների համար այլ իրավակարգավորումների սահմանում՝ որպես կրկնակի հավատարմագրումից խուսափելու առավել արդյունավետ միջոց:

Բացի միջկառավարական դիտորդական առաքելություններից Աժ արտահերթ ընտրությունները դիտարկելու հնարավորություն էին ստացել նաև SILBA (Ազատության և ժողովրդավարության նախաձեռնությունների աջակցություն) և ENEMO (Ընտրություններ մշտադիտարկող կազմակերպությունների եվրոպական ցանց) միջազգային հասարակական կազմակերպությունները: 2017թ. ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժել էր հրավեր տրամադրել միջազգային հասարակական կազմակերպություններին՝ պատճառաբանելով, որ հավատարմագրված դիտորդների թիվն արդեն իսկ բարձր է: ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նաև պարզաբանել էր, որ չկան օտարերկրյա հասարակական կազմակերպությունների ընտրության միասնական չափանիշներ և փաստացի խտրական ընտրությունից խուսափելու համար մերժվել էին բոլոր միջազգային հասարակական կազմակերպությունները: Փոխարենն առաջարկվում էր միջազգային դիտորդներին դիտարկել ընտրությունները տեղական դիտորդական առաքելությունների կազմում, քանի որ ՀՀ ընտրական օրենսգիրքը չի սահմանափակում տեղական դիտորդների քաղաքացիությունը:

Նախընտրական փուլի դիտարկում

Նախընտրական քարոզչությունը մեկնարկել է 2018թ. նոյեմբերի 26-ին: «Անկախ դիտորդ» դաշինքը քարոզչության ընթացքը դիտարկել է հանրապետության ողջ տարածքում:


Երկարաժամկետ դիտորդության ընթացքում իրականացվել են

- հարցազրույցներ բոլոր քաղաքական կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ներկայացուցիչների, թեկնածուների, միջոցառումների, հանրահավաքների մասնակիցների հետ,
- քաղաքական կուսակցությունների, դաշինքների թեկնածուների նախընտրական հանրահավաքների և հանդիպումների դիտարկումներ,
- նախընտրական քարոզարշավի ընթացքում տեղի ունեցած խախտումների արձանագրում, այդ թվում՝ ՉԼՄ-ով տարածված տեղեկությունների հիման վրա,
- արձանագրված խախտումների վերացման նպատակով բողոքների ներկայացում ԶԶ ԿԸՀ-ին և այլ պետական մարմիններին

Առաջադրված կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների թեկնածուների կազմը


Թեկնածուների համապետական ցուցակներում կանայք կազմել են 32,4%-ը, իսկ կուսակցությունների կողմից առաջադրված ցուցակներում միջին ցուցանիշը եղել է 33,8%: Համապետական ցուցակում կանանց ամենաշատ ներգրավածությունն ապահովել է «Ազգային առաջընթաց» կուսակցությունը (51,2%): «Ազգային առաջընթաց» կուսակցությունը նաև միակն էր, որի ցուցակը գլխավորում էր կին թեկնածու: Կանանց ամենաքիչ ներգրավածությունն ապահովել է «ՄԵՆԶ» կուսակցությունների դաշինքը (25,4%):

Կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համապետական
ցուցակներում երկու սեռերի ներկայացվածությունը




Թեկնածուների տարածքային ցուցակներում կանայք կազմել են 33,9%-ը, իսկ կուսակցությունների միջին ցուցանիշը եղել է 35,3%: Տարածքային ցուցակներում կանանց ներկայացվածությունը կրկին ամենաբարձրն է եղել «Ազգային առաջընթաց» կուսակցության ցուցակում (53,8%), իսկ ամենաքիչ ներկայացվածություն (27,6%) եղել է «ՄԵՆԲ» կուսակցությունների դաշինքը:

Կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների տարածքային
ցուցակներում երկու սեռերի ներկայացվածությունը




Ընտրական օրենսգրքի տվյալ կուսակցության կամ դաշինքի անդամ կուսակցությունների անդամ չհանդիսացող թեկնածուների թիվը կուսակցության և կուսակցությունների դաշինքի թեկնածուների ցանկում չի կարող գերազանցել ընդհանուր թվի 30%-ը: Համապետական ցուցակներով ամենից շատ անկուսակցական թեկնածու առաջադրել է «Զրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցությունը (31.8%), իսկ տարածքային ցուցակներով՝ Հայաստանի հանրապետական կուսակցությունը (30.2%): «Օրինաց Երկիր» կուսակցության թե համապետական, թե տարածքային ցուցակներում ընդգկված բոլոր թեկնածուները եղել են կուսակցության անդամ: «Ազգային առաջընթաց» կուսակցությունը համապետական ցուցակով առաջադրել է մեկ անկուսակցական թեկնածուի, իսկ տարածքային ցուցակներով առաջադրել է միայն կուսակցության անդամ հանդիսացող թեկնածուների:

Առաջադրվող կուսակցության անդամ հանդիսացող և չհանդիսացող անձանց համամասնությունը համապետական ցուցակներում




Առաջադրվող կուսակցության անդամ հանդիսացող և չհանդիսացող անձանց համամասնությունը տարածքային ցուցակներում




Թեկնածուների զբաղվածության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «Իմ քայլը» դաշինքի համապետական ցուցակի թեկնածուների 54,5%-ը և տարածքային ցուցակի 58,4%-ը աշխատում են պետական, այդ թվում համայնքային մարմիններում, իսկ չաշխատող թեկնածուների ներգրավվածությունը նվազագույնն է՝ 12,8% համապետական ցուցակում և 13,4% տարածքային ցուցակներում: 2017թ. իշխող Հայաստանի հանրապետական կուսակցության համապետական ցուցակի թեկնածուների 73%-ը և տարածքային ցուցակի 67%-ը աշխատում էին պետական, այդ թվում համայնքային մարմիններում, իսկ չաշխատող թեկնածուների կազմում էին երկու ցուցակների ընդամենը 5%:

«Զաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը և «Ազգային առաջընթաց» կուսակցությունը թեկնածուների զբաղվածության փոխարեն նշել են նրանց մասնագիտությունը, ինչը հնարավորություն չի տալիս պարզել նրանց աշխատավայրը:

Կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համապետական
ցուցակների թեկնածուների զբաղվածությունը



Կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների տարածքային
ցուցակների թեկնածուների զբաղվածությունը




Մասնավոր ոլորտից ամենից շատ թեկնածուներ ներկայացված էին «Զրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցության կողմից՝ 47,1% համապետական ցուցակում և 48,1% տարածքային ցուցակներում: Թե՛ համապետական, թե՛ տարածքային ցուցակներում ամենից շատ Կաշխատող

թեկնածուներ առաջադրել է «Սասնա ծռեր» համահայկական կուսակցությունը՝ համապատասխանաբար՝ 50% և 51%:

Ֆինանսական հաշվետվություններ և հայտարարագրեր

Կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների հայտարարագրերի ուսումնասիրությունը կրկին վկայում է, որ անհրաժեշտ է մշակել և ներդնել կուսակցությունների ֆինանսական հաշվետվողականության ավելի արդյունավետ մեխանիզմներ, որոնց կիրառումը պետք է ապահովի անկախ և ավելի լայն լիազորություններ ունեցող վերահսկիչ կառույցը:


Այնուամենայնիվ, ինչպես 2017թ. այնպես էլ 2018թ. ռեսուրսների տիրապետման տեսանկյունից Հայաստանի հանրապետական կուսակցությունը շարունակում է պահպանել իր միանձնյա գերակայությունը: Հայաստանի հանրապետական կուսակցության միայն դրամական միջոցները կրկնակի գերազանցում են առաջադրված մյուս կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընդհանուր դրամական միջոցները:



Միանձնյա կամ համատեղ սեփականությամբ անշարժ գույքի տիրապետման վերաբերյալ հայտարարել են «Օրինաց երկիր» կուսակցությունը (1 շինություն), «Հայաստանի Հանրապետական» կուսակցությունը (41

շենք/շինություն և 21 միավոր հողատարածք) և «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը (45 շենք/շինություն և 13 միավոր հողատարածք):

Կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների հայտարարագրած շինություն (մ2) և հողատարածք (մ2)




■ շինություն (մ2)	12646.04	0	9950.67	0	0	0	0	0	765.2	0	0
■ հողատարածք (մ2)	13722.55	0	4716.5	0	0	0	0	0	0	0	0

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներին ֆիզիկական անձանց կողմից կատարված մուծումների թույլատրելի գումարը նվազագույն աշխատավարձի 500-ապատիկն է, իսկ մեկ թեկնածուի համար նվիրաբերված առավելագույն գումարը կարող է լինել նվազագույն աշխատավարձի 5 000-ապատիկը: Ընտրական օրենսգրքի կարգավորումներով՝ նախընտրական քարոզչության ֆինանսավորման նպատակով կուսակցությունները կարող են ծախսել նվազագույն աշխատավարձի 500 000-ապատիկը չգերազանցող գումար, ինչը 2011թ. օրենսգրքով թույլատրելի գումարի հնգապատիկն է, թեև որևէ փոփոխություն կամ լրացում չի կատարվել նախընտրական հիմնադրամից ֆինանսավորվող և հայտարարագրվող ծախսերի ցանկում: Չնայած Վենետիկի հանձնաժողովի, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելությունների և տեղական դիտորդական կազմակերպությունների բազմաթիվ առաջարկություններին, այդ գումարը չի ներառում նախընտրական քարոզչության ընթացքում կատարված վերադիր,

տրանսպորտային և այլ կազմակերպչական ծախսերը, այդ թվում՝ նախընտրական շտաբերի վարձակալության և դրանցում ներգրավված ժամանակավոր աշխատակազմի վճարները, որոնք ըստ էության որևէ կերպ չեն արձանագրվում կամ հարկվում:

Հայտարարագրված ծախսերի առումով բացարձակ առաջատար է եղել «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքը՝ 275 272 220 դրամով, ինչը բոլոր հայտարարագրված ծախսերի 40,6%-ն է: Ընդհանուր առմամբ 11 ուժերի քարոզչության համար հայտարարագրված ծախսերը կազմել են շուրջ 677 354 000 դրամ: 2017թ. առավելագույն ծախս հայտարարագրել էր «Հայաստանի հանրապետական» կուսակցությունը՝ 386 822 249 դրամ (բոլոր ուժերի հայտարարագրված 44.6%), իսկ բոլոր 9 ուժերի հայտարարագրած ծախսը կազմում էր 865 405 948 դրամ:



Համաձայն ՀՀ ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովի 2018թ. դեկտեմբերի 15-ի եզրակացության վերոնշյալ ծախսերի մի մասով ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը թույլատրել է մարել պարտավորությունները քվեարկության օրվանից հետո, սակայն եզրակացության հրապարակման պահին դրանք դեռևս կատարված չեն եղել: ՀՀ ԿԸՀ վերահսկիչ վերստուգիչ հանձնաժողովն իր եզրակացությամբ նշել է «Իմ

քայլը» դաշինքի նախընտրական հիմնադրամում մեկ թեկնածուի համար վճարվող առավելագույն գումարը գերազանցվել է 60000 դրամով, որը փոխանցվել է ՀՀ պետական բյուջե: Մինևույն ժամանակ 700 000 և 50 000 դրամի չափով նվիրատվություն է կատարվել 2 իրավաբանական անձի կողմից: Նշված գումարները ՀՀ Ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն նույնպես փոխանցվել են ՀՀ պետական բյուջե:⁵⁹

Նախընտրական քարոզչություն

«Անկախ դիտորդ» դաշինքը նախընտրական քարոզչության դիտարկումն իրականացրել է երկարաժամկետ դիտորդության շրջանակներում: Երկարաժամկետ դիտարկման աշխատանքներում ներգրավված են եղել 84 դիտորդ, որոնք իրենց աշխատանքներն իրականացրել են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում: Բոլոր տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և/կամ քարտուղարների հետ իրականացված հարցման արդյունքում դիտորդներն արձանագրել են նրանց ընկալումները 2017թ. և 2018թ. Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ:


2017թ. ԱԺ ընտրությունները գնահատելիս տեղամասային ընտրական հանձնաժողովների ներկայացուցիչների կարծիքները բաժանվում են երկու գրեթե հավասար խմբերի.

- բաժանվել է գումարի տեսքով ընտրակաշառք
- որևէ խախտում չի եղել:

⁵⁹ ՀՀ ԿԸՀ Վերստուգիչ-վերահսկիչ հանձնաժողով, Եզրակացություն, 15 դեկտեմբերի, 2018
<https://res.elections.am/images/audit/conclusion09.12.18m2.pdf>

Դրանց հաջորդել է բնամթերքի, պարենի, ծառայությունների կամ նվերի տեսքով ընտրակաշառքի բաժանումը և հավաքին/հանդիպմանը մասնակցելու պարտադրանքը, աշխատավայրից կամ ուսումնական հաստատությունից հեռացնելը:

2017 թ. ԱԺ ընտրությունների ընթացքում առավել տարածված ընտրախախտումները ըստ տեղամասային հանձնաժողովների նախագահների/քարտուղարների




Սկզբունքորեն այլ պատկեր է ստացվել նույն անձանց հետ 2018թ. ԱԺ արտահերթ ընտրությունների մասին զրուցելու արդյունքում: Հարցվողների բացարձակ մեծամասնությունը չի կանխատեսել որևէ ընտրախախտման հնարավորություն:

2018 թ. Աժ քնտրությունների ընթացքում հնարավոր ընտրախախտումները ըստ տեղամասային հանձնաժողովների նախագահների/քարտուղարների




Տարածքային ընտրական հանձնաժողովների մի մասը համոզված է, որ Նախորդ ԱԺ ընտրությունների ընթացքում խախտումներ չեն եղել: Մյուս մասը, որպես առավել տարածված խախտումներ նշել է ընտրակաշառքը և քարոզչական նյութերի վնասումը: Հարցվողներից 3-ը հրաժարվել են պատասխանել, քանի որ համարել են, որ դա իրենց իրավասություններից դուրս է:

2017թ.-ի ԱԺ-ի ընտրությունների ընթացքում առավել շատ տարածված ընտրախախտումներն ըստ տարածքային ընտրական հանձնաժողովների



2018թ. նախատեսվող ընտրությունների ընթացքում հնարավոր և առկա խախտումների պատկերն ըստ տարածքային ընտրական հանձնաժողովների հետևյալն է.


2018թ.-ի ԱԺ-ի ընտրությունների ընթացքում հնարավոր ընտրախախտումներն ըստ տարածքային ընտրական հանձնաժողովների



Ընդ որում ատելության խոսքի մասին նշող տարածքային հանձնաժողովի նախագահներից 3-ը 2017թ. Ազգային ժողովի ընտրությունների վերաբերյալ նշել են, որ որևէ ընտրախախտում չի եղել:


Ազգային ժողովի թեկնածուների հետ անցկացված շուրջ 290 հարցազրույցների ընթացքում ևս արձանագրվել են նրանց դիտարկումները 2017 և 2018թթ ԱԺ ընտրությունների վերաբերյալ: Ըստ այդմ 2017թ. ԱԺ ընտրությունների ժամանակ տեղ գտած ընտրախախտումների վերաբերյալ հիշատակումները բազմաթիվ են: 21 թեկնածու հրաժարվել կամ դժվարացել է նշել ընտրախախտումների մասին, իսկ մյուսները հիշատակել են հետևյալ ընտրախախտումները.

2017 թ. ԱԺ-ի ընտրությունների ընթացքում առավել շատ են տարածված եղել հետևյալ ընտրախախտումները



2018թ. ԱԺ արտահերթ ընտրությունների ընթացքում հնարավոր ընտրախախտումների մասին դժվարացել կամ հրաժարվել է խոսել 22 թեկնածու, իսկ հիշատակումները բաշխվել են հետևյալ կերպ.

2018թ. ԱԺ-ի ընտրությունների ընթացքում հնարավոր ընտրախախտումներն ըստ թեկնածուների



Ընդհանրացնելով Նախընտրական քարոզչության դիտարկման արդյունքները՝ կարող ենք փաստել, որ 2018թ. դեկտեմբերի 9-ին կայացած արտահերթ ԱԺ ընտրությունների քարոզարշավի փուլը՝ 2017 թ. ԱԺ և Նախորդող տարիների ընտրությունների համեմատ ընթացել է ավելի նվազ ահազանգերով և խախտումներով: Նվազել են վարչական ռեսուրսի չարաշահման, քարոզչության խոչընդոտման և բռնության, ճնշումների, քողարկված և բացահայտ ընտրակաշառքների դեպքերը: Սակայն ի տարբերություն Նախորդ ընտրությունների, 2018թ. նոյեմբերի 26-ից - դեկտեմբերի 7 ընթացող քարոզարշավի ժամանակ ավելացել են ատելության խոսքի և տպագիր քարոզչակայուղերի տարածման կարգի խախտումները:

Այսպիսով՝ Նախընտրական քարոզչության դիտարկման և իրականացված հարցազրույցների միջոցով ստացված տեղեկատվության վերլուծության արդյունքում «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքն արձանագրել է.

1. Նախընտրական փուլում առավել հաճախ հանդիպող խնդիրը եղել է ատելության խոսքի կիրառումը՝ ընդհանուր առմամբ 172 նկարագրված դեպք:

Բոլոր կուսակցությունների/դաշինքների թեկնածուների հետ զրուցելիս դիտորդները հարցնում էին ատելության խոսքի կիրառման մասին: Գրեթե հավասարապես ատելության խոսքի տարածման մեջ մեղադրվում էին «Իմ քայլը» դաշինքը և Հայաստանի հանրապետական կուսակցությունը: Օրինաչափ է, որ ՀՀԿ-ին ատելության խոսք կիրառելու մեջ դեպքերի բացարձակ մեծ մասում մեղադրողներն էին «Իմ քայլը» դաշինքի, ԶՈՍԴԿ, ԼՀ և ՍԾՀԿ թեկնածուները, մինչդեռ «Իմ քայլը» դաշինքին մեղադրողները՝ ՀՀԿ, ՀՅԴ, ԶԺԿԿ և ԲՀԿ թեկնածուները: Միաժամանակ ՀՀԿ և «Իմ քայլը» դաշինքին են մեղադրել հարցվածների մոտ $\frac{1}{3}$ -ը և հիմնականում «Լուսավոր Հայաստան» կուսակցության ներկայացուցիչների կողմից:

«Իմ քայլը» դաշինքի վերաբերյալ հաճախ հիշատակվում էին Նիկոլ Փաշինյանի արտահայտությունները «Ասֆալտին փռելու» մասին, «Սև ու սպիտակի» բաժանման վրա հիմնվող խոսքը: Մինչդեռ ՀՀԿ-ին վերաբերող մեղադրանքները ավելի ընդհանրական էին, մասնավորապես հարցվողները որպես ատելության խոսք էին գնահատում ՀՀԿ-ի հռետորաբանությունը, թե

«հեղափոխականները» ապագային են, քրիստոնեական արժեքները ստորադասում են օտար արժեքների կամ քայքայում են ավանդական ընտանիքը:

Հաշվի առնելով ատելության խոսքի իրական ծավալները նաև սոցիալական ցանցերում, որոնք դուրս էին մնացել դիտարկումից, ինչպես նաև ատելության խոսքի կիրառման մեջ միմյանց հանդեպ մեղադրանքները, նկարագրական է դառնում թեկնածուներից մեկի գնահատականը. «Ամբողջ ընթացքում ՀՀԿ-ն ու «Իմ քայլը» միմյանց հանդեպ կիրառում են ատելության խոսքեր: Այս ընտրությունները, իմ կարծիքով ատելության, զգվանքի և անհանդուրժողականության ընտրություններ են:»

2. Երկրորդ տարածված խախտումն էր չսահմանված վայրում տպագիր քարոզչական նյութեր փակցնելը և սահմանված կամ չսահմանված վայրերում փակցված նյութերի վնասումը: Դիտորդներն արձանագրել են նման 163 դեպք:

3. Դրամական, բնամթերքի և ծառայությունների տեսքով բարեգործության՝ քողարկված ընտրակաշառքի տրամադրման կամ խոստման 17 դեպքի մասին տեղեկություն է ստացվել:

4. Տեղի է ունեցել 11 դեպք, երբ թեկնածուները, կուսակցությունները կամ դաշինքները ոչ թափանցիկ գործելաոճ են ունեցել և հրաժարվել են համագործակցել դիտորդների հետ:

5. «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի կողմից վարչական ռեսուրսի չարաշահման մասին նշել է 10 թեկնածու՝ «Օրինաց Երկիր», Հանրապետական, «Բարգավաճ Հայաստան», «Սասնա ծռեր», «Լուսավոր Հայաստան», «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցություններից: Որպես վարչական ռեսուրսի չարաշահում հիմնականում նշվել է Նիկոլ Փաշինյանի «ասֆալտին պառկեցնելու» հրահանգը, որը վերաբերում էր ԱԱԾ և ՀԶԾ տնօրենների զրույցի գաղտնալսման հրապարակման հետ հնարավոր կապ ունեցող օլիգարխներին և բարձրաստիճան պաշտոնյաներին: Հարկ է նշել, սակայն, որ «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքի տարածքային ցուցակներով առաջադրվել են գործադիր՝ այդ թվում մարզային իշխանությունը ներկայացնող գրեթե բոլոր պաշտոնյաներն, ինչն ինքնին վարչական ռեսուրսի

օգտագործման լայն հնարավորությունն է ստեղծում, ինչպես և մեկնաբանվել է դիտարկման ընթացքում թեկնածուների կողմից:

6. Զարոգչության խոչընդոտման վերաբերյալ նշել են մի շարք թեկնածուներ: Մասնավորապես՝ Երևան քաղաքի Գարեգին Նժդեհի անվան հրապարակում ոստիկանը չի թույլատրել Հանրապետական կուսակցության բուկլետներ բաժանել: «Սասնա ծռեր» համահայկական կուսակցության թեկնածուն նշել է, որ իրենց հետ հանդիպման մասնակիցներին խոչընդոտել է գործատուն, որը ՀՀԿ անդամ է և աշխատողներին հորդորել է չգնալ հանրահավաքին: «"Գնթունիք" սուլաբերմարկետի մոտ քարոզարշավ իրականացնելիս որոշ անձինք սկսել են սպառնալ [«ԶՈ» ՍԴԿ] թեկնածուներին, պահանջելով, որ հեռանան և խլել են հեռախոսը»: Ինչպես նաև նախընտրական հանրահավաքներից մեկի դիտարկման արդյունքում դիտորդը արձանագրել է, որ «...Հրապարակի մոտ տեղակայված Էին թվով 4 ավտոբուսներ, որոնք սպասարկում են Գլորիա և Գլորիա-Սարտիս կարի ֆաբրիկաներին, այդ ավտոբուսներով աշխատակիցները եկել Էին «Իմ քայլը» դաշինքի հանրահավաքին...»:

Անդրադառնալով դեկտեմբերի 4-ին Ապարան քաղաքում տեղի ունեցած միջադեպին՝ մամուլում տարածվել էր, որ «Գնթունիք» սուլաբերմարկետի հարակից տարածքում խոչընդոտվել էր «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցության քարոզարշավը, որն իրականացնում էին կուսակցության թիվ 7 ընտրատարածքի տարածքային թեկնածուներ Ս. Չախոյանը և Ռ. Դավթյանը: Անհայտ անձինք պահանջում էին վերջիններից հեռանալ տարածքից, ինչպես նաև խոչընդոտել դեպքը տեսագրելուն՝ խփել հեռախոսին, ձեռքից խլել այն: Տարածքում եղել էին նաև ոստիկաններ, որոնք որևէ կերպ չէին միջամտել: Այդ դեպքի վերաբերյալ հարուցվել է քրեական գործ, որը հետազայում կարճվել էր ՀԶԾ կողմից⁶⁰: Կարճման հիմքերը մտահոգության պատճառ են հադիսանում և դա կարող է հետազայում նմանատիպ գործողությունների առաջացման և տարածման դրդապատճառներից մեկը հանդիսանալ:

⁶⁰ «Iravaban.net» էլեկտրոնային կայք, Մարիամ Չախոյանը՝ քարոզարշավի ժամանակ բռնության ենթարկվելու դեպքի ու ՀԶԾ որոշման մասին (<https://iravaban.net/217980.html>)

7. Նախընտրական շտաբերի բացման հետ կապված խնդիրների վերաբերյալ արձանագրվել է 4 ահազանգ: Օրինակ՝ Հանրապետական կուսակցության ներկայացուցիչը նշել է՝ «Շտաբի տարածք չէինք կարողանում վարձակալել մարդիկ հրաժարվում էին հանրապետական կուսակցությանը տարածք տրամադրել»:

Թե՛ քաղաքական ուժերը, թե՛ ընտրողները բազմիցս որպես խնդիր նշել են, որ նախընտրական քարոզչությունը փաստացի սկսել է մինչև նոյեմբերի 26-ը, ինչը սակայն գործող ընտրական օրենսգիրքը չի արգելում քարոզարշավի անցկացումը քարոզչության պաշտոնական ժամանակահատվածից բացի քվեարկության օրը և դրա նախորդ օրը:⁶¹

Քարոզչության փուլում ՉԼՄ մշտադիտարկում

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ պաշտոնական քարոզարշավին նախորդած շաբաթվա ընթացքում որոշ հեռուստատալիքներ ակնհայտ նախապատվություն են տվել որևէ քաղաքական ուժի կամ գործչի, ընդ որում վերջիններս լուսաբանվել են ո՛չ իրենց ինստիտուցիոնալ գործառույթներով: Քարոզարշավի պաշտոնական մեկնարկից հետո հավասարակշռությունը որոշակիորեն վերականգնվել է: Ուշագրավ է, որ սա վերաբերում է միայն հեռուստատալիքներին, և թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք քարոզարշավի փուլում ենթարկվում են հավասար լուսաբանման վերաբերյալ ՀՌԱՀ կարգավորումներին և գտնվում են նրա վերահսկողության տակ:


Անհավասար լուսաբանման դեպքերը քարոզարշավին նախորդած շաբաթվա ընթացքում հատկապես ակնհայտ են եղել «Երկիր Մեդիա» և «Կենտրոն» հեռուստատալիքների եթերում, որոնք գերապատվություն են տվել համապատասխանաբար ՀՀԴ և «Բարգավաճ Հայաստան» կուսակցություններին: Մասնավորապես, «Երկիր Մեդիայի» եթերում ՀՀԴ-ին զգալի եթերաժամանակ է տրամադրել «Հարցեր դաշնակցականներին»

⁶¹ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, Մինչև նախընտրական քարոզչության համար սահմանված ժամանակահատվածի մեկնարկը քարոզչությունն իրավաչափ է, և Ընտրական օրենսգրքի որևէ իրավանորմի խախտում առկա չէ (<https://www.elections.am/news/id-516/>)

հաղորդումը, որը հեռարձակվել է գրեթե ամեն օր և իրենից ներկայացնում էր մոտ 30 րոպեից մինչև մեկ ժամ տևողությամբ հարցազրույց դաշնակցական գործիչների հետ: «Կենտրոն» ԹԻՎի եթերում ԲՀԿ-ի եթերաժամանակը ապահովվել է գերազանցապես ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի մասին պատմող «Մարդ, որը կառուցում է» ֆիլմի ցուցադրության հաշվին: Քարոզարշավի պաշտոնական մեկնարկից հետո ֆիլմը չի ցուցադրվել, փակվել է նաև «Հարցեր դաշնակցականներին» հաղորդումը:

Քարոզարշավի պաշտոնական մեկնարկից հետո բուն քարոզարշավի շրջանակում (բացառելով ինստիտուցիոնալ գործառույթների լուսաբանումը և վճարովի եթերաժամանակը) հեռուստաալիքներում ամենաշատ լուսաբանված ուժերն են «Իմ քայլը», ՀՀԿ-ն և ԲՀԿ-ն: Բոլոր ուժերից դրական տոնայնությամբ ամենաշատը լուսաբանվել է ՀՀԿ-ն, բացասական՝ «Իմ քայլը»:

Քաղաքական ուժերի լուսաբանումը քարոզարշավի ընթացքում



Ընդ որում, «Առաջին ալիքի», «Կենտրոն»-ի և «Շանթի» եթերում ամենաշատը լուսաբանվել է ՀՀԿ-ն (ավելի շատ դրական տոնայնությամբ), «5-րդ ալիքի» եթերում՝ (ավելի շատ դրական, բայց և բացասականի մեծ չափով) և «Արմենիա TV»-ի (գրեթե հավասարապես դրական և չեզոք) եթերում ամենաշատ լուսաբանվել է «Իմ քայլը»: «Երկիր Մեդիայի» եթերում ամենաշատը լուսաբանվել է ՀՀԿ-ն (գերազանցապես դրական և չեզոք):

Քարոզարշավի շրջանակում բոլոր վեց հեռուստաալիքներում ամենաշատ լուսաբանված քաղաքական գործիչը Նիկոլ Փաշինյանն է (գրեթե հավասարապես՝ դրական, բացասական և չեզոք տոնայնությամբ), նրան հաջորդում են Գագիկ Ծառուկյանը և Լևոն Շիրինյանը՝ երկուսն էլ հիշատակվել են գերազանցապես դրական և չեզոք տոնայնությամբ:

Քարոզարշավի շրջանակում հեռուստաալիքներն իրենց եթերաժամանակից որոշակի հատված են տրամադրել ընտրողների իրազեկվածության բարձրացմանն ուղղված տեսանյութերին՝ տրամադրված ԿԸՀ-ի, Ոստիկանության և տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից: Նման տեսանյութերին ամենաշատ ժամանակը հատկացրել է «Առաջին ալիքը», ամենաքիչը՝ «Արմենիա TV»-ն, իսկ «Արարատ»/«5-րդ ալիքը» փրայմ թայմի եթերում դրանք ընդհանրապես չի ցուցադրել:

«Արարատ/5-րդ ալիքի» փրայմ թայմի եթերից դուրս է մնացել նաև քաղաքական ուժերին տրամադրված վճարովի եթերաժամանակը: Վճարովի եթերաժամանակ ամենաշատը տրամադրել է «Կենտրոնը», նրան հաջորդում են «Արմենիա TV»-ն, հետո՝ գրեթե հավասարապես «Առաջին ալիքը» և «Երկիր Մեդիա»-ն, ավելի քիչ՝ «Շանթը»: Վճարովի եթերաժամանակից ամենաշատ օգտված քաղաքական ուժերն են ԲՀԿ-ն, Լուսավոր Հայաստանը և Հանրապետական կուսակցությունը: Երկու կուսակցություն՝ «Քաղաքացու որոշում» ՍԴԿ-ն և «Ազգային առաջընթաց» կուսակցությունը, ընդհանրապես չեն օգտվել վճարովի եթերաժամանակից:

Ինչ վերաբերում է անվճար եթերաժամանակին, այն տրամարվել է միայն «Առաջին ալիքի» եթերում (որը նման պարտավորություն ունի որպես հանրային հեռուստաալիք): Անվճար եթերաժամանակից օգտվել են բոլոր քաղաքական ուժերը (թեև որոշները՝ ոչ լիարժեք):

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ հեռուստաալիքների եթերը, բացառությամբ «Արմենիա TV»-ի և որոշ առումով՝ նաև «Շանթի», բավականին քաղաքականացված է եղել: Քաղաքական իրադարձությունները փրայմ թայմի եթերում ամփոփվել են ինչպես լուրերի թողարկումներով, այնպես էլ հարցազրույցներով, քննարկումներով, բանավեճերով: Մշտադիտարկված

հեռուստաալիքներից բանավեճեր կազմակերպել են Հանրային հեռուստաալիքը (4 քաղաքական գործիչների մասնակցությամբ) և «Արարատ»/«5-րդ ալիքը» (2 քաղաքական գործիչների մասնակցությամբ): «Շանթի» եթերում նախապես հայտարարված բանավեճը տեղի չի ունեցել՝ կողմերից մեկի հրաժարվելու պատճառով: Բացի այդ, 2003թ. հետո առաջին անգամ 2018թ. դեկտեմբերի 5-ին կազմակերպվել է մեծ բանավեճ (Հանրայինի ուղիղ եթերում) ընտրություններին մասնակցող բոլոր քաղաքական ուժերի առաջին համարների մասնակցությամբ, որը տևել է 3.5 ժամ:

Ինչ վերաբերում է առցանց լրատվամիջոցներին, քարոզարշավի լուսաբանումը դրա պաշտոնական մեկնարկից առաջ և հետո հիմնականում չի տարբերվել ո՛չ քաղաքական ուժերին տրված նախապատվությամբ, ո՛չ էլ տոնայնությամբ: Մասնավորապես, նոյեմբերի 19-25-ն ընկած ժամանակահատվածում (բացառելով ինստիտուցիոնալ գործառույթների լուսաբանումը) առցանց լրատվամիջոցներում ամենաշատը հիշատակվել է «Իմ քայլը» (ընդհանուրի մեջ 38%, տոնը՝ առավելապես չեզոք), ՀՀԿ-ն (ընդհանուրի մեջ 27%, տոնը՝ առավելապես դրական) և ԲՀԿ-ն (ընդհանուրի մեջ 9%, տոնը՝ առավելապես չեզոք), իսկ պաշտոնական քարոզարշավի շրջանակում՝ «Իմ քայլը» (40%, հիմնականում դրական), ՀՀԿ-ն (23%, հիմնականում դրական) և ԼՀԿ-ն (11%, գերազանցապես դրական և չեզոք): Ընդ որում, վերջինիս երրորդ տեղում հայտնվելը մեծապես պայմանավորված է 1in.am-ի էջերում հիշատակումներով:

Առցանց լրատվամիջոցներում քարոզարշավի շրջանակում ամենաշատ լուսաբանված քաղաքական գործիչը Նիկոլ Փաշինյանն է, նրան զգալի տարբերությամբ հաջորդում է Էդմոն Մարուքյանը, այնուհետև գրեթե հավասար ցուցանիշով՝ Գագիկ Ծառուկյանը, Դավիթ Շահնազարյանը և Արմեն Աշոտյանը, բոլորն էլ լուսաբանվել են առավելապես դրական տոնայնությամբ:

Facebook սոցիալական ցանցում քարոզարշավը տարվել է քաղաքական ուժերի և գործիչների պաշտոնական, երբեմն նաև անձնական էջերով: Չնայած քարոզարշավի ընթացքում Facebook-ի հայկական տիրույթում տեղ գտած մեծ ծավալով ատելության խոսքին, պաշտոնական էջերը հիմնականում զերծ են

մնացել ոչ կոռեկտ մեկնաբանություններից և սահմանափակվել են իրենց քարոզարշավների մասին տեսանյութերի տարածմամբ: Այնուամենայնիվ, այս սոցցանցում հիմնական քարոզչությունը տարվել է այս կամ այն ուժի տրամադրության տակ եղած կամ նրանց կողմից չվերահսկվող, բայց նրանց սատարող անհատների կամ կեղծ օգտահաշիվների միջոցով:

Քվեարկության դիտարկում

Ինչպես նշվեց, «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը 2018թ. դեկտեմբերի 9-ին դիտորդական առաքելություն է իրականացրել Հայաստանի Հանրապետության 2010 տեղամասերից 300-ում, որոնց վիճակագրական բաշխվածությունը հնարավորություն է տալիս ոչ միայն գնահատել քվեարկության կազմակերպման և անցկացման ողջ ընթացքը, այլև համեմատել Ազգային ժողովի 2017թ. ապրիլի 2-ի ընտրությունների ընթացքում տարբեր վարք և արդյունքներ դրսևորած տեղամասերի արդյունքներն ու վարքագիծը արտահերթ ընտրությունների ժամանակ:

Ընդհանուր առմամբ քվեարկության օրը 300 տեղամասերից մոտքագրվել է տեղեկատվություն շուրջ 2000 խախտման վերաբերյալ, որոնցից առավել տարածվածն են քվեախցիկից դուրս քվեաթերթիկ լրացնելը, քվեախցիկում միաժամանակյա մեկից ավել անձանց գտնվելը և քվեարկության մասին բարձրաձայնելը: 2017թ. 200 տեղամասից ստացվել էին ավելի քան 3000 խախտման մասին դիտարկումներ: Տարածքային ընտրական հանձնաժողովներում դիտարկում իրականացրած դիտորդներն արձանագրել են, որ տեղամասային ընտրական հանձնաժողովներից բերված ընտրական փաստաթղթերի մեծ մասում եղել են անճշտություններ և թերություններ, որոնք վկայում են հատկապես քվեարկության արդյունքների ամփոփման փուլի վերաբերյալ տեղամասային ընտրական հանձնաժողովների անիրազեկության մասին:


Ստորև առանձին բաժիններով ամփոփված է քվեարկության օրը 2010 տեղամասից՝ 300 տեղամասերում և 38 Տարածքային ընտրական հանձնաժողովներից՝ 36-ում իրականացված դիտարկումների արդյունքում լրացված դիտարկման քարտերի տվյալները: Չեկույցում առկա են նաև ուղղակի մեջբերումներ՝ խախտումների դրսևորումների հստակեցման համար:

Քվեարկության նախապատրաստում

Քվեարկության նախապատրաստումը դիտարկելիս՝ դիտորդներն ուսումնասիրել են նաև տեղամասի կահավորումը և մատչելիությունը, որը ներկայացվել է անձին զեկույցով:


Նշենք, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի առավոտյան նիստը լիարժեքորեն դիտարկվել է 299 տեղամասում:

Քվեարկության կազմակերպման առումով, նշենք որ հանձնաժողովի անդամների գործառույթները վիճակահանությամբ չեն սահմանվել դիտարկված 299 տեղամասերից 9-ում, որոնցից մեկում գործառույթները բաշխվել էին դեռևս նախորդ նիստին:




Հանձնաժողովի նիստի ընթացքում նախագահի կողմից սեփական գործառույթներին տիրապետելը և պատշաճ կատարելը դիտորդները բացասական են գնահատել 5 տեղամասում, սակայն միայն մի տեղամասի դեպքում են նշել, որ նախագահին ցուցումներ են տրվել հանձնաժողովի այլ անդամների կողմից: Տեղամասային հանձնաժողովների անիրազեկության մասին է խոսում նաև այն, որ դիտարկված երկու տեղամասում զրոյական տեղեկանքը տպվել է առաջին ընտրողի քվեարկությունից հետո:

Հանձնաժողովի նախագահի գործառույթներին տիրապետելը
(դիտարկված տեղամասեր, %)




Նույն կերպ հանձնաժողովի նախագահը և այլ իրավասու անձինք խախտումների վերաբերյալ գործողություններ չեն ձեռնարկել դիտարկված տեղամասերից 10-ում:

Խախտումների ուղղությամբ գործողություններ ձեռնարկելը
(դիտարկված տեղամասեր, %)



Ուշագրավ է Լոռվա մարզի Լեռնանցք համայնքի 22/25 տեղամասից դիտարկումը. «Իմ քայլը» դաշինքի քվեաթերթիկները չէին տրամադրվել տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից և բերվել է միայն առավուտյան

Նիստի ընթացքում: Չնայած խնդիրը լուծվել է, այն վկայում է տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովի թերացումների մասին:



Ըստ գործող Ընտրական օրենսգրքի՝ քվեարկության գաղտնիության պահպանման նպատակով սահմանված է, որ քվեախցիկում չօգտագործված քվեաթերթիկների համար նախատեսված արկղում քվեարկության մեկնարկից առաջ պետք է դրվի յուրաքանչյուր կուսակցության և կուսակցությունների դաշինքի քվեաթերթիկների 3-5 օրինակ, սակայն դիտարկվող տեղամասերի շուրջ 17% այդ կանոնը չի պահպանվել:


Քվեարկության ընթացքում իրադրություններ տեղամասերի շրջակայքում

2018թ. դեկտեմբերի 9-ին ժամը 8:00-20:00 դիտարկվել է նաև 300 տեղամասերի շրջակայքը: Ըստ այդ դիտարկումների արձանագրվել է հետևյալ իրավիճակը:

Ընտրողներին որևէ կուսակցության/դաշինքի օգտին կողմնորոշող միջոցառումները եղել են դիտարկված տեղամասերի 18%-ում:

Տեղամասային կենտրոնի շուրջն ընտրողներին որևէ կուսակցության/դաշինքի օգտին կողմնորոշող միջոցառումներ
(դիտարկված տեղամասեր, %)

- Ոչ
- Զարոգչական պաստառներ և/կամ այլ տպագիր նյութեր
- Հորդորներ, այլ բանավոր քարոզչություն



Այդ թվում.

- 45 տեղամասի շրջակայքում եղել են «Իմ քայլը» դաշինքի օգտին
- 16 տեղամասի շրջակայքում եղել են «Բարգավաճ Հայաստան» կուսակցության դաշինքի օգտին
- 14 տեղամասի շրջակայքում եղել են «Լուսավոր Հայաստան» կուսակցության օգտին
- 8 տեղամասի շրջակայքում՝ ՀՀԴ օգտին
- 7-ական տեղամասերի շրջակայքում՝ «ՄԵՆԶ» դաշինքի օգտին և «Սասնա ծռեր» համահայկական կուսակցության օգտին
- 6 տեղամասի շրջակայքում՝ ՀՀԿ օգտին:

Դիտարկումներից պարզ է դառնում, որ մեծամասամբ խոսքը գնում է այս կամ այն կերպ տեղակայվող տպագիր նյութերի մասին, որոնք հնարավորության դեպքում հեռացվում էին և իրավիճակը զգալիորեն շտկվել է օրվա երկրորդ կեսին: Միաժամանակ նշենք, որ տեղամասային կենտրոնների շուրջ 7% շրջակայքում դիտարկվել է վստահված անձանց կողմից բանավոր հորդորներ կամ որպես ուղղորդում ընկալվող վարք՝ «Բարգավաճ Հայաստան»


կուսակցության, «Իմ քայլը» դաշինքի, «ՄԵՆԶ» դաշինքի և ՀՀԴ կուսակցության օգտին: Նշենք, որ եթե նախորդ տարի կարելի էր հանդիպել անթաքույց շանտաժի դեպքեր (Օր.՝ «Եթե իմ ուզածով չանեք, նպաստները կկտրեմ» Ոսկետափ համայնքի ղեկավարը՝ ընտրողներին), ապա այս անգամ դիտարկված առավել կոպիտ բանավոր ուղորդումը եղել է վստահված անձի կողմից, նույնպես Արարատի մարզում՝ իր կուսակցությունը (ԲՀԿ) չընտրելու դեպքում քվեաթերթիկները անվավեր ճանաչելու մասին պնդումը:

Եթե նախորդ ընտրություններին դիտարկված 200 տեղամասերի 6%-ից ստացվել են տեղեկություններ ընտրակաշառք առաջարկելու կամ տալու կասկածանքի մասին, այս ընտրություններին դիտարկված 300 տեղամասերից նման դեպքի մասին տեղեկություններ ստացվել են ընդամենը 2 տեղամասից: Նշված դեպքերից մեկի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվություն առկա չէ, իսկ մյուսի դեպքում դիտորդն արձանագրել է, որ ՀՀԿ-ի հետ ասոցացվող անձն ուղեկցել է ընտրողին և օգնել քվեարկել, իսկ տեղամասից դուրս ինչ-որ բան է փոխանցել նրան:

Միաժամանակ, հնարավոր չէ պնդել, որ պատկերը նույնն էր նաև չդիտարկված տեղամասերում: Այսպես, ըստ շրջիկ խմբերից մեկի դիտարկումների. Չարենցավանի 27/28 տեղամասում տարեց մի կին տեղամաս էր եկել ՀՀԿ քվեաթերթիկի նմուշով, որի վրա V նշան է եղել Պողոսյան Սևակյան թեկնածուի անվան դիմաց: Ընտրողը դիտորդին նախ ասել է, թե նմուշը տվել են ՀՀԿ շտաբում, այնուհետև, թե այն իրեն տվել են «ինտերնատում, որում սնվում է»:

Որոշ տեղամասերում դիտորդները նկատել են միևնույն մեքենաներով կամ միկրոավտոբուսով/ավտոբուսով ընտրողներին տեղամաս տեղափոխելու դեպքեր: 2017 թ. դիտարկված տեղամասերի շուրջ 17% փոխարեն այս տարի իրավիճակը դիտարկվել է տեղամասերի 4.3% դեպքում:

Մարդկանց խմբերով երթուղային տաքսիներով կամ այլ մեքենաներով տեղափոխում տեղամասային կենտրոն (դիտարկված տեղամասեր, %)



- 1 տեղամասի շրջակայքում նկատվել է զինճառայողների տեղափոխություն
- ևս 1-ում՝ հարակից հանրակացարանից տեսանելի հաշմանդամություն ունեցող անձանց տեղափոխություն
- 3 դեպքում ընտրողների տեղափոխությունը հնարավոր էր հստակ կապել ընտրվող սուբյեկտների վստահված անձանց հետ: «Լուսավոր Հայաստան» կուսակցության և «Սասնա ծռեր» համայնական կուսակցության վստահված անձինք մեկական դեպքում ուղեկցել են ավտոբուս/միկրոավտոբուս, որոնցով բերվել են ընտրողներ: Ընդհանուր առմամբ գրանցվել է նման 33 դեպք: Հաշվի առնելով տեղամասերի աշխարհագրական և ժամանակագրային բաշխվածությունը, հնարավոր է խոսել համակարգված գործունեության բացակայության և անհատ դերակատարների սեփական նախաձեռնության մասին:

Որոշակի համակարգվածություն դիտարկվել է շրջիկ խմբի կողմից Կոտայքի մարզի Չովունի համայնքում.


*Կոտայքի մարզի Չովունի համայնքի 27/09 տեղամաս
10-15 մեքենա մշտապես կայանված էին տեղամասի դիմաց, զգալի մասը ակնհայտորեն ԲՀԿ-ին հարող մարդիկ էին: Տոյոտա մակնիշի մեքենան գնում էր*

ԲՀԿ տարածքային թեկնածու՝ Հայրապետյան Ջանիբեկի շտաբ, և մարդիկ էր քերում: Նույն մեքենաները պտտվում էին շոփունիում առկա երեք ընտրական տեղամասերով: ԲՀԿ-ի վստահված անձինք չէին կրում իրենց վկայականները

*Արմավիրի մարզի Հայթաղ գյուղում 15/38 տեղամասում
Տոյոտա մակնիշի ավտոմեքենան պարբերաբար գտնվել է տեղամասի բակում, որի շուրջ հավաքված են եղել երիտասարդներ: Ոստիկանությունը նրանց մի քանի անգամ հեռացրել է, սակայն նրանք կրկին վերադարձել են: «Անկախ դիտորդը» ահազանգել է ՀՀ Ոստիկանության շտաբի թեժ գիծ:*

Տեղամասերի շրջակայքում մարդկանց կուտակումներն առաջացել են թե՛ ընտրողների հերթերի գոյացման՝ տեղամասային կենտրոնների ոչ բավարար տարածքի, թե՛ քվեարկելուց հետո չհեռանալու կամ ընտրող չհանդիսացող անձանց կողմից տեղամասերի շրջակայքում գտնվելու հետևանքով:

Դեպի տեղամասային կենտրոն տանող ճանապարհներին կամ հարող տարածքում մարդկանց կուտակումներ (դիտարկված տեղամասեր, %)




Եթե 2017թ. տեղամասերից 50 մետր շառավիղով կուտակումները դիտարկվել էին 40% դեպքում, ապա այս անգամ՝ 10.8%, ինչին սակայն ավելանում է ևս 9.8%, երբ կուտակումները գոյանում էին 50 շառավիղից դուրս, բայց տեղամասային կենտրոն տանող ուղու վրա: Կուտակումները հիմնականում հաճախակի բնույթ չեն կրել և կրկնվել են օրվա ընթացքում մինչև 3 անգամ: Որոշ դեպքերում կուտակումները ստեղծում էին ուղղորդման ռիսկեր, սակայն ծառայությունն իրականացնող ոստիկանի միջնորդությամբ դրանք վերացվում

Էին: Նշենք, որ ոստիկանության ծառայողները գործողություններ էին ձեռնարկում հիմնականում հանձնաժողովի նախագահի հորդորից հետո, նախագահն էլ, հիմնականում, դիտորդի հորդորից հետո:

Քվեարկության ընթացքում իրադրությունը տեղամասում

Էլեկտրոնային գրանցման սարքերի հետ կապված կրկին խնդիրներ եղել են դիտարկված տեղամասերի գերակշռող մասում, սակայն նախորդ տարվա 78% փոխարեն խնդիրները արձանագրվել է 61.3% տեղամասերում, ընդհանուր 1416 դեպք:



Արձանագրված հիմնական խնդիրներն են եղել.

- սարքը դժվարությամբ է ընթերցել անձը հաստատող փաստաթղթերը,
- սարքը դժվարությամբ է ընթերցել մատնահետքերը,
- սարքը վառել է դեղին ազդանշանը, սակայն տվյալները ձեռքով մուտքագրելուց հետո՝ կանաչը:

69 տեղամասում (23%) խնդիրները կրկնվում էին 10 անգամից ավել, որոնց բացարձակ մեծամասնությունը կապված է եղել ոչ կենսաչափական անձնագրերի ընթերցման բարդությունների հետ:

Նոյմբերի 23-ից, ինչպես հաղորդում է ԿԸՀ-ն, կազմակերպվել են ընտրողների էլեկտրոնային գրանցման սարքերի ստուգման և կոմպլեկտավորման աշխատանքներ, ինչի արդյունքում վերացվել են առանձին տեխնիկական և ծրագրային թերությունները, փոխարինվել են շարքից դուրս եկած մարտկոցները: Ըստ ԿԸՀ տվյալների, ընտրությունների օրը խնդիրներ են ծագել միայն 39 տեխնիկական սարքավորման գործարկման հետ: Ստացվում է, որ տարբեր փաստաթղթերի դժվար ընթերցումը սարքերի շահագործման ընթացքում չի դիտարկվում որպես խնդիր:

Հավանաբար այս խնդիրները կլուծվեն, եթե քվեարկությունն իրականացվեր միայն նույնականացման քարտերով, որոնց ընթերցման հետ կապված խնդիրներ չեն արձանագրվել:


Դիտարկված տեղամասերից 5-ում արձանագրվել է դիտորդի կամ վստահված անձի հեռացնելու դեպք: Այդ անձինք հիմնականում հեռացվել են ընտրողներին ուղղորդելու, վկայականը չկրելու կամ այլ խախտումների համար: 1 դեպքում դա եղել է այլ դիտորդական կազմակերպության դիտորդ, որը ցանկանում էր գրանցվել որպես օգնող: Միայն 1 տեղամասում է անձը հեռացվել օրենքով սահմանված քվեարկությամբ:

Երևանի 6/8 տեղամասային կենտրոնում հանձնաժողովի նախագահը խոչընդոտել է «Անկախ դիտորդի» ներկայացուցչի աշխատանքը, երբ դիտորդն արձանագրել է բաց քվեարկության դեպք, ընտրատեղամասում՝ ընտրողների և դրսում՝ մեքենաների կուտակումներ, և հանձնաժողովի նախագահին առաջարկել է արձանագրել և վերացնել խախտումները: Դրան ի պատասխան՝ հանձնաժողովի նախագահը սպառնացել է դուրս հրավիրել դիտորդին ու վիրավորական արտահայտություններ է հնչեցրել նրա հասցեին: Տեղամասային կենտրոնից դիտորդին հեռացնելը կանխվել է Տարածքային ընտրական հանձնաժողովին ահազանգելուց հետո. դիտորդին հեռացնելու որոշումը վերացվել է:

2017 թ. ԱԺ ընտրությունների համեմատ կտրուկ բարելավվել են ընտրական ցուցակները, եթե այդ ժամանակ խնդիրները արձանագրվել էին

գրեթե բոլոր տեղամասերում, այս ընտրություններին դիտարկված տեղամասերի 83% -ում նման խնդիրներ ի հայտ չեն եկել:

Ընտրացուցակների հետ կապված խնդիրներ
(300 ընտրատեղամասում գրանցված դեպքեր)




Ըստ դիտարկումների, անձանց անվան բացակայության դեպքերում խնդիրը լուծվել է անձնագրային բաժնի միջոցով, սակայն ընտրողների մի մասը պարզապես նախընտրել է չմասնակցել քվեարկությանը: Այլ անձի փոխարեն ստորագրությունների (6%) բացարձակ մեծամասնությունը եղել է հենց տեղում նույն ընտանիքի անդամների միմյանց փոխարեն ստորագրելու կամ հարակից վանդակներում ստորագրելու դեպքեր: Հարկ է նշել, որ հանձնաժողովը տվյալ դեպքերում պատշաճ գործողություններ չի իրականացրել, երբեմն դեպքերը չեն արձանագրվել, ինչի արդյունքում անհնար է դառնում ստուգել՝ առկա՞ է եղել այլ անձի փոխարեն քվեարկելու փորձ, թե՞ անզուլուրյամբ/անփութությամբ այլ անձի փոխարեն ստորագրելու դեպք:

Կտրուկ նվազել է նաև ընտրողների ստորագրած ցուցակին ծանոթանալու և չքվեարկած ընտրողների մասին տեղեկությունները այլ անձանց փոխանցելու դեպքերը:

Ընտրողների ստորագրած ցուցակներին ծանոթանալով չքվեարկած քաղաքացիների մասին տեղեկությունների հավաքագրում և/կամ փոխանցում այլ անձանց

(դիտարկված տեղամասեր, %)



Արձանագրվել է 4 նման դեպք. մեկական դեպքում տեղեկություններ էին հավաքում «ՄԵՆԲ» և «Իմ քայլ» դաշինքների վստահված անձինք, մեկ դեպքում «Ծառուկյան» կուսակցությունների դաշինքից ներկայացված հանձնաժողովի անդամը, ևս մեկ հանձնաժողովի անդամ ծանոթանում էր ցուցակներին, սակայն տեղեկությունների փոխանցման փորձ չի արձանագրվել: Գործողությունները կանխվել են հանձնաժողովի նախագահի կողմից միայն դիտորդների հորդորներից հետո:

Օր. Իջևանի 38/26 տեղամասում Իմ Բայլը դաշինքի, վստահված անձը հեռախոսով բանավոր հաղորդում էր ինչ որ մեկին: Դիտորդը դիմել է նախագահին, նա նախազգուշացրել է վստահված անձին: Դրանից հետո նա ներողություն է խնդրել և դադարեցրել այդ գործընթացը:


Օր. Երևանի 8/37 տեղամասում

Անհայտ անձը մի քանի անգամ ներս է մտել քվեասենյակ, հանձնաժողովի նախագահից ճշտել է ընտրողների մասնակցության թիվը, շփվել հանձնաժողովի անդամների հետ: Վերջինս չի կրել որևէ վկայական:

Ինքնուրույն քվեարկել չկարողանալու պատճառով օգնելու դեպքերի բացարձակ մեծամասնությունում որպես օգնող մատնանշվող անձի տվյալները

շուրջ 95% դեպքերում գրանցվել է գրանցամատյանում: Սակայն հարկ է նշել, որ 7 տեղամասում գրանցվել են դեպքեր, երբ օգնող անձը որևէ կերպ չի հետաքրքրվում իրեն հրավիրած անձի ցանկությունով:

Ինքնուրույն քվեարկելու կարողություն չունեցող անձանց քվեախցիկում օգնողների տվյալները գրանցամատյանում գրանցվում են
(դիտարկված տեղամասեր, %)



Պատկերավոր օրինակ կարելի է տեսնել Լոռու մարզի Գոգարան համայնքի 22/10 տեղամասում.

Ընտրողի օգնողը փորձել է նշել այլ թեկնածուի, «տատիկի ասած թեկնածուին չգտնելու պատճառով»: Հանձնաժողովի նախագահը փոխել է օգնողին, դուրս է հրավիրել նախկին օգնողին: Տատիկին տրվել են լրացուցիչ քվեաթերթիկներ, հին քվեաթերթիկները մարվել են՝ առանց նայելու և նոր օգնողն է օգնել:

Որպես կանոն օգնող անձինք ոչ թե հրավիրվել են քվեախցիկ ինքնուրույն քվեարկել չկարողացող ընտրողի կողմից, այլ ի սկզբանե եկել են ընտրողի հետ և ուղեկցել նրան դեպի քվեախցիկ: Միաժամանակ այդ անձը հաճախ չի հանդիսացել նույն տեղամասի ընտրողը: Փաստացի օգնողների մի մասը չի ունեցել տեղամասում գտնվելու իրավունք և չէր կարող հրավիրվել քվեախցիկ, սակայն հանդուրժվել է՝ պրակտիկայում ձևավորելով տեղամասում գտնվողների իրավունք ունեցող անձանց նոր կատեգորիա:


Այս պրակտիկայի բացասական արդյունքների պատկերավոր օրինակ է շրջիկ խմբերից մեկի դիտարկված դեպքը.

Արագոծոտնի մարզ, ք. Աշտարակ

Յոգեկան առողջության խնդիրներ ունեցող ընտրողի հետ եկել էր մի տղա, ով որպես ընտրող գրանցվելով, ընտրողի փոխարեն կատարել է քվեարկության բոլոր քայլերը, քվեարկել է, իսկ ընտրողը միայն նրան հետևել է: Չնայած, որ այդ տղան արդեն գրանցվել էր 17/01 տեղամասում, նա կրկին գրանցվել է որպես օգնող նաև 17/03:


Երեք տարբեր տեղամասերում [3-րդ տեղամասի համարը պարզ չէ] նույն անձը եկել է որպես օգնող, այնուհետև որպես ՕԵԿ-ի վստահված անձ գտնվել է 17/2 տեղամասում:

Մի քանի անձի միաժամանակյա մուտքը քվեարկության խցիկ /չի վերաբերում մանուկներին և որպես օգնող գրանցված անձանց/
(դիտարկված տեղամասեր, %)



Օգնությամբ քվեարկելու գրանցված դեպքերից բացի մեկից ավելի անձանց կողմից քվեախցիկ մտնելու և քվեաթերթիկները քվեախցիկից դուրս լրացնելու կամ ծրարի մեջ դնելու դեպքեր/փորձեր եղել են դիտարկված տեղամասերի շուրջ 40%-ում, հիմնականում դա տարեցների, հարազատների, տեսողության խնդիրներ ունեցող անձանց կողմից շփոթության և քվեարկության կարգը չհասկանալու արդյունք էր: Մեծամասամբ դեպքերը կանխվել կամ շտկվել են հանձնաժողովի կողմից:

Քվեաթերթիկները քվեախցիկներից դուրս լրացնելու/ծրարի մեջ դնելու դեպքեր
(դիտարկված տեղամասեր, %)




Այնուամենայնիվ, գրանցվել է 21 դեպք, երբ քվեախցիկում հայտնվող երկրորդ անձն իրեն անվանում էր «օգնող», սակայն հրաժարվում էր գրանցվել: Որոշ դեպքերում հանձնաժողովի նախագահը դրա վերաբերյալ պատշաճ գործողություններ չի իրականացրել:

Օր. Կոտայքի մարզի Ալափարս գյուղի 27/14 տեղամասում

Ներկայանում են որպես գրանցված, սակայն մատյանում նրանց անունները չկան: Նախագահին տեղյակ պահելուց հետո, գրանցվել են, բացառությամբ մեկ դեպքի: Անձը դրանից առաջ նկատվել էր ՀՀԿ-ի վստահված անձի հետ շփվելուց: Առանց գրանցվելու օգնել էր երկու հոգու: Դրա մասին տեղեկացվել է նախագահը, սակայն մատյանում դա չի գրանցվել:

Քվեարկության մասին այս կամ այն եղանակով բարձրաձայնելու դեպքերի առումով վիճակագրությունը գրեթե չի փոփոխվել, 2017 թ. դիտարկվող տեղամասերի 31% դեպքերի փոխարեն 2018 թ. ԱԺ ընտրությունների ընթացքում նման փաստեր դիտարկվել է տեղամասերի 29%:

Ընտրողների կողմից քվեարկելուց հետո քվեարկության մասին այլ անձանց տեղեկացնելու կամ ուղղակի բարձրաձայնելու դեպքեր
(դիտարկված տեղամասեր, %)



Դիտարկումներից պարզ է, որ դեպքերից

- 24-ում ընտրողները բարձրաձայնում էին, որ քվեարկել «Իմ քայլը» դաշինքի օգտին
- 4-ում՝ Բարգավաճ Հայաստան կուսակցությանը
- 4-ում՝ Հայաստանի հանրապետական կուսակցությանը

Օր.՝ Երևանի 6/10 տեղամասում

Մի հոգի քվեարկելուց հետո ասել է. «Ես արել եմ իմ քայլը» և դուրս է եկել: Հանձնաժողովից էլ արձագանքեցին. «Լա՛վ ես արել»:

Օր.՝ Լոռվա մարզի Սարչապետ համայնքի 25/22 տեղամասում

Մի քանի տարեց. «Ընտրենք Նիկոլին, թռչակները բարձրանան, հոգնել ենք ՀՀԿ-ից»

Օր.՝ Արագածոտնի մարզի Արագածավան համայնքի 18/30 տեղամասում

Մի անձ մինչ քվեարկությունը հայտարարել է, որ քվեարկելու է ԲՀԿ-ի օգտին, այնուհետև քվեախցիկից դուրս է եկել առանց քվեաթերթիկը ծրարի մեջ դնելու և փորձել է ցույց տալ հանձնաժողովի անդամին:

Օր.՝ Թալին քաղաքի 18/24 տեղամասում

Ընտրողը հեռախոսը ցույց է տվել ՀՀԿ վստահված անձին, վերջինս շնորհակալական ժեստով ճանապարհել է ընտրողին

Դիտարկվել է ևս մի քանի դեպք «Ազգային առաջընթաց» կուսակցության և «Զրիստոնյա-ժողովրդական» վերածնունդ կուսակցության օգտին քվեարկելու մասին: Մնացած դեպքերի նկարագրությունը կամ բավարար չէ այս կամ այն քաղաքական ուժը մատնանշելու համար, կամ վերաբերվում է այն դեպքերին, երբ ազգակից, հարևան ընտրողները միմյանց հետ խորհրդակցում էին «քվեախցիկից քվեախցիկ», կամ ցանկանում էին քվեախցիկ տանել քվեաթերթիկներից միայն մեկը (այս պրակտիկան նույնպես մեծամասամբ վերաբերվել է «Իմ քայլը» դաշինքին): ԲՀԿ, ՀՀԿ և «Իմ քայլը» դաշինքի վստահված անձանց քվեարկության գաղտնիությունը խախտելու մեկական դեպք է գրանցվել: Ըստ դիտարկումների, որևէ քաղաքական ուժի օգտին քվեարկելու մասին միտումնավոր բարձրաձայնումը կրել է ավելի շուտ ցուցադրական բնույթ և նպատակ չի հետապնդել քվեարկության վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու որևէ անձի: Կարելի է ասել, որ դեպքերը որոշ իմաստով նկարագրում են ընտրական գործընթացների կարգավորումներին հակասող կարծրատիպային, կենցաղավարական ընտրական մշակույթը՝ ինքնավկայություն կամարտահայտման մասին:

Օր.՝ Երևանի 9/43 տեղամասում

Տեղամասային կենտրոնի ներքևի հարկում երկու կին բանավիճում էին, թե ինչո՞ւ է նրանցից մեկը քվեարկել ՀՀԿ-ի օգտին:

Օր.՝ Երևանի 6/8 տեղամասում

«Իմ քայլը» դաշինքի ներկայացուցչի հետ ներս մտած Նոր յառաջ թերթի ներկայացուցիչը քարոզում էր, որ պետք է հեղափոխությունը հասցնել վերջնակետին: Դիտորդի հետ ընդհարման մեջ է մտել, հանձնաժողովի նախագահը միջամտել և կարգավորել է իրավիճակը:

Տեղամասային կենտրոնի ներսում քարոզչական նյութերով, կոչերով կամ ուղղորդող այլ միջոցառումներով ընտրողների կամարտահայտման վրա

Ներագդելու դեպքերը դիտարկվել են տեղամասերի 5.7%, նախորդ տարվա 11% համեմատ:



Դիտարկված տեղամասերից 11-ում քարոզչական միջոցառումներ կամ ուղղորդում եղել է «Իմ քայլը» դաշինքի օգտին: 2 դեպքում այն իրականացվել է վստահված անձանց, 1 դեպքում որպես «Նոր Յառաջ» թերթի լրագրող ներկայացած, սակայն կարգավիճակ չունեցող անձի և 1 դեպքում հանձնաժողովի նախագահի բանավոր կոչերի միջոցով: Քարոզչության մնացած դեպքերը վերաբերում են ընտրողների մոտ եղած քարոզչանյութերին կամ «Իմ քայլը» դաշինքի հետ ասոցացվող կարգախոսներ հնչեցնելուն և ՀՀԿ, ՍԾՀԿ, ԲՀԿ և ՀՀԴ կուսակցությունների վստահված անձանց կուսակցական խորհրդանիշ կրելուն: Մեկ դեպքում հանձնաժողովի անդամը քվեարկելու կարգը բացատրելիս, որպես օրինակ, պարբերաբար օգտագործել է ԲՀԿ-ի քվեաթերթիկը: Եւս մեկ դեպքում ի օգուտ ՀՀԿ-ի հնչող բանավոր կոչ են գնահատվել ընտրողի խոսքերը:


Օր.՝ Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի 27/38 տեղամասում
Պռոշյանի Էլեկտրոցանցի տնօրենը, ով որպես օգնող էր ներկա տեղամասում,
չարաշահելով իր հեղինակությունը շփվում էր ընտրողների հետ և

Օր՝ Կոտայքի մարզի Արգել գյուղի 27/33 տեղամասում

Չինժառայողները քվեաթերթիկներն ստանալուց հետո արդեն իսկ հերթի մեջ առանձնացրել են «Իմ քայլը» դաշինքի քվեաթերթիկը: «Անկախ դիտորդ» դաշինքի ներկայացուցիչները զգուշացրել են հանձնաժողովի նախագահին, որ հայտարարությունն անի դրա մասին և կանխի մինչ քվեախցիկ մտնելը քվեաթերթիկների առանձնացումը:

Ի տարբերություն 2017 թ. ԱԺ ընտրությունների՝ դիտորդական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից նման գործողությունների իրականացում չի արձանագրվել:

Ներկա գտնվելու իրավունք չունեցող որևէ անձ գտնվել է տեղամասային կենտրոնում
(դիտարկված տեղամասեր, %)



Քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձանց ներկայությունը գրանցվել է դիտարկված տեղամասերի 23.7%-ում:

- Արձանագրվել է անհայտ անձանց ներկա գտնվելու 24 դեպք: Այս անձանց մեծ մասը հեռացվել է հանձնաժողովի նախագահի միջամտությամբ և չի պարունակել ընտրողների վրա ներազդելու տարրեր,

սակայն նկատվել են նաև հեռանալ հրաժարվող և վիճաբանությունն սադրող անձինք, ինչպես նաև թաղային հեղինակություններ:

Օր.՝ Երևանի 8/21 տեղամասում

Մեկ անհայտ անձ մի քանի անգամ ներս ու դուրս է արել՝ պատճառաբանելով, որ տատիկին է սպասում, սակայն տեղամասում այդ պահին տարեց կին չի եղել: Տվյալ անձը նաև զրուցել է «Միացյալ առաջնորդների պալատի» դիտորդի հետ, որը նրան պատմել է տեղամասում տեղի ունեցած վիճաբանության մասին: «Անկախ դիտորդ» դաշինքի դիտորդի պահանջով հանձնաժողովի քարտուղարը փորձել է պարզել անձի ինքնությունը, սակայն վերջինս՝ տեղամասում և շրջակայքում կես ժամ անցկացնելուց հետո հեռացել է:

Հիշատակվող վիճաբանության նկարագրություն.

Իմ քայլը դաշինքի վստահված անձը պնդում էր, որ ընտրողներից մեկը 2 ժամ առաջ եկել է տեղամաս և ճշտել ընտրողների քանակը: «Մենքի» վստահված անձը պնդում էր, որ նման արտաքինով, բայց այլ հագուստով անձ տեսել է: Ընտրողը հերքում էր: Միացյալ առաջնորդների պալատի դիտորդը պաշտպանում էր ընտրողին: Հանձնաժողովի նախագահը չէր կարողանում կառավարել իրավիճակը: Ակնհայտ էր, որ տվյալ դիտորդը և ընտրողը ճանաչում էին միմյանց՝ երկուսն էլ այդ թաղամասից էին և հանձնաժողովի գրեթե բոլոր անդամները ճանաչում էին նրանց: Դաշինքի դիտորդը ենթադրում է նաև ենթադրում է, որ տվյալ դիտորդը (Վահրամ Միրզոյան) նաև թաղային հեղինակություն կարող է լինել. նա ինքն իր խոսքում համապատասխան արտահայտություններ է օգտագործել:

• Նույն քաղաքական ուժի 3-րդ և ավելի վստահված անձանց ներկա գտնվելու կամ ներկա գտնվելու փորձի 21 դեպք, որոնց գրեթե կեսը վերաբերել է «Իմ քայլը» դաշինքի վստահված անձանց: Ուշագրավ է, որ արձանագրվել են դեպքեր, երբ վստահված անձ ներկայացող և վկայական ներկայացնող անձինք ըստ նպատակահարմարության փոխում էին կարգավիճակը կամ հավատարմագրող քաղաքական

ուժը/կազմակերպությունը, ինչը չի հանդիսանում ընտրական կարգավորումների ուղղակի խախտում, սակայն չի կարող նաև չմտահոգել:

Օր.՝ Կոտայքի մարզի Չովունի համայնքի 27/10 տեղամասում

«Իմ քայլից» եկել է երեք վստահված անձ, նրանցից մեկը դուրս է հրավիրվել, սակայն վերադարձել է «Օրինաց երկիր» կուսակցության վստահված անձի վկայականով, պատճառաբանելով որ շփոթել է բեյջը:

Օր.՝ Երևանի 9/6 տեղամասում

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձ ներկայացավ: Դիտորդը ասաց, որ իրավունք չունի, քանի որ արդեն 3-րդն է: Այնուհետև վստահված անձը հանեց երկրորդ բեյջը ու գրանցվեց որպես դիտորդ [Դեպքի նկարագրությունից պարզ չէ, թե ո՞ր դիտորդական կազմակերպության անունից էր հավատարմագրված անձը]:

Օր.՝ Երևանի 1/18 տեղամասում

Անձը, ով ներկայացավ որպես «պարոն Բարսեղյան», առանց վկայականի մոտեցավ գրանցամատյանին, սկսեց հանձնաժողովի նախագահին ու քարտուղարին ցուցումներ տալ: Քարտուղարն ասաց, որ տարածքայինի նախագահն է, ով որպես ընտրող է եկել: Հարցին, թե ով է, ասաց. «նախագահն եմ, հարց են տալիս, պատասխանում եմ»: Հեռանալուց հետո հանձնաժողովի նախագահն ասաց, որ իրենց սեմինարավարն է [ԿԸՀ կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացի դասընթացավար], անհասկանալի հարց ունեին գրանցամատյանի հետ կապված և դիմել էին պարզաբանման: Որոշ ժամանակ անց անձը վերադարձավ երկրորդ անգամ ու փորձել պարզաբանում ստանալ, թե ինչո՞ւ է դիտորդը արձանագրություն կազմել իր վերաբերյալ: Այս անգամ անձը եկել էր ՀՀԿ վստահված անձի վկայականով:

Տեղամասերից մեկում արձանագրվել է վստահված անձանց վկայականների հետ կապված ևս մի դեպք, որի նկարագրությունը մեջբերում ենք ամբողջությամբ.

Օր.՝ Երևանի 1/10 տեղամասում


«Իմ քայլը» դաշինքի 2 վստահված անձ ցանկանում էին մտնել քվեարկության սենյակ [երկուսը արդեն ներսն էին], նախագահը զգուշացրեց, ասացին որ «վերադասից են», մեկը հանեց գրպանից բեյջը, նորից դրեց գրպանը, վիճաբանությունն եղավ, քաշքշոց, բեյջը ճղվեց, անձինք հեռացան: Նախագահը գրանցեց խախտումը: Անձը նորից վերադարձավ 31 լրագրողի և օպերատորի հետ և բողոքում էր, որ իրեն թույլ չեն տվել ներս մտնել՝ իբրև փոխարինելու: Բայց ներկա նախորդ երկուսը գնալու մտադրություն չեն ունեցել: Պատճառաբանել են, որ կուտակումների պատճառով են եկել, սակայն կուտակումներ չեն եղել: Չուզահեռ ներկա են եղել ԵԱՀԿ դիտորդներ: «Իմ քայլը» դաշինքի ներկայացուցիչները ԵԱՀԿ դիտորդներին ասել են, որ մեդիային դիտորդներն են կանչել: Դիտորդներին մեղադրել են նրանում, որ նկարահանում են և որը վիճաբանության պատճառ է դարձել: Այս ամենը գրանցվել է մատյանում:

Քվեարկած, սակայն տեղամասի տարածքը չլքող ընտրողների ներկայությունը դիտարկվել է 19 դեպքում: Արձանագրված բոլոր դեպքերում քաղաքացիները հեռացել են հանձնաժողովի նախագահի հորդորով:

- 6 դեպքում քվեասենյակում գտնվելու իրավունք չունեցող պաշտոնյաներ կամ թեկնածուներ են եղել, որոնք լքել են տեղամասային կենտրոնի տարածքը հանձնաժողովի նախագահի հորդորով: Դեպքերի նկարագրությունից կարելի է եզրակացնել, որ 2 թեկնածու և մեկ գյուղապետ չեն տիրապետել գործող ընտրական օրենսդրությանը և տեղյակ չեն եղել սեփական լիազորություններից: Եւս մի դեպքը վերաբերում է գորամասի հրամանատարին, որը քվեասենյակում գտնվելով «համակարգում էր» զինծառայողների քվեարկության ընթացքը, ինչով միաժամանակ իր վրա էր վերցնում հանձնաժողովի նախագահի լիազորությունները և «վերահսկում» զինծառայող-ընտրողների քվեարկությունը:

- 8 դեպքում վկայականը չներկայացնող անձինք, որոնք կապ էին պահպանում կուսակցությունների/դաշինքների վստահված անձանց հետ, պարբերաբար այցելում էին նրանց, ազատ ելումուտ էին անում տեղամաս առանց հանձնաժողովի նախագահին տեղյակ պահելու կամ գրանցվելու:

- Եւս 6 դեպքում նույն տեղական դիտորդական կազմակերպության 2 կամ ավելի և 2 դեպքում միջազգային դիտորդական կազմակերպության 3 և ավելի դիտորդներն էին: Մասնավորապես «Իրավական մշակույթի զարգացման ինստիտուտ» և «Աբովյանի ուսանողական խորհուրդ» կազմակերպությունների և «Իրազեկ և պաշտպանված ընտրող» նախաձեռնության երկու դիտորդներից մեկը, ով հավատարմագրված էր նույն կազմակերպության անունից, ինչպես տեղամասում գտնվող «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի դիտորդներից մեկը:



Քվեարկության սենյակում գտնվելու իրավունք ունեցող անձանց կողմից վկայականը տեսանելի չկրելու դեպքեր արձանագրվել են դիտարկված տեղամասերից 28%-ում, նախորդ ԱԺ ընտրությունների 61%-ի փոխարեն:


Շուրջ 60 դեպքում վկայականը տեսանելի չեն կրել վստահված անձինք.

- 22-ը՝ ԲՀԿ-ից
- 15-ը՝ «Իմ քայլը» դաշինքից
- 7-ը՝ ՕԵԿ-ից

- 6-ը՝ ՀՀԿ-ից
- 5-ական դեպք ՀՀԿ և «ՄԵՆԸ» դաշինքի վերաբերյալ
- 3-ական դեպք ՍԾՀԿ և ՀՀԴ վերաբերյալ
- 2-ը՝ ՀԶԺԿ-ի:

Երեք դեպքում վկայականը տեսանելի չեն կրել «Աբովյանի ուսանողական խորհուրդ» կազմակերպության դիտորդները, 2 դեպքում «Առաջնորդների միացյալ պալատ» կազմակերպության դիտորդները:

Դեպքերի բացարձակ մեծամասնությունում «Անկախ դիտորդ» դաշինքի դիտորդների՝ հանձնաժողովի նախագահին դիմելու և նախագահի՝ վստահված անձանց հորդորելու դեպքում վերջիններս սկսում էին տեսանելի կրել վկայականը, սակայն հաճախակի դա կրում էր ժամանակավոր բնույթ: Վկայականը տեսանելի չկրելու և տեղամասում կամ շրջակայքում այլ խախտումների աճի միջև որևէ փոխկապակցվածությունը նկատելի չէ, ինչը թույլ է տալիս բնութագրել վկայական չկրելու կրկնվող պրակտիկան որպես քրեական ենթամշակույթից առաջացած՝ պաշտոնական կարգավիճակից խուսափելու սովորույթ:



Դիտարկված տեղամասերից 15.6% տոկոսում գրանցվել են դեպքեր, երբ որևէ մեկը իր վրա էր վերցնում հանձնաժողովի նախագահի գործառույթները:

- 37 դեպքում վստահված անձինք էին, որոնցից. «Իմ քայլը»՝ 12 հոգի, ԲՀԿ՝ 8 հոգի, ՀՍԾԿ՝ 4 հոգի, «ՄԵՆԶ» դաշինքն՝ 2 հոգի, ՀՀԿ, ՀՅԴ և ԼՀ կուսակցություններից 1-ական վստահված անձ և 6 անհայտ անձ, ում ներկայացնող կուսակցությունը հստակ չի դիտարկումների նկարագրությունից:

- 4 դեպքում տեղական դիտորդներն էին. «Աբովյանի ուսանողական խորհուրդ»՝ 2 հոգի, «Անկախ դիտորդ» հասարակական դաշինք՝ 1 հոգի և «Ականատես» նախաձեռնություն՝ 1 հոգի:

- Հանձնաժողովականներից. 7 հանձնաժողովի քարտուղար և 11 դեպքում՝ հանձնաժողովի այլ անդամ


- 1 ոստիկան և 1 ընտրող:

Օր.՝ Երևանի 7/30 տեղամասում

«Իմ քայլի» տարեց վստահված անձը մասամբ կատարում էր նախագահի պարտականությունները, և խախտումներ անում, օրինակ՝ օգնում էր մարդկանց քվեարկել: ՏԸՀ նախագահը և անդամները չէին միջամտում: Դիտորդները անընդհատ զգուշացնում էին նրան, ինչի շնորհիվ որոշ ժամանակ անց այդ վստահված անձն այլևս չմիջամտեց քվեարկության գործընթացին:

Հարկ է նշել, որ հիմնականում այլ անձանց կողմից հանձնաժողովի նախագահի գործառույթների կատարումը կրել է ոչ շարունական բնույթ և կանխվել է նախագահների կողմից՝ դիտորդների և այլ կարգավիճակ չունեցող անձնաց կողմից, սակայն հանձնաժողովի քարտուղարի և հանձնաժողովի այլ անձանց կողմից նախագահի գործառույթների կատարումը եղել է ավելի տևական և որոշ դեպքերում նրանք փաստացի ամբողջությամբ ստանձնում էին դերը, ինչը մասամբ բացատվում է իրենց՝ նախագահի համեմատ ավելի փորձառու լինելու փաստով:

Դիտարկված տեղամասերի 17.7%-ում արձանագրվել են վիճաբանություններ, 2017 թ. ընտրությունների ընթացքում 50% տեղամասերում արձանագրված վիճաբանությունների փոխարեն: Ֆիզիկական բռնության դեպքեր չեն արձանագրվել:



30 դեպքում վիճաբանության կողմ են եղել վստահված անձինք և 10 դեպքում վիճաբանությունը երկու վստահված անձանց միջև է եղել: 4 դեպքում վիճաբանությունը դադարեցնելու նպատակով հանձնաժողովի նախագահի կողմից ծառայությունն իրականացնող ոստիկանը հրավիրվել է քվեասենյակ: Հիմնականում վիճաբանության պատճառ է հանդիսացել կարգավորումների չիմացությունից բխող որևէ երևույթը որպես խախտում ընկալելը կամ չընկալելը, ոգելից խմիչք չարաշահած անձանց վարքը և ընտրողների / այլ վստահված անձանց որպես բանավոր քարոզչություն ընկալվող վարքը:

Միակ դեպքը, երբ վիճաբանությունը կանխվել է դիտորդական շրջիկ խմբի միջամտությամբ եղել է Լոռվա մարզի Դսեղ գյուղում.

ԲՀԿ վստահված անձը հարբած էր եկել ու վիճում էր տարբեր մարդկանց հետ: Շրջիկ դիտորդներն եկել են և նպաստել իրավիճակի կարգավորմանը: Նախագահը չէր կարողանում կարգավորել իրավիճակը, քանի որ խուսափում էր որևէ գործողություններ կատարելուց՝ կրքերը չթեժացնելու համար:


Ի դեպ, նույն Դսեղ գյուղի 24/20 տեղամասում «Իմ քայլը» դաշինքի վստահված անձանց քանակը երբեմն հասնում էր 5 հոգու, իսկ ԲՀԿ-ինը՝ 3-ի:

15 դեպքում վիճաբանության կողմ են հանդիսացել դիտորդները, 2 դեպքում պատճառը հանդիսացել է ընտրողների ուղղորդման փորձը՝ 1 դեպքում հանձնաժողովի նախագահի կողմից և 1 դեպքում «Միացյալ առաջնորդների պալատ» կազմակերպության դիտորդի կողմից՝ ընտրողին քվեարկության համար մեկ քվեաթերթիկ առաջարկելու պատճառով: Եւս մի դեպքում հանձնաժողովի նախագահը վիրավորական արտահայտություններ էր հնչեցրել դիտորդի հասցեին՝ վերջինիս բաց քվեարկության դեպքը արձանագրելու մասին պահանջի պատճառով: Մնացած դեպքերը կապված են եղել այս կամ այն կարգավորումների թերի մեկնաբանության հետ և հեշտությամբ հարթվել են:


9 դեպքում վեճի կողմ էին հանձնաժողովի անդամները, կրկին՝ այս կամ այն կարգավորումների մեկնաբանելու հիմքով, 2 դեպքում ընտրողի ոչ իրավաչափ պահանջների պատճառով, 1 դեպքում մասնակցության թիվը սխալ հաղորդելու պատճառով:

Տեղամասային հանձնաժողովների նախագահները հիմնականում շտկել են խնդիրները և կանխել խախտումները, սակայն դեպքերի մեծամասնությունում արել են դա դիտորդների, իսկ երբեմն վստահված անձանց կողմից ուշադրություն հրավիրելուց, հորդորելուց հետո: Այստեղից կարելի է եզրակացնել, որ

- հանձնաժողովների նախագահների պատրաստակամության և խախտումների նկատմամբ զգայունության որակական աճ է տեղի ունեցել, սակայն նախաձեռնողականության և կարգավորումների բավարար իմացության պակասը դեռևս շարունակում է խնդրահարույց մնալ,
- մյուս կողմից, երաշխավորված չէ նախագահների պատրաստակամության և խախտումների կասեցման համանման մակարդակը այն տեղամասերում, որտեղ բացակայել են նախաձեռնողականություն ցուցաբերող դիտորդները:




Ինչպես և 2017 ԱԺ ընտրություններին, հանձնաժողովի կողմից խախտումները գրանցվել են տեղամասերի 50%-ում, սակայն գրանցելուց հրաժարվող հանձնաժողովների թիվը նվազել է, կազմելով 7.7% (2017-ի 20% փոխարեն), ոչ միշտ գրանցողներինը՝ 10.7% (30% փոխարեն), մնացած տեղամասերում խախտում արձանագրելու կարիք չի եղել և հարցին հնարավոր չէր պատասխանել:



Ըստ դիտորդների գնահատականի, դիտարկված տեղամասերի 8.7%-ում, (53% փոխարեն) իրավասու մարմինները պատշաճ գործողություններ չի իրականացրել խախտումները շտկելու համար, որից միայն 2%-ում է կրել կրկնվող բնույթ:

Խախտվել են դիտորդի իրավունքները կամ եղել են նրան ուղղված սպառնալիքներ
(դիտարկված տեղամասեր, %)



Դիտորդների իրավունքների սահմանափակման դեպքերը կրճատվել են շուրջ երկու անգամ և նկատվել են դիտարկված տեղամասերի 6%-ում:

5 դեպքում «Անկախ դիտորդի» ներկայացուցիչների հանդեպ հնչել են տեղամասից հեռացնելու սպառնալիքներ կամ կոպիտ խոսք, ինչի հիմքն էր հանդիսանում նկարահանումը դադարեցնելու պահանջին չենթարկվել, տեղաշարժվելու սահմանափակման պահանջին չենթարկվել և գրանցամատյանում գրառումներ կատարելու առաջարկից հանձնաժողովի նախագահի հրաժարվել:

Օր.՝ Գյուլմրիի 31/25 տեղամասում

Գազիկ Կյուրեյանը [հանձնաժողովի անդամ, ով նաև կարգադրություններ էր տալիս նախագահին] աջ ու ձախ հրամաններ էր տալիս, նախագահին ու քարտուղարին հարցեր ուղղելու դեպքում միջամտել է ու հրահանգել «վեր ընկնել տեղը»:

Օր.՝ Երևանի 3/10 տեղամասում

Վերոնշյալ խախտումների բարձրաձայնման պատճառով մեզ սպառնացին դուրս վնդել 2/3 ձայներով: Գոռացել են նաև մեր վրա:

Սահմանափակումների աղբյուրն էր տեղամասային ընտրական հանձնաժողովը և երկու դեպքում վստահված անձինք՝ «Լուսավոր Հայաստան» և ՀՀԴ կուսակցությունների:

Շրջիկ խմբերի դիտարկումների ամփոփում

Քվեարկության ընթացքում շրջիկ դիտարկում իրականացվել է դիտորդների 40 խմբի կողմից, որոնք օրվա ընթացքում լրացրել են 130 դիտարկման քարտ: Քարտերը պարունակել են տեղեկատվություն 139 խախտման մասին, որոնց մանրամասները ներկայացված են համապատասխան բաժիններում: Ընդհանուր առմամբ շրջիկ խմբերի կողմից արձանագրվել է հետևյալը.


Արձանագրված խախտումների բնույթը	դեպքերի քանակ
քվեասենյակի ոչ ճիշտ կահավորում	21
քարոզչական նութեր տեղամասային կենտրոնի շրջակայքում	16
քվեասենյակում գտնվելու իրավունք չունեցող մարդկանց ներկայություն	13
հորդորներ, այլ բանավոր քարոզչություն	11
տեղամասում գտնվելու իրավունք ունեցող անձանց լիազորությունների չարաշահում/թերացում	11
տեղամասային կենտրոնից մինչև 50 մետր շառավղով հարող տարածքում ավտոմեքենաների կուտակումներ	10
տեղամասային կենտրոնին մինչև 50 մետր շառավղով հարող տարածքում մարդկանց կուտակումներ	9
վիճաբանություն և/կամ ծեծկռտուք	9
դիտորդների աշխատանքի խոչընդոտում	7
գրանցամատյանի ոչ ճիշտ լրացում	7
կուտակում տեղամասային կենտրոնում	5
բազմակի քվեարկություն/քվեարկության փորձ	3

տեղեկատվական նյութերի բացակայություն	3
քվեարկության գաղտնիության խախտում	3
քվեաթերթիկների բազմակի խոտան կամ այլ խնդիրներ	2
քվեարկության նյութերի բացակայություն/անհետացում	2
ընտրողների ստորագրությունների կամ անձնագրային տվյալների հավաքում	1
ճշումներ, սպառնալիքներ կամ հարկադրանք	1
տեղամասային կենտրոնում գտնվելու իրավունք ունեցող անձի՝ մուտքի խոչընդոտում	1
քվեարկելուց հետո տեղամասային կենտրոնից դուրս եկած ընտրողները այլ անձանց փոխանցում կամ ցույց են տալիս քվեաթերթիկներ կամ դրանց նմանվող այլ թղթեր	1
այլ անձի փոխարեն ստորագրություն	1
տեխնիկական սարքավորման խնդիրներ	1
ընտրողների տվյալների փոխանցում	1

Ձայների ամփոփում

«Անկախ դիտորդ» դաշինքի դիտորդները ձայների ամփոփման գործընթացը դիտարկել են 325 տեղամասում, որտեղ գրանցվել է հետևյալ իրավիճակը:

Ձայների ամփոփման գործընթացին քվեարկության սենյակում ներկա են ուստիկաններ
(դիտարկված տեղամասեր, %)



• Ոչ • Հանձնաժողովի նախագահի հրավերով • Առանց հանձնաժողովի նախագահի հրավերի

Դիտարկված տեղամասերից 4-ում ամփոփման նիստին քվեասենյակում ներկա է եղել ոստիկան, որոնցից 1-ը տեղամաս է վերադարձել օրվա ընթացքում տեղի ունեցած խախտման պաճառով, մեկն անհայտ պատճառով ներս է մտել քվեասենյակ և դուրս հրավիրվել, երրորդը քվեասենյակ է մտել տաքանալու համար, սակայն դուրս է հրավիրվել: 1 դեպքում միջադեպի պատճառով ոստիկանին հրավիրել է հանձնաժողովի նախագահը, սակայն միջադեպը հարթվել է մինչև ոստիկանի միջամտությունը:

- 3 տեղամասում ձայների ամփոփման նիստին ներկա է եղել միևնույն կուսակցության 3 վստահված անձ, որոնցից մեկը հեռացվել է:

- 2 տեղամասում հանձնաժողովի ոչ բոլոր անդամներն են ներկա եղել ձայների ամփոփման նիստին


- Որևէ տեղամասում անհայտ անձինք չեն նկատվել

- 2 տեղամասում խոչընդոտվել է դիտորդի մուտքը տեղամաս (որոնցից 1-ն «Անկախ դիտորդ» դաշինքից), իսկ 2 այլ տեղամասում խոչընդոտվել է վստահված անձանց մուտքը: Բոլոր դեպքերում հանձնաժողովը պատճառաբանել է, թե անձը ներկայացել է 20:00-ից հետո: «Անկախ դիտորդ» դաշինքի դիտորդին թույլատրվել է ներս մտնել, երբ ոստիկանին պարզաբանվել է, որ ձայների հաշվարկի նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք կարող են սահմանված ընթացակարգով մուտք գործել տեղամաս 20:00-ից հետո:

Դիտարկված տեղամասերից 9-ում (0,03%) ձայների ամփոփման նիստի ժամանակ տեխնիկական սարքավորումով ընտրողների մասնակցության վերաբերյալ տեղեկանք չի տպվել:


Ձայների ամփոփման փուլում վկայական չկրող անձինք եղել են դիտարկված տեղամասերի 9.5%-ում:

Ձայների հաշվարկի ընթացքում տեղամասում գտնվել են վկայականը տեսանելի չկող անձինք
(դիտարկված տեղամասեր, %)



Նշված տեղամասերի գերակշռող մասում դրանք եղել են տարբեր կուսակցությունների և դաշինքների վստահված անձինք: Որոշ տեղամասերում արձանագրվել են մեկից ավելի դեպքեր:


Վկայականները տեսանելի չեն կրել



- 1 տեղամասում հաշվարկի սկզբում վկայականը տեսանելի չի կրել «Անկախ դիտորդ» դաշինքի դիտորդը, որը վերացրել է խախտումը գործընկեր դիտորդի դիտողությունից հետո:


Բոլոր տեղամասերում վկայականը տեսանելի չկրելու խախտումը վերացվել է դիտորդների կամ հանձնաժողովի նախագահի դիտողությունից հետո:

Քվեների ամփոփման գործընթացի՝ ուշացումով սկսվելու կամ ընդհատվելու դեպքեր արձանագրվել են դիտարկված տեղամասերից 14-ում:




- 3 տեղամասում ընդհատման պատճառ է եղել տեղամասի ժամանակավոր հոսանքազրկումը
- 9 տեղամասում հանձնաժողովն ընդմիջում է կատարել սկսվելու նպատակով
- 2 տեղամասում տեղի են ունեցել միջադեպ «Իմ քայլը» դաշինքի վստահված անձի և հանձնաժողովի նախագահի միջև: Դեպքերից մեկում «Իմ քայլը» դաշինքի վստահված անձին փոխարինել է մեկ այլ անձ: Իսկ մյուս դեպքում վստահված անձը դիտողություն է արել, որ քվեատուներից քվեաթերթիկները պետք է հանի և արդյունքը հայտարարի միայն հանձնաժողովի նախագահը: Միջադեպի ընթացքում հանձնաժողովի նախագահը հրավիրել է ոստիկանին, սակայն նույն ժամանակահատվածում հանձնաժողովն ընդունել է վստահված անձի դիտարկումը և հանձնաժողովի նախագահը սկսել է ինքնուրույն բարձրաձայնել քվեարկության արդյունքները:

Հանձնաժողովի նախագահը տիրապետում է քվեարկության ամփոփման կարգին
(դիտարկված տեղամասեր, %)



88% դեպքերում դիտորդները նշել են, որ հանձնաժողովի նախագահը տիրապետում է քվեարկության ամփոփման կարգին: Դիտարկված տեղամասերից 21-ում (6.5%) քվեաթերթիկների հաշվարկը չի ընթացել սահմանված կարգով: Դրանցից 14-ում (4.3 %) քվեաթերթիկները քվեատուփից դուրս են բերվել տրցակով կամ հանձնաժողովի այլ անդամների կողմից: Դիտարկված տեղամասերից 13-ում (4%) հաշվարկի գործընթացին անմիջականորեն մասնակցել են նաև վստահված անձինք: Դեպքերից 5-ում դրանք եղել են «Իմ քայլը» դաշինքի վստահված անձինք, 1 դեպքում «Լուսավոր Հայաստան» և 1 դեպքում «Բարգավաճ Հայաստան» կուսակցության վստահված անձին, իսկ մյուս դեպքերում տարբեր կուսակցությունների վստահված անձինք միաժամանակ:


Տարբերվող գույնի կամ երանգի գրիչով որևէ ուժի օգտին քվեարկված
քվեաթերթիկներ
(դիտարկված տեղամասեր, %)



2017 թվականին տարբերվող գույնի (կարմիր, կանաչ, սև) գրիչով քվեարկված քվեաթերթիկներ կային դիտարկված տեղամասերի 20%-ում և դրանց թիվը մի քանիսից, մինչև մի քանի տասնյակ, որոշ տեղամասերում նույնիսկ մի քանի հարյուր էր և կար այդ գույներով քվեարկության արդյունքների հստակ օրինաչափություն: 2018 թ. ընտրությունների ընթացքում տարբերվող գույնի գրիչներով քվեարկություն արձանագրվել է դիտարկված տեղամասերի 0.9 %-ում: Բոլոր 3 տեղամասերում տարբերվող գույնը եղել է կարմիրը: Տեղամասերից երկուսի վերաբերյալ նշված է, որ այդ գույնով քվեարկությունը եղել է ՀՀԴ-ի օգտին, երրորդի դեպքում մանրամասներ հայտնի չեն:


2017թ. ԱԺ ընտրությունների ձայների հաշվարկի ընթացքում ծրարների մեջ քվեաթերթիկից բացի որևէ այլ թուղթ կամ իր քվեարկության ծրարում հայտնաբերվել է դիտարկված տեղամասերի 17%-ում: 2018թ. նման ծրարներ հայտնաբերվել են դիտարկված տեղամասերի 28.9%-ում: Այդ ծրարները հիմնականում պարունակել են 1-ից ավելի քվեաթերթիկ, որոնցից վավեր է համարվել դրոշմանիշով քվեաթերթիկը:

Ծրարում 1 քվեաթերթիկից բացի որևէ այլ բանի առկայություն
(դիտարկված տեղամասեր, %)



Ձայների հաշվարկի ընթացքում «Անկախ դիտորդ» դաշինքի դիտորդների իրավունքների խախտման դեպքեր գրանցվել են դիտարկված տեղամասերի 2.5%-ում:

Խախտվել են դիտորդի իրավունքները կամ եղել են սպառնալիքներ
(դիտարկված տեղամասեր, %)



Մասնավորապես.

- 3/10 տեղամասում «Մասնա ծռեր» համահայկական կուսակցության վստահված անձը անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել դիտորդների նկատմամբ և հանձնաժողովի նախագահը սպառնացել է հեռացնել դիտորդներին, եթե սրանք չլռեն:

- 8/21 տեղամասում տեղամասային հանձնաժողովի անդամներից մեկը վիրավորել է դիտորդներին, երբ վերջիններս պնդել են, որ հանձնաժողովի քարտուղարը չի կարող փոխարինել հանձնաժողովի նախագահին քվեաթերթիկները քվեատուփից հանելիս

- 4 տեղամասում սահմանափակվել է դիտորդների տեղաշարժը

- 2 տեղամասում հրաժարվել են գրանցամատյանում գրառում կատարել դիտորդների արձանագրած խախտումների վերաբերյալ:

Տարածքային ընտրական հանձնաժողովների դիտարկում

«Անկախ դիտորդ» դաշինքը ժամը 20:00-ից հետո դիտարկել է 36 Տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը:

8 ՏԸՀ-ում հանձնաժողովը ժամը 20.00-ից հետո ոչ լրիվ կազմով է ներկա գտնվել:

6 ՏԸՀ-ում հանձնաժողովի անդամները պարբերաբար բանավոր տեղեկություններ են փոխանցել կողմնակի անձանց: 2 դեպքում դիտորդներին չի հաջողվել նկատել կողմնակի անձանց կապը ընտրություններին մասնակցող որևէ քաղաքական ուժի հետ: 1 դեպքում անձը կապված է եղել «Բարգավաճ Հայաստան» կուսակցության հետ, այդ նույն հանձնաժողովում ավելի ուշ որոշում է կայացվել տեղամասերից մեկում վերահաշվարկ անցկացնելու մասին: 2 տարածքային ընտրական հանձնաժողովում տեղեկությունները փոխանցվել են և «Իմ քայլը» դաշինքի, և ՀՀԿ-ի հետ ասոցացվող անձանց, սակայն հետագա զարգացումների հետ որևէ կապ չի նկատվում: Եւս մի ՏԸՀ-ում կողմնակի անձանց հետ կապ պահելը կրել է շարունակական բնույթ, իսկ տեղեկավորություն հարցնողները եղել են ՀՀԿ, ԲՀԿ, «Իմ քայլը» դաշինք, ԼՀԿ, ՀՅԴ, «ՄԵՆԶ» դաշինքի և ՕԵԿ-ի ներկայացուցիչները: Նշենք, որ այս տարածքայինում այդպես էլ ներկա չէին գտնվել գրանցված վստահված անձինք, մինչևնդեռ տեղամասերից ստացվող նյութերի հետ կապված արձանագրվել են մի շարք խնդիրներ՝ ընդհուպ մինչև արդյունքները մատիտով գրանցելը:

10 տարածքային ընտրական հանձնաժողովում խնդիրներ են առաջացել տեղամասերից բերվող նյութերի հետ: Ընդհանուր առմամբ որոշ

խախտումներով են բերվել 34 տեղամասի պարկերը: Առավել տարածված խախտումն էր փոքր պարկը մեծի մեջ տեղավորելը, որոշ դեպքերում պարկերը ամբողջությամբ չէին փակված և մեկ դեպքում պարկը մասամբ պատռված էր, իսկ մեկ տեղամասի դեպքում ընտրողների ստորագրություններով ցուցակը փոքր պարկում չի եղել, այլ ներկայացվել է առանձին:

8 ՏԸՀ, շուրջ 20 տեղամասից քվեարկության արդյունքների ստորագրված արձանագրությունները բերվել են խախտումներով: Օրինակ՝ 3/19 տեղամասից ստացվել է արձանագրության մեկ օրինակ, որից հետո հանձնաժողովի նախագահը վերադարձել է տեղամաս և այնտեղից բերել 2-րդը: 29/40 տեղամասից բերվել է արձանագրության 1 օրինակ, 2-ը գտնվել է պարկում, իսկ Արաբկիր վարչական շրջանի երեք տեղամասերի արձանագրությունները կնքված չեն եղել:

8 ՏԸՀ-ում արձանագրվել են ելակետային տվյալները փոխելու դեպքեր, իսկ 13-ում՝ ոչ ելակետային տվյալները փոխելու դեպքեր: Դեպքերը վերաբերվում էին պարզ անփութության և սխալ հաշվարկի արդյունքում առաջացող անճշտությունների, հեշտությամբ հայտնաբերվում և շտկվում էին տեղում: Միաժամանակ, հարկ է արձանագրել, որ դիտարկված 36 ՏԸՀ-ում արձանագրվել է 51 տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից ներկայացվող տվյալներում թվաբանական պարզ սխալների առկայությունը խիստ մտահոգիչ էր: Սխալմունքների առկայությունը նաև հանգեցնում էր ստացվող տվյալների ուշացումներով մուտքագրելուն: Հանձնաժողովներից 10-ում խախտվել է նաև քվեարկության արդյունքների աղյուսակի 3 ժամը մեկ պարբերականությամբ հրապարակելու և փակցնելու դրույթը, ինչը ըստ դիտորդների մեկնաբանությունների, պայմանավորված էր հանձնաժողովի անդամների ծանրաբեռնվածությամբ:

7 ՏԸՀ-ում նիստին մասնակցել են ներկա լինելու իրավունք չունեցող կամ առանց տարբերանշանների անձինք: Մեկ դեպքում ներկա է եղել ոչ սթափ վիճակում գտնվող ավագանու անդամ, որին հանձնաժողովի նախագահը դուրս է հրավիրել: Մեկ այլ դեպքում, Շենգավիթի թաղապետը փորձել է լուսանկարել արդյունքները:

1 ՏԸՀ-ում կարճ ժամանակով տեղի է ունեցել հոսանքագրվում: Ըստ ՏԸՀ-ում ստացված տեղեկությունների հոսանքագրվման դեպքեր են գրանցվել նաև 2 տեղամասային կենտրոնում:

1 ՏԸՀ-ում տվյալներ են ստացվել՝ ձայների հաշվարկի ընթացքում տեղամասերից մեկում քվեաթերթիկների մի տրցակից այլ տրցակ տեղափոխման և արդյունքների կեղծման փորձի մասին: Դեպքի վերաբերյալ արձանագրություն է կազմվել և նշանակվել է վերահաշվարկ:

2 ՏԸՀ-ում խախտվել են դիտորդների իրավունքները: Մեկ դեպքում, ՏԸՀ հանձնաժողովի նախագահը խոչընդոտել է դիտորդների մուտքը մուտքագրողների սենյակ՝ սպառնալով «հեռացնել բոլորին» և դրսևորելով ծաղրական վարքագիծ:

12 ՏԸՀ-ում տարածքը հանձնաժողովի և դիտորդների արդյունավետ գործելու համար անբավարար կամ մասամբ բավարար են գնահատել դիտորդների կողմից: Հիմնական խնդիրն այն է եղել, որ հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվել են տարբեր սենյակներում և նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք ամբողջ գործընթացին մասնակից լինելու, դիտարկելու հնարավորություն չեն ունեցել: Հիմնական խնդիրը վերաբերել SS մասնագետների առանձնացված սենյակներին:

Արդյունքների վերլուծություն

Հետընտրական զարգացումներ և միջազգային արձագանք

2018թ. Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների քվեարկությանը մասնակցել է 1 261 105 ընտրող: Ինչը 300 000-ով պակաս է, քան 2017թ. ԱԺ ընտրությունների մասնակցության թիվը:

Կուսակցությունների համար նախատեսված 5% շեմը հաղթահարել են «Լուսավոր Հայաստան» և «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունները, իսկ դաշինքների համար նախատեսված 7% շեմը հաղթահարել է միայն «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքը: ՀՀ Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ եթե ընտրություններին մասնակցող կուսակցություններից (կուսակցությունների դաշինքից) որևէ մեկը ստանում է մանդատների 50%-ից ավելին, բայց 54%-ից պակաս քվե, ապա նրան տրվում է այնքան լրացուցիչ մանդատ, որպեսզի արդյունքում ստացած մանդատների թիվը հավասար լինի ընդհանուր մանդատների թվի 54%-ին: Եթե այդ կուսակցությունը ստացել է ձայների 2/3-ից ավելին (67 %-ից ավելին), ապա մանդատների բաշխմանը մասնակցող մյուս ուժերը ստանում են այնքան լրացուցիչ մանդատ, որ արդյունքում նրանց ստացած մանդատների թիվը հավասար լինի մանդատների ընդհանուր թվի 1/3-ին: 2018թ. դեկտեմբերի 9-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ժամանակ «Իմ քայլը» կուսակցությունների դաշինքը ստացավ ձայների 70.4%-ը: Արդյունքում «Լուսավոր Հայաստան» և «Բարգավաճ Հայաստան» խմբակցությունները ստացան լրացուցիչ 27 մանդատ և Ազգային ժողովի պատգամավորների թիվը դարձավ 132:

Կուսակցությ ուն /դաշինք	Կողմ քվեաթերթիկների թիվը	Տոկոս	Նախնական մանդատների թիվը	Լրացուցիչ մանդատների թիվը
ԻՄ ՔԱՅԼԸ	884 864	70,42 %	88	-
ԼՀԿ	80 047	6,37%	7	11
ԲՀԿ	103 801	8,26%	10	16

2019թ. հունվարին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը հրապարակեց ընտրությունների դիտարկման իր զեկույցը, ըստ որի.

«Դեկտեմբերի 9-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններն անց են կացվել հիմնարար ազատությունների պահպանմամբ և վայելել են հանրության լայն շրջանակների վստահությունը, ինչը պետք է պահպանվի ընտրական հետագա բարեփոխումների միջոցով: Քաղաքական բաց բանավեճը, այդ թվում՝ ՉԼՄ-ներում, նպաստել է աշխույժ քարոզարշավի անցկացմանը՝ չնայած առցանց սադրիչ հռետորաբանության դեպքերը մտահոգության տեղիք են տվել: Խաղաղ, այսպես կոչված «թավշյա հեղափոխությունը» և գործող իշխանությունների քաղաքական կամքը հնարավոր դարձրեցին ժողովրդավարական ընտրությունների անցկացումը:»

Վեհաժողովը նշել է, որ դիտարկել է Հայաստանում 1995 թ. ի վեր անցկացված բոլոր ընտրությունները և չնայած բարդ ընտրական համակարգին և սոցիալական մեդիայի միջոցով ճնշումների դեպքերին, նախորդ բազմաթիվ ընտրություններ ստվերած ընտրախախտումներն այս անգամ բացակայել են: Միաժամանակ Վեհաժողովը պատրաստակամություն է հայտնել սերտ համագործակցել Վենետիկի հանձնաժողովի և Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչների հետ՝ երկրում ժողովրդավարական գործընթացներն ամրապնդելուն ուղղված իրավական բարեփոխումներ իրականացնելու հարցում:

ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը, որը դիտորդական առաքելության շրջանակներում համագործակցել է ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի և Եվրոպական խորհրդարանի պատվիրակությունների հետ, իր վերջնական զեկույցում վերահաստատել է նախնական եզրակացությունում և ԵԽԽՎ զեկույցում նշված գնահատականները և ևս պատրաստակամություն հայտնել աջակցել իշխանություններին ընտրական գործընթացի բարելավման և զեկույցներում տրված հանձնարարականների կատարման հարցում:

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ առաջնահերթ հանձնարարականները վերաբերում են «ընտրական գործընթացի արդարության նկատմամբ վստահության ամրապնդմանը, ընտրական օրենսդրության բացերի և երկիմաստությունների

վերացմանը, ընտրողների անձնական տվյալների պահպանմանը, կանանց քաղաքական գործընթացներին մասնակցության խթանմանը, հաշվետվողականության և քարոզարշավի ֆինանսավորման մասին հաշվետվությունների բարելավմանը, ՉԼՄ խմբագրական անկախության աջակցմանը և ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովների վերապատրաստումների բարելավմանը։”⁶²

Միջազգային դիտորդական առաքելությունների համատեղ նախնական եզրակացությունը ամփոփել է ընտրությունների կազմակերպման և իրականացման ողջ գործընթացը և նախանշել այն ոլորտները որտեղ օրենսդրության և պրակտիկայի բարեփոխման կարիք կա՝ վերահաստատելով, որ ընտրական օրենսգրքի փոփոխությունները պետք է նախաձեռնվեն և իրականացվեն ընտրություններից բավարար ժամանակ առաջ և լինեն հնարավորինս մասնակցային:

Քվեարկությունից հետո որևէ քաղաքական ուժ չի վիճարկել ընտրության արդյունքները ՀՀ Սահմանադրական դատարանում, իսկ մի քանի տեղամասերում իրականացված վերահաշվարկները ընտրության արդյունքների վրա ազդեցություն չեն ունեցել:

Կանանց ներկայացվածություն

Թեև ընտրական օրենսգրքի անցումային դրույթներով երաշխավորվում է կանանց 20% ներկայացվածությունը յուրաքանչյուր խմբակցությունում, սակայն այդ երաշխիքը արդյունավետորեն կարող է կիրառվել միայն խմբակցության համապետական ցուցակով ընտրված մասի վրա: Արդյունքում 2017թ. Ազգային ժողովի ընտրություններից հետո Ազգային ժողովի 105 մանդատներից 19 ստացան կանայք (18%):

2018թ. արտահերթ ընտրությունների արդյունքում Ազգային ժողովում ընտրվեց 32 կին (24%)

⁶² Հայաստանի Հանրապետություն Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ, 9 դեկտեմբերի 2018թ. ԺՀՄԻԳ դիտորդական առաքելություն, վերջնական զեկույց, <https://res.elections.am/images/doc/OSCE09.12.18.pdf>

- «Իմ քայլը» կուսակցությունների դաշինք - 88 պատգամավոր, որից 23-ը կին (26%)
- «Լուսավոր Հայաստան» կուսակցություն - 18 պատգամավոր, որից 4-ը կին (22%)
- «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն - 26 պատգամավոր, որից 5-ը կին (19%)

Ընդ որում, ի տարբերություն 2017թ., երբ տարածքային ցուցակներով ընտրվել էր միայն 1 կին պատգամավոր «Ելք» դաշինքից (Մանե Թանդիլյան), 2018թ. «Իմ քայլը» դաշինքի տարածքային ցուցակներով ընտրվել է 9 կին պատգամավոր, «Լուսավոր Հայաստան» կուսակցության արածքային ցուցակով 1 կին պատգամավոր (Մանե Թանդիլյան) և «Բարգավաճ Հայաստան» կուսակցության տարածքային ցուցակներով՝ 2 կին պատգամավոր:

Համեմատականներ 2017թ. ԱԺ ընտրությունների հետ


Ընտրական օրենսգրքի փոփոխությունների նախագծի չընդունման արդյունքում 2008թ. ԱԺ արտահերթ ընտրությունների կազմակերպվեցին և անցկացվեցին գրեթե նույն օրենսդրության հիման վրա, բացառությամբ լրատվամիջոցների ներկայացուցիչների թվի սահմանափակման վերացումը և վարչական ու քրեական պատասխանատվությունների փոփոխությունները, որոնք ընդունվել են առանձին փաթեթով:

2017թ. ապրիլին կայացած ընտրություններից հետո «Անկախ դիտորդը» բավականին մանրամասն ներկայացրել է առաջին անգամ 2017թ.-ի ապրիլին կիրառված ընտրակարգի հստակ առավելությունը իշխող Հանրապետական կուսակցության համար, որը կարողացավ օգտագործել առանձին անհատների հեղինակությունը կուսակցության հաջողության համար, ինչպես նաև ապահովել, որ քվեներ ստացած, բայց չընտրված թեկնածուների ձայները չկորչեն:

2017թ. ապրիլին չնայած առկա դժգոհություններին Հայաստանի հանրապետական կուսակցությունը ստացավ 770 441 ձայն, ինչը 106 000 ձայնով ավելի է, քան 2012թ. համամասնական ընտրակարգով ստացած ձայները:

Չկայացած կուսակցական համակարգում, երբ կուսակցական գաղափարախոսությունը ստիպված է պայքարել տեղական հեղինակության դեմ, (ումից ընտրողը կենսական կախվածության մեջ է կամ այդպես է կարծում) գաղափարախոսության հաղթանակի հնարավորությունները նվազագույն են:

Քաղաքական կուսակցությունների կայացման նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ներդնել իրական համամասնական ընտրակարգ և խթանել կուսակցությունների գաղափարական տարանջատումն ու հստակեցումը: Իսկ կուսակցությունների կայացման հիմքում պետք է լինի ներքին ժողովրդավարության մեխանիզմների ձևավորումն ու ամրապնդումը, որն էլ իր հերթին կդառնա կուսակցության թեկնածուների ցուցակների կազմման սկզբունքը:



Արտահերթ ընտրություններից առաջ տարածքային ցուցակներից հրաժարվելու և պարզ համամասնական ընտրակարգով ընտրություններ իրականացնելու հստակ դիտավորությունը թերևս նպաստեց նրան, որ նույնիսկ փոփոխությունների չընդունման պայմաններում քվեարկության արդյունքներում կուսակցությունների միայն համապետական ցուցակներով ստացած քվեների

տեսակարար կշիռը ավելի մեծ է քան 2017թ.-ին: Ստորև բերված գծապատկերում ներկայացված է, թե յուրաքանչյուր կուսակցության/դաշինքի ստացած ձայների որ մասն է տարածքային թեկնածուների բաժինը և որն է միայն կուսակցության/դաշինքի ստացած ձայների բաժինը:


Քաղաքական իրավիճակի փոփոխության արդյունքում նախորդ ընտրությունների ընթացքում Հանրապետական կուսակցության համար ամենաշատ ձայներ ապահոված բիզնեսմեն-պատգամավորները չառաջադրվեցին 2018թ. արտահերթ ընտրությունների ընթացքում: Նախորդ ընտրություններին կուսակցության համար 9-րդ առավելագույն թվով ձայներ ապահոված Հարություն Կարապողոսյանը (20 306) 2018թ. նույն՝ 4-րդ ընտրական տարածքում ստացավ 642 ձայն, իսկ 2-րդ ընտրական տարածքում 18532 ձայն ստացած Արման Գալուստի Սահակյանը ստացավ 1961 ձայն:

	2017թ. ՀՀԿ	Ըվեներ	2018թ. Իմ քայլը	Ըվեներ
1	Արայիկ Գրիգորյան	45339	Սասուն Միքայելյան	31739
2	Կարեն Կարապետյան	44255	Արարատ Միրզոյան	25550
3	Սամվել Ալեքսանյան	42472	Ֆելիքս Յուլիսյան	24172
4	Ռոբերտ Սարգսյան	27107	Գարիկ Սարգսյան	22604
5	Հակոբ Բեգլարյան	26001	Ալեն Սիմոնյան	21812
6	Սեդրակ Սարոյան	21933	Ռոմանոս Պետրոսյան	20934
7	Վահե Հակոբյան	21823	Սիփան Փաշինյան	17155
8	Նահապետ Գևորգյան	21778	Դավիթ Գևորգյան	16508
9	Հարություն Կարապողոսյան	20306	Արամ Խաչատրյան	15308
10	Միհրան Պողոսյան	19874	Սուրեն Պապիկյան	14885
	Ընդամենը	290888	Ընդամենը	210667
	Կուսակցության ընդամենը	770441	Կուսակցության ընդամենը	884864
	Առաջին տասնյակի տեսակարար կշիռը	37.8%	Առաջին տասնյակի տեսակարար կշիռը	23.8%


Ընդհանուր առմամբ հետաքրքրական է երկու ընտրությունների ընթացքում առավելագույն ձայներ ստացած թեկնածուների ձայների և իշխող ուժի ստացած ձայների հարաբերակցությունը:

2017թ. և նախորդող ընտրությունների դեպքում նկատվել էր օրինաչափություն, որ իշխող ուժի ստացած ձայներն անհամաչափորեն բարձր են բարձր մասնակցությամբ տեղամասերում: 2018թ. արտահերթ

ընտրություններում նման օրինաչափություն չի արձանագրվել և քվեարկության արդյունքները հնարավորինս մոտ են վիճակագրորեն ակնկալվող բնական բաշխմանը:



2017թ. ԱԺ ընտրությունների արդյունքներից ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետական կուսակցության ստացած քվեների տեսակարար կշիռը կտրուկ աճում է մասնակցության աճին զուգահեռ, իսկ «ԵԼԲ» և «Ծառուկյան» դաշինքների ձայները նվազում են: Մասնակցության աճին զուգահեռ որոշակի աճ է նկատվում նաև «Հայ հեղափոխական դաշնակցության» ստացած քվեներում:




Ի տարբերություն 2017թ., 2018թ. առավելագույն ձայներ ստացած «Իմ քայլը» դաշինքի ստացած քվեների տեսակարար կշիռը նույնիսկ որոշակիորեն նվազում է մասնակցության աճին զուգահեռ: Միևնույն ժամանակ կրկին որոշակի աճ է նկատվում «Հայ հեղափոխական դաշնակցության» ստացած քվեներում:


Մասնակցության և արդյունքների հարաբերակցության պատկերը հետաքրքրական է նաև մասնակցության տարբեր տիրույթներում բոլոր ուժերի ստացած ձայների համեմատությամբ:

Այսպես, 2017թ. Աժ ընտրությունների արդյունքներում ըստ էության յուրաքանչյուր քաղաքական ուժի օգտին տրվող ձայների և մասնակցության հարաբերակցության դինամիկան էականորեն տարբերվում է մեկը մյուսից՝ կարծես յուրաքանչյուր ուժի ընտրազանգվածները միմյանցից կտրված, տարբեր վարքագծով հանրույթներ են: Միաժամանակ մասնակցության տոկոսի միջակայքն տարօրինակորեն ընդլայնված է:

2017թ. Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներ



2018թ. Ազգային Ժողովի ընտրությունների արդյունքներ




2018թ. մասնակցության միջակայքը և արդյունքների բախշվածությունը ավելի փոխկապակցված են թվում: Բզեարկության արդյունքների նման

տարբերությունը չի կարող վկայել միայն ընտրողի վարքագծի կտրուկ փոփոխության մասին, այլ նաև նախորդ քվեարկության արհեստական միջամտության, որը բացակայում էր 2018թ. ԱԺ արտահերթ ընտրությունների դեպքում:


Հետաքրքրական են նաև հիմնականում իշխող ուժի կողմից վերահսկվող համարվող տարածքներում արձանագրված քվեարկության արդյունքները, որոնք եականորեն տարբերվում են այլ տարածքներում քվեարկության արդյունքներից: Օրինակ 2017թ. ԱԺ ընտրությունների ընթացքում քրեակատարողական հիմնարկներում Հայաստանի Հանրապետական կուսակցությունը ստացել է ընտրողների ձայների 78%-ը, մինչդեռ հանրապետության ողջ տարածքում կուսակցության արձանագրած արդյունքը եղել է 49.08%:

2017թ. ԱԺ ընտրությունների քվեարկության արդյունքները քրեակատարողական հիմնարկներում




2018թ. «Իմ քայլը» դաշինքը քրեակատարողական հիմնարկներում ստացել է ընտրողների քվեների 49.3%, մինչդեռ հանրապետության տարածքում դաշինքի արձանագրած արդյունքը եղել է 70.42%:

2018թ. ԱԺ ընտրությունների քվեարկության արդյունքները քրեակատարողական հիմնարկներում



2018թ. իշխող ուժի օգտին նույնական բարձր քվեարկություն գրանցվել է միայն «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկում, որտեղ 2017թ. 77 մասնակցից 69-ը (90%) ընտրել է Հայաստանի հանրապետական կուսակցության թեկնածու Վահրամ Բաղդասարյանին, իսկ 2018թ. 51 մասնակցից 33-ը (65%) ընտրել է «Իմ քայլը՝ դաշինքի թեկնածու Արամ Խաչատրյանին:

2017 ՀՀԿ, 2017 ԵԼԲ, 2017 Ծառուկյան, 2018 ՀՀԿ, 2018 Իմ Բայրը...



Միաժամանակ քվեարկության արդյունքների նախկինում արձանագրված որևէ օրինաչափություն չի բացահայտվել այն տեղամասերում, որտեղ քվեարկում են ժամկետային զինառայողները:

Արձանագրված խախտումների առնչությամբ «Անկախ դիտորդ» դաշինքի գործողությունները և իրավասու մարմինների արձագանքը

2018 թվականի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների ընթացքում «Անկախ դիտորդ» դաշինքի կողմից դիտորդության իրականացման ընթացքում դիտորդներին անհրաժեշտ ծավալի իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու և անհրաժեշտության դեպքում իրավաբանական օգնություն ցուցաբերելու նպատակով կազմավորել էր 30 հոգուց բաղկացած իրավաբանների թիմ: Թիմը նախապես անցել է երկօրյա վերապատրաստման դասընթաց՝ ընտրական օրենսդրության, ընտրական վեճերով վարչարարության առանձնահատկությունների վերաբերյալ:

Երկարաժամկետ դիտարկման ընթացքում թիմը բաղկացած է եղել 10 իրավաբանից, որոնց համար նույնպես կազմակերպվել է դասընթաց:

Ինչպես քարոզչության ժամանակահատվածում, այնպես էլ քվեարկության օրվա ամբողջ ընթացքում դաշինքի կազմում գործող բոլոր դիտորդներին տրամադրվել է իրավաբանական աջակցություն և խորհրդատվություն, դիտորդների կողմից արձանագրված խախտումները վերացնելուն ուղղված գործողությունները:

Քարոզչության ընթացքում Դիտորդների կողմից արձանագրված խախտումների կապակցությամբ ուղարկվել է թվով 8 գրություն, որից՝ հանցագործության մասին 1 հաղորդում, տարբեր համայնքների ղեկավարներին հասցեագրված 6 գրություն՝ կապված արգելված վայրերում փակցված պաստառների հետ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ներկայացվել է 1 դիմում-առաջարկություն, որը կապված է եղել որոշ քարոզչական պաստառներում օրենքով պահանջվող վավերապայմանների բացակայության հետ, մասնավորապես՝ դրանցում բացակայել են տպաքանակի, տպագրական ընկերության և պատվիրատուի վերաբերյալ տեղեկությունները:

Համայնքների ղեկավարների կողմից ստացվել են պատասխաններ, որ հետևողական են և կվերացվեն չսահմանված վայրերում փակցված պաստառները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հայտնել է, որ 06.12.2018թ. ուղարկված դիմում-առաջարկը ստացել են 12.12.2018թ-ին՝ ընտրություններից հետո և ժամանակավրեպ է ու անհնարին է ստուգել դրանց առկայությունը, քանի որ այլևս նման պաստառներ չեն շրջանառվում:

Հանցագործության մասին հաղորդման կապակցությամբ քրեական գործ հարուցելը մերժվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Քվեարկության օրվա ընթացքում Դիտորդների կողմից իրավաբանական խորհրդատվություն է տրամադրվել ավելի քան 150 դեպքով, որոնք վերաբերել են դիտորդների իրավունքների իրացման խոչընդոտները վերացնելուն, տարբեր ընթացակարգային նորմերի մեկնաբանություններին, հանցագործության վերաբերյալ հաղորդումներ ներկայացնելուն, վարչական իրավախախտումների վերաբերյալ փաստերի հավաքագրմանը:

Քվեարկության օրը իրավաբանական թիմի առջև խնդիր էր դրված դիտորդների կողմից արձանագրված խնդիրները, խախտումները վերացնելու ուղղությամբ ձեռնարկել այնպիսի միջոցներ, գործողություններ, որոնք հնարավորություն կտան դրանք լուծել առավել սեղմ ժամկետներում, ինչով պայմանավորված, հիմնականում հայտնաբերված խնդիրների կապակցությամբ ձեռնարկված գործողությունները եղել են ընտրական հանձնաժողովներին ահազանգելը:

Պետք է ընդգծել, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և տարածքային ընտրական հանձնաժողովներ ահազանգելուց հետո խախտումները հիմնականում լուծվել են, ինչից ելնելով քվեարկության օրվա ընթացքում վարչական կարգով գրավոր դիմում/բողոքներ դաշինքի անդամ կազմակերպությունների կամ դիտորդների կողմից չեն ներկայացվել:

Ընտրությունների օրվա հետ կապված հանցագործության մասին հաղորդումներ չեն ուղարկվել, բոլոր խախտումների վերաբերյալ տեղեկությունները և փաստերը հրապարակվել է Էլեկտրոնային տարբերակով՝

կայքում տեղադրելու միջոցով: Հրապարակումների արդյունքում ուստիկանության կողմից նախապատրաստվել են նյութեր, ստուգվել են քրեական գործ հարուցելու հիմքերի առկայությունը: Որևէ դեպքով քրեական գործ չի հարուցվել:

Պետք է փաստել, որ ՀՀ Ընտրական օրենսգիրքը չի նախատեսում օպերատիվ լուծում պահանջող խնդիրների կապակցությամբ վարչական վարույթի առանձնահատկությունները, այդ թվում՝ դրանք քննարկելու կարգը: Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ: Նման դեպքերում առանձին ակտի տեսքով որոշումների ընդունումը պարտադիր չէ: Կարծում ենք, որ նման իրավակարգավորումը չի կարող ամբողջությամբ լուծել ծագած հարաբերությունները, և անհրաժեշտ է ՀՀ Ընտրական օրենսգիրքը լրացնել՝ սահմանելով օպերատիվ լուծում պահանջող հարցերի հետ կապված վարչական վարույթի առանձնահատկությունները:

Ընտրական հանձնաժողովների հիմնական մասն ունի հրապարակված հեռախոսահամարներ, սակայն ընտրության օրը մեկ հեռախոսահամարը չի կարող պատշաճ սպասարկում իրականացնել:

Գտնում ենք, որ պետք է ներդրվի թեժ գիծ, ինչպես նաև Էլեկտրոնային եղանակով, այդ թվում նաև ֆաքսով դիմում ներկայացնելու հնարավորություն: Նման գործիքները կարող են թույլ տալ հայտնաբերված և արձանագրված խնդիրները լուծվել առավել սեղմ ժամկետներում:

Ընտրությունների օրը իրավաբանական թիմին ահազանգել են ավելի քան 45 խախտման վերաբերյալ, որոնց լուծման կապակցությամբ, իրավաբանների կողմից ձեռնարկված գործողությունների շրջանակներում, կատարվել է ավելի քան 110 հեռախոսազանգ ընտրական հանձնաժողովներին: Ընդ որում՝ հիմնականում անհրաժեշտություն էր առաջանում միևնույն խնդրով մի քանի անգամ զանգահարել ընտրական հանձնաժողովներին, մինչև որ հնարավոր կլիներ հասնել ցանկալի արդյունքի:

Դիտորդների կողմից բարձրաձայնված խնդիրները հիմնականում վերաբերել են.

- քվեարկության վերաբերյալ դիտորդի գնահատականը արձանագրելուց խուսափելուն,
- դիտորդներին օրենքով թույլատրված փաստաթղթերին ծանոթանալուն խոչընդոտելուն,
- քարոզչություն կատարելուն,
- տեղամասին հարող տարածքում անձանց և մեքենաների կուտակումներին,
- ինքնուրույն քվեարկելու հնարավորություն չունեցող անձանց օգնողների տվյալները գրանցամատյանում չգրառելուն:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ ԱԺ արտահերթ ընտրությունների ընթացքում արձանագրված խախտումները հիմնականում հնարավոր է եղել վերացնել հեռախոսազանգերի միջոցով, չնայած նրան, որ ցանկալի արդյունքի հասնելու համար ծախսվել է ավելի երկար ժամանակ և միջոցներ, մինչդեռ բարձրացված խնդիրները հնարավոր էր լուծել սեղմ ժամկետներում:

Անհրաժեշտ է ընտրական օրենսգրքում կատարել փոփոխություններ և լրացումներ, որոնցով կկարգավորվի օպերատիվ լուծումներ պահանջող վարչարարության առանձնահատկությունները, կսահմանվի թեժ գծի ներդրման ինստիտուտը, հնարավոր կլինի ընտրական հանձնաժողովներին հասցեագրել էլեկտրոնային գրավոր դիմում/բողոքներ:

Հիմնական եզրակացություններ

2017 թ. դիտարկելով Ազգային ժողովի ընտրությունները՝ «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքն արձանագրել էր, որ 2016 թ. ընդունված Ընտրական օրենսգիրքը որևէ պատասխան չէր տվել մինչ այդ բարձրաձայնված հիմնախնդիրներին, որոնք էին վարչական ռեսուրսների կազմակերպված և զանգվածային չարաշահումը և դրա դեմ պայքարի անարդյունավետությունը, թեկնածուների հավասար մրցակցային հնարավորությունների բացակայությունը, ընտրողների ազատ կամարտահայտման խոչընդոտների դեմ անարդյունավետ պայքարը, ընտրությունների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սահմանափակումները, ընտրախախտումների և քվեարկության արդյունքների արդյունավետ բողոքարկման մեխանիզմների ու հնարավորությունների բացակայությունը:

Համամասնական ընտրակարգի հիմքում դնելով տարածքային ընտրական ցուցակներով առաջադրման հնարավորությունը՝ օրենսգիրքն առավել խորացրեց վարչական ռեսուրսի ու տարբեր լծակների կիրառման հնարավորությունը՝ քաղաքական և գաղափարական պայքարը ստորադասելով առանձին թեկնածուների հեղինակությանը և հնարավորություններին:

2018 թ. տեղի ունեցած հեղափոխությունը հնարավորություն ստեղծեց հիմնովին վերանայել ընտրական օրենսդրությունը և ապահովել վերոնշյալ խնդիրների համակարգային լուծումը՝ սահմանելով պարզ համամասնական ընտրակարգ և առավել արդարացի դարձնելով մեկնարկային հնարավորությունները (շեմի նվազեցում, գրավի նվազեցում և այլն): 2018թ. դեկտեմբերի 9-ի ընտրություններն անցկացվեցին վարչական և քրեական պատասխանատվության բարելավված կարգավորումներով, սակայն ընտրական օրենսգրքի փոփոխություններն իրականություն չդարձան:

Չնայած ընտրական օրենսգրքի փոփոխությունների տապալմանը՝ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն աննախադեպ էին արդյունքների լեգիտիմության ընկալման առումով, ինչը հիմնականում վերագրվում էր ժամանակավոր կառավարության ազատ և ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու քաղաքական կամքին:

2018թ. ընտրությունների նկատմամբ վստահության մասին են վկայում երկարաժամկետ դիտարկման ընթացքում տարածքային ու տեղամասային ընտրական հանձնաժողովների և թեկնածուների հարցազրույցներում հնչած կարծիքները 2017 և 2018թթ ընտրությունների վերաբերյալ, քարոզարշավի և քվեարկության օրվա ընթացքում արձանագրված խախտումների բովանդակությունը և ծավալը:

Արտահերթ ընտրությունների կազմակերպման ընթացքում ձեռնարկված քայլերը բավարար չէին հաշմանդամություն ունեցող անձանց համար ընտրական գործընթացների և տեղամասային կենտրոնների մատչելիության ապահովման առումով:

Ընտրական գործընթացի մասնակիցների կողմից բարձրաձայնվեցին ընտրողների ցուցակներում առկա անճշտությունները: Միաժամանակ ստորագրված ցուցակների հրապարակումն օգնել է բացառել այլ անձի փոխարեն քվեարկության հավանականությունը:

Ընտրությունների նախապատրաստման և քարոզչության փուլի դիտարկման ընթացքում դիտարկման ընթացքում խնդրահարույց է եղել ատելության խոսքի տարածվածությունը: Ատելության խոսքի թիրախում հիմնականում փոխադարձաբար եղել են «Իմ քայլը» դաշինքը և Հայաստանի հանրապետական կուսակցությունը: Վերջինս բողոքել է, որ իրենց համակիրները գտնվում են վախի մթնոլորտում և կաշկանդվում են հրապարակայնորեն աջակցել իրենց:

Քարոզչության փուլում արձանագրված հիմնական խախտումը չսահմանված վայրում քարոզչական պաստառների տեղադրում և պաստառների վնասումն է եղել: Ընտրություններին մասնակցող ուժերի կողմից եղել են բազմաթիվ ահազանգեր քարոզչության պաշտոնական մեկնարկից առաջ իրականացվող քարոզչության վերաբերյալ: Թեև ընտրական օրենսգիրքը չի սահմանափակում քարոզչության սահմանված ժամկետից առաջ իրականացվող քարոզչությունը, ակնհայտ է, որ այս հարցը իրավական կարգավորման կարիք ունի:

Միաժամանակ թերի է քարոզարշավի վերաբերյալ ֆինանսական հաշվետվողականության մեխանիզմը, որը պետք է ներառի քարոզչության ընթացքում իրականացված բոլոր ծախսերը և բացառի նախընտրական հիմնադրամից դուրս ծախսերի իրականացումը:

Վարչական ռեսուրսի չարաշահման մասին ահազանգերը եղել են զգգալիորեն քիչ թվով և որպես հիմնական օրինակ նշվել է Նիկոլ Փաշինյանի հռետորաբանությունը մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը: Մարզերում վարչական ռեսուրսի չարաշահման դեպքերում ակնհայտ է եղել այդ չարաշահման դեպքերի ապակենտրոնությունը: Ի տարբերություն նախորդ ընտրությունների, այն հիմնականում օգտագործվել է տարածքային ցուցակներում միևնույն ուժի ներկայացրած թեկնածուների կողմից միմյանց միջև պայքարում:

Քարոզչության պաշտոնական մեկնարկին նախորդող ժամանակահատվածում արձանագրվել է քաղաքական ուժերի անհավասար լուսաբանումը հեռուստատեսությամբ: Սակայն քարոզչության փուլում այդ անհավասարությունը որոշակիորեն վերացվել է: Ավելին, գործընթացի վրա դրական ազդեցություն է ունեցել հեռուստաբանավեճերի առատությունը (առաջին հերթին՝ դաշինքների ցուցակները գլխավորող թեկնածուների միջև բանավեճը): Լրատվամիջոցները գերակշռապես չէին կաշկանդվում իշխանությանը քննադատելուց:

Թեև տեղամասային ընտրական հանձնաժողովների պատրաստվածության և պատրաստակամության առումով դրական փոփոխություն չգրանցվեց, սակայն զգալի է եղել վերադաս ընտրական հանձնաժողովների և ոստիկանության կողմից իրենց պարտականությունների պատշաճ կատարման պատրաստակամությունը և արձանագրված խախտումների օպերատիվ վերացումը: Դրա արդյունքում ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների քվեարկությունն ընթացավ նվազագույն խախտումներով և քվեարկողների ազատ կամարտահայտման պայմաններում:

Ընտրության արդյունքների առումով ողջունելի է կանանց ամենաբարձր ներկայացվածությունը Ազգային ժողովում, սակայն ակնհայտ է, որ պարզ համամասնական ընտրակարգում այդ ցուցանիշն ավելի բարձր կարող էր լինել:

Միևնույն ժամանակ, 13 ընտրական տարածքներից յուրաքանչյուրում տարածքային ցուցակներով առնվազն 5 թեկնածու առաջադրելու պահանջը, անցողիկ բարձր շեմը և բարձր ընտրագրավը պահպանեցին մեկնարկային անբարենպաստ պայմանները, որ գոյություն ունեին նոր կուսակցությունների համար: Արդյունքում Ազգային ժողովում ներկայացվեցին նվազագույն քանակի ուժեր: Բացի այդ, քաղաքական փոքրամասնությանը տրվող լրացուցիչ մանդատների բաշխման շնորհիվ երկրորդ և երրորդ ուժերի ստացած մանդատներն ըստ էության չեն արտացոլի ընտրողների կողմից նրանց տրված ձայների հարաբերակցությունը՝ այսպիսով ստորադասելով Ազգային ժողովի ներկայացուցչականության սահմանադրական նորմը ընտրական օրենսգրքի նորմին:

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքը գտնում է, որ 2018 թ. դեկտեմբերի 9-ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն ընթացել են ՀՀ օրենսդրության և ժողովրդավարության և ընտրական գործընթացների միջազգային չափանիշներին համահունչ և քվեարկության արդյունքները հիմնականում արտացոլում են ընտրողների ազատ կամքը: Դաշինքը գտնում է, որ միջազգային դիտորդական առաքելությունների աննախադեպ դրական գնահատականները ևս վկայում են ընտրությունների արդյունքների նկատմամբ ընդհանուր վստահության բարձրացման մասին: Այս գնահատականների ամրապնդման կարևոր գրավական է արձանագրված թերությունների վերացման ուղղված գործողությունների իրականացումը և ընտրական բարեփոխումների շարունակականության ապահովումը:

Առաջարկություններ

Ընդհանուր

Իրականացնել ՀՀ Սահմանադրության փոփոխություններ՝ վերանայելով քաղաքական մեծամասնության ձևավորման և երկրորդ փուլի անցկացման վերաբերյալ դրույթը.

Վերանայել ընտրական օրենսգիրքը՝ հաշվի առնելով 2018թ. հոկտեմբերին Ազգային ժողով ներկայացված փոփոխությունների փաթեթը և ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունների առաջարկությունները

Ընտրակարգ

- Վերացնել համապետական և տարածքային ցուցակների տարանջատումը՝ ամրագրելով միայն համապետական փակ ցուցակներով պարզ համամասնական ընտրակարգ
- Կուսակցությունների մասին ՀՀ օրենքով Սահմանել կուսակցությունների կանոնադրական փաստաթղթերում կուսակցության նախընտրական ցուցակների կազմման եղանակը ձևակերպելու պահանջը
- Նվազեցնել կուսակցության կողմից վճարվող ընտրական գրավը մինչև նվազագույն աշխատավարձի 7 500-ապատիկը՝ դաշինքի համար թողնելով գործող 10 000-ապատիկը, ինչպես նաև քննարկել կուսակցության առաջադրումը պաշտպանող 7 500 վավեր ստորագրության և դաշինքի առաջադրումը պաշտպանող 10 000 վավեր ստորագրության ներկայացմամբ առաջադրվելու այլընտրանքը
- Նվազեցնել ընտրական արգելապատնեշը մինչև համապատասխանաբար 3 և 5 տոկոս կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար՝ ապահովելով մանդատների բաշխմանը առնվազն 4 ուժի մասնակցության պահանջը
- Վերացնել կոալիցիաների կազմում քաղաքական ուժերի քանակի սահմանափակումը և երկարաձգել կոալիցիայի ձևավորման ժամկետը

Ներկայացվածություն

- Կուսակցության (դաշինքի) թեկնածուների ցուցակում մեկ սեռի ներկայացվածության նվազագույն քվոտան բարձրացնել մինչև 40 տոկոս՝ ամրագրելով յուրաքանչյուր հնգյակում $\frac{2}{3}$ հարաբերակցությունը, իսկ յուրաքանչյուր խմբակցությունում մեկ սեռի ներկայացվածության նվազագույն քվոտան սահմանել առնվազն 30 տոկոս
- Հայաստանի Հանրապետությունում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման քաղաքականության իրականացման 2019-2023 թվականների ռազմավարությամբ և միջոցառումների ծրագրով նախատեսել կանանց քաղաքական մասնակցության խթանմանն ուղղված հստակ միջոցառումներ՝ որպես այդ միջոցառումների պատասխանատու ներգրավելով նաև Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովներին, մասնավորապես.
 - Համապետական և տեղական մակարդակում թեկնածուների առաջադրման և գրանցման վերաբերյալ լայն իրազեկման միջոցառումներում շեշտադրել կանանց մասնակցությունը
 - Կուսակցությունների իրազեկման և վերապատրաստման միջոցառումներում ներառել գենդերային հավասարության ապահովման վերաբերյալ տեղեկատվություն
 - Վարել վիճակագրություն և հրապարակել տեղեկատվություն տեղական և համապետական ընտրությունների մասնակից թեկնածուների և ընտրողների սեռային բաշխվածության վերաբերյալ
- Փոփոխել ազգային փոքրամասնությունների մանդատների բաշխման կարգը՝ յուրաքանչյուր 20 մանդատից մեկը վերապահելով ազգային փոքրամասնության ներկայացուցչի

Առաջարկվող կարգ՝ Կուսակցության/դաշինքի փակ ցուցակը կարող է բաղկացած լինել երկու մասից, որի երկրորդ մասում ներկայացվեն ազգային փոքրամասնության (ԱՓ) ներկայացուցիչներ:

Ազգային փոքրամասնության ներկայացուցիչները կարող են ներկայացված լինել ցուցակի երկու մասերում: Ազգային ժողովի ընտրությունների արդյունքում 20 և ավելի մանդատ ստացած կուսակցության մանդատներից առնվազն մեկը տրվում է ազգային փոքրամասնության ներկայացուցչի և այդպես յուրաքանչյուր 20 մանդատի համար: Եթե խմբակցությունը ներկայացնում է մեկից ավելի ազգային փոքրամասնությանը պատկանող պատգամավորի, ամեն հաջորդ մանդատը պիտի տրվի խմբակցությունում չներկայացված ԱՓ պատկանող պատգամավորի: Եթե կուսակցությունը չունի ազգային փոքրամասնության ներկայացուցիչ, ապա մանդատը փոխանցվում է հաջորդ ամենաշատ ձայներ ստացած կուսակցության/դաշինքի ազգային փոքրամասնության ներկայացուցչին: Եթե կուսակցություններից որևէ մեկը չի ստացել 20 մանդատ կամ ավելի, ապա ազգային փոքրամասնությունների լրացուցիչ մանդատներ տրվում են ամենաբարձր քվեներ ստացած առաջին 4 կուսակցությունների/դաշինքների ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին: Այդպիսիք չլինելու դեպքում անցնում է հաջորդ կուսակցությանը, մինչև ապահովվի 4 ազգային փոքրամասնության ներկայացուցչի ներկայացվածություն:

Ընտրական հանձնաժողովներ

- Վերանայել տարածքային ընտրական հանձնաժողովների ձևավորման կարգը: Ընտրական օրենսգրքի ընդունումից հետո դադարեցնել գործող տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների լիազորությունները: Ազգային ժողովում ներկայացված խմբակցություններին հատկացնել տարածքային ընտրական հանձնաժողովի մեկ մանդատ, որոնք համապատասխանում են ԸՕ-ում սահմանված չափանիշներին: Եթե տարածքային ընտրական հանձնաժողովի անդամների թիվն պակաս է լինում 7-ից ապա այդ թիվը լրացնում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ մրցութային

կարգով: Տարածքային ընտրական հանձնաժողովները պաշտոնավարում են 6 տարի ժամկետով: Հանձնաժողովում երկու սեռերի ներկայացվածության պահանջը սահմանվում է այնպես, որ խմբակցությունների և ԿԸՀ-ի կողմից ներկայացվող Տարածքային ընտրական հանձնաժողովի անդամների թեկնածուների ցուցակներում յուրաքանչյուր երկրորդը լինի այլ սեռի ներկայացուցիչ:

- Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում նա նույն հիմունքներով փոխարինվում է իրեն նշանակած սուբյեկտի կողմից նույն սեռի անձով: Եթե հանձնաժողովի անդամին նշանակած խմբակցությունը չի կարող փոխարինել նրան, փոխարինելու լիազորությունը փոխանցվում է ԿԸՀ-ին:
- Վերանայել տեղամասային ընտրական հանձնաժողովների ձևավորման կարգը՝ մինչև 4 խմբակցության դեպքում Ազգային ժողովի բոլոր խմբակցություններին թույլատրելով հանձնաժողովներում ներկայացնել երկուական անդամ ներառյալ հավասար թվով նախագահներ և քարտուղարներ, իսկ 4-ից ավել խմբակցությունների դեպքում թույլատրել ներկայացնել մեկական անդամ: Եթե տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների թիվն արդյունքում պակաս է 8-ից ապա այդ թիվը լրացնում է տարածքային ընտրական հանձնաժողովը: Ընտրական հանձնաժողովներում երկու սեռերի հավասար ներկայացվածության պահանջի ապահովման համար սահմանել խմբակցությունների և Տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ներկայացվող տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների թեկնածուների ցուցակի կազմավորման կարգը այնպես, որ խմբակցությունների կողմից ներկայացվող ցուցակում յուրաքանչյուր երկրորդը լինի այլ սեռի ներկայացուցիչ:
- Ապահովել տեղամասային ընտրական հանձնաժողովների շարունակական վերապատրաստումը (նաև հեռահար) և ստուգարքը: Ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու համար սահմանել ընտրությանը նախորդող 6 ամսվա ընթացքում ստուգարք անցնելու պահանջ, բացառությամբ արտահերթ համապետական ընտրությունների, որոնց դեպքում ԿԸՀ-ն

իրավասու է վկայականի վավերականության այլ ժամկետ սահմանել կամ արտահերթ ստուգարք նշանակել:

- Սահմանել թիրախային խմբերից՝ քաղծառայողների, ուսանողության, զբաղվածության կենտրոնում գրանցված աշխատանք փնտրողների, որպես հանձնաժողովի անդամ ներգրավվելու խթաններ: Մասնավորապես, այլ հավասար պայմանների առկայության դեպքում. 1) պետական կրթաթոշակների տրամադրման հարցում, 2) քաղծառայության մրցույթում նախապատվություն տալ տեղամասային ընտրական հանձնաժողովներում վերջին երկու տարիների ընթացքում առնվազն երկու անգամ ներգրավված անձանց, 3) պետական զբաղվածության գործակալությունում գրանցված գործազուրկ անձանց կողմից վերջին կես տարվա ընթացքում որպես Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ ներգրավվելու դեպքում հարմար աշխատանքի առաջարկից երկրորդ անգամ հրաժարվելու դեպքում չդադարեցնել իր գործազուրկի կարգավիճակը, ինչպես նաև լիազորված մարմնի կողմից զբաղվածության պետական ծրագրերում ընդգրկվելու առաջնահերթության իրավունք վերապահել նախորդ մեկ տարվա ընթացքում առնվազն մեկ անգամ որպես տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ ներգրավված անձանց համար, 4) Պետական զբաղվածության կենտրոնների միջոցով տեղեկացնել կենտրոնների շահառուներին հանձնաժողովի վերապատրաստման և ատեստավորման փուլերի մասին:
- Ապահովել հանձնաժողովների վերապատրաստման դասընթացների և ատեստավորման անցկացման վայրի մատչելիությունը, ինչպես նաև նյութերի առկայությունը մատչելի ձևաչափերով:
- Առաջադրման համար անհրաժեշտ ողջամիտ ժամկետների պահպանմամբ հրապարակել և տարածել ուղեցույցներ, իրականացնել իրազեկման միջոցառումներ, և դասընթացներ՝ ընտրական ընթացակարգերի, թեկնածուների իրավունքների և պարտականությունների, քարոզարշավի կազմակերպման և իրականացման կարգավորումների, պաշտոնում ընտրվելու դեպքում լիազորությունների և պարտականությունների շրջանակի վերաբերյալ

- Տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը դարձնել առավել թափանցիկ՝ ամրագրելով հանձնաժողովի նստավայրը տեսախցիկներով կահավորելու, քվեարկության օրը և դիմումների քննության ժամանակ հանձնաժողովի բոլոր գործողությունները առցանց հեռարձակելու պահանջը

Տեղամասերի կահավորում և տեսանկարահանում

- Բոլոր քվեասենյակները ապահովել պարտադիր տեսանկարահանմամբ
- Տեղամասային կենտրոնների և քվեարկության սենյակների կահավորումն իրականացնել այնպես, որ քվեարկության և հաշվարկի ողջ գործընթացը գտնվի տեսանկարահանող սարքի/սարքերի տեսադաշտում՝ առանց քվեարկության գաղտնիության խախտման:
- Միևնույն շինության մեջ մի քանի տեղամասային կենտրոնների գտնվելու դեպքում տեսանելիորեն նշել յուրաքանչյուր քվեարկության սենյակի սահմանները հստակեցնելով յուրաքանչյուր հանձնաժողովի և տարածքը հսկող ոստիկանների իրավասության տարածքը և ապահովելով քվեասենյակների շրջակայքում կուտակումների բացառումը:

Ընտրական գործընթացների մատչելիություն

- Ապահովել ընտրական բոլոր գործընթացների և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակվող տեղեկատվության մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ընտրական գործընթացների բոլոր փուլերի մատչելիությունը ապահովելիս որպես գործողությունների և միջոցների համապարփակ ուղեցույց ընդունել Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի առաջարկությունների փաթեթը:
- Օրենսդրորեն ամրագրել քվեարկության կազմակերպումն ու անցկացումը միայն մատչելի տեղամասային կենտրոններում՝ ապահովելով

տեղամասային կենտրոնում երկարաժամկետ գտնվելու, ինքնուրույն տեղաշարժման և քվեարկության համար անհրաժեշտ պայմանները:

- Տեսողության խնդիրներ ունեցող ընտրողների համար ապահովել ինքնուրույն քվեարկելու հնարավորությունը հատուկ կադապարի կամ այլ տեխնիկական լուծման միջոցով՝ առանց բացառության բոլոր ընտրությունների ժամանակ

Ընտրական ցուցակներ

- Նախաձեռնել ընտրողների գրանցման սարքերի միջոցով ընտրողների կենսաչափական նույնականացման համակարգի ներդրումը, իրականացնել ընտրողների կենսաչափական նույնականացում՝ բոլոր ընտրողներին տրամադրելով նույնականացման քարտեր, ստեղծելով մատնահետքերի միասնական շտեմարան և համաժամանակյա կապ ստեղծելով գրանցման բոլոր տեխնիկական սարքերի միջև: Այս միջոցով թույլատրել քվեարկության մասնակցությունը տվյալ ընտրությունը սպասարկող ցանկացած տեղամասային կենտրոնում՝ անկախ ընտրողի հաշվառման վայրից
- Իրականացնել ընտրական ցուցակների ճշգրտում և ընտրացուցակների վարման բարելավում՝ նույնականացման քարտեր ունեցող ընտրողների տվյալներով ակտիվ ցուցակի կազմման, վավերականության ժամկետը լրացած փաստաթղթով քվեարկելը արգելելու, անգործունակ ճանաչվելու պատճառով ընտրական իրավունքից զրկված անձանց ընտրական ցուցակներից հեռացնելու (հետագայում սահմանադրական փոփոխությունների համատեքստում այս իրավունքի վերականգնման պայմանով), տեխնիկական սարքավորումների միջոցով գրանցած մասնակիցների ցուցակի հրապարակման միջոցով
- Քվեարկության օրվա և տեղամասային կենտրոնների գտնվելու վայրի վերաբերյալ ընտրողներին ծանուցման գործող փոստային մեթոդը փոխարինել առավել արդյունավետ մեթոդով՝ կարճ հաղորդագրությունների համակարգով և համայնքային նշանակության

օբյեկտներում (փոստ, պոլիկլինիկա, համայնքապետարան ևն) փակցվող ցուցակների միջոցով:

- Կազմակերպել համապետական ընտրությունների քվեարկության օրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող ընտրելու իրավունք ունեցող անձանց քվեարկությունը՝ քվեարկության համար նախագրանցվելու միջոցով

Դիտորդների, վստահված անձանց, ՉԼՍ ներկայացուցիչների և թեկնածուների գրանցումը և իրավունքները

- Դիտորդների, վստահված անձանց և ՉԼՍ ներկայացուցիչների գրանցման և վկայականների տրման գործընթացը իրականացնել միասնական առցանց համակարգի միջոցով՝ նվազագույնի հասցնելով մարդկային գործոնը և ընդլայնելով ժամկետները:

Առաջարկվող մեխանիզմ - Կազմակերպությունը դիտորդական առաքելություն իրականացնելու հայտ է ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողովին քվեարկության օրվանից առնվազն 15 օր առաջ: Կազմակերպությունը պետք է ներկայացնի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը, այդ թվում՝ դիտորդների տվյալների ներկայացման Էլեկտրոնային համակարգից օգտվելու դիմում, և դիտորդների վարքագծի կանոնները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը եռօրյա ժամկետում կազմակերպությանը տրամադրում է դիտորդների տվյալների ներկայացման Էլեկտրոնային համակարգից օգտվելու (դիտորդների ցուցակագրման համար ստեղծված հատուկ կայք) մուտքանուն և գաղտնաբառ: Այնուհետև կազմակերպությունը մուտք է գործում կայքում իր հաշիվը և մուտքագրում է դիտորդների անունները, կոնտակտային տվյալները և անձը հաստատող

փաստաթղթերի տվյալները՝ մինչև վերջնաժամկետը խմբագրելու հնարավորությամբ:

Քվեարկությունից 3 օր առաջ ավարտվում է դիտորդների տվյալների մուտքագրումը/հավատարմագրումը: Այս պահից սկսած՝ համակարգը չի թույլատրում նոր տվյալների մուտքագրում և վերջնական ցուցակը հասանելի է դառնում ԿԸՀ կայքում:

Այս վերջնական ցուցակում ընդգրկված յուրաքանչյուր դիտորդի համար համակարգում գեներացվում է վկայականի ֆայլ, որը պարունակում է տվյալ ընտրության անունը, հավատարմագրող կազմակերպության անվանումը, դիտորդի անուն ազգանունը և եզակի (unique) QR-կոդ: ԿԸՀ-ն սահմանում է տպվող ֆայլի չափերը և տեղամասում կրելու եղանակը: QR-կոդը հնարավոր է սկանավորել («կարդալ») սմարտֆոնի, տեսախցիկ ունեցող համակարգչի, կամ այլ՝ տվյալ նպատակի համար նախատեսված սարքի միջոցով: QR-կոդը պարունակում է հղում դեպի վերջնական ցուցակում ընդգրկված դիտորդի տվյալների ինտերնետային էջ, որտեղ երևում է տվյալ դիտորդին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությունը (անձնական տվյալներ, երբ և ում կողմից է գրանցվել, և այլն): Տվյալների համընկնման դեպքում համակարգը չի թույլատրում գրանցել արդեն որևէ կարգավիճակով գրանցված անձին և ցուցադրում է անձին ավելի վաղ գրանցած կառույցի տվյալները:

Նույն սկզբունքով, բայց մինչև քվեարկության օրվանից 2 օր առաջ, կատարվում է վստահված անձանց, ՉԼՄների գրանցումը:

Հանձնաժողովների անդամների տվյալների գրանցումը համակարգում կատարվում է հանձնաժողովների ձևավորման ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետներում:

Վկայականները վավեր են, եթե սկանավորելով QR-կոդը, հղում է արվում դեպի ԿԸՀ կողմից տնօրինվող բազայում/կայքում տեղադրված տվյալ դիտորդի տվյալների անձնական էջ:

Վկայականները վավեր են միայն անձը հաստատող փաստաթղթի առկայությամբ:

- Դիտարկման համապատասխան մեթոդաբանությունն ներկայացնելու դեպքում դիտորդական դաշինքներին թույլատրել տեղամասային կենտրոնում ներկայացված լինել մինչև 2 դիտորդով
- Դիտորդական առաքելությունն իրականացնող կազմակերպությանը իրավունք վերապահել առանց լիազորագրի ներկայացնել իր կողմից հավատարմագրված դիտորդի շահերը դիտորդի սուբյեկտիվ իրավունքների խախտման դեպքում
- Ստեղծել ընտրական գործընթացների բոլոր մասնակիցների՝ թեկնածուների, վստահված անձանց, հանձնաժողովի անդամների, ՉԼՄ ներկայացուցիչների և դիտորդների կառավարման առանձին առցանց համակարգ, որը հնարավորություն կտա կուսակցություններին, խմբակցություններին, տարածքային և կենտրոնական ընտրական հանձնաժողովներին, ՉԼՄ-ներին և դիտորդական կազմակերպություններին առցանց կառավարել ընտրական գործընթացներում իրենց ներկայացնող մասնակիցների բազան և խուսափել տարբեր գործառույթների համար միևնույն անձանց գրանցումներից
- ԿԸՀ կայքում կայքում հրապարակվող ընտրական ցուցակներում նշել նաև թեկնածուի հետ հետադարձ կապի տվյալներ

Նախընտրական քարոզչություն, քարոզչության

Ֆինանսավորում և ծախսերի հայտարարագրում

- Օրենսդրորեն սահմանել նախընտրական քարոզչությունը
- Ամրագրել վարչական ռեսուրսների չարաշահման ընդհանուր արգելք՝ համաձայն Վենետիկի հանձնաժողովի հանձնարարականի և հստակեցնել հետևանքները

- Ընտրությունների նշանակման պահից բացառել ընտրողների վրա ապօրինի ազդեցությունը՝ ի թիվս գործող միջոցների, արգելելով կամ չեղարկելով քաղաքական ուժերի հետ ասոցացվող բարեգործության դեպքում տվյալ քաղաքական ուժի գրանցումը, ընդլայնելով հայտարարագրվող նախընտրական քարոզչության ծախսերը՝ ներառյալ ընտրական շտաբերի աշխատակիցների, շտաբերի վարձակալության վճարները, տրանսպորտային և գրասենյակային ծախսերը:
- Սահմանել ընտրությունների նշանակման պահից մինչև նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկը ընկած ժամանակահատվածում քարոզչության սահմանափակումների և հասանելի հանրային ռեսուրսների ու ծառայությունների շրջանակը:
- Վերացնել մեկ անձի կողմից նվիրաբերվող գումարի և քարոզարշավի ֆինանսավորման վերին շեմը՝ թափանցիկ դարձնելով քարոզարշավի ֆինանսավորման իրական՝ չմիջնորդավորված աղբյուրները
- Նախընտրական հիմնադրամների մուտքերի և ելքերի կարգավորման նպատակով սահմանել հիմնադրամի միջոցների միայն անկանխիկ օգտագործում նախընտրական հիմնադրամի կառավարման համար ստեղծվող առցանց հաշվի և վճարային քարտի միջոցով
- Նախընտրական հիմնադրամներում նախատեսել քվեարկությունից հետո տպագիր քարոզչանյութերի հետքերի պարտադիր վերացման/ապամոնտաժման համար նախատեսված ծախսերի ծավալով գումար: Ամրագրել ընտրական սուբյեկտների կողմից տպագիր քարոզչանյութերի վերացման համար անհրաժեշտ գումարը հաշվարկելու եղանակը:
- Փոխել վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կարգավիճակը՝ իրավասություն տալով նրան ստուգելու թեկնածուների և կուսակցությունների կողմից ներկայացվող հայտարարագրում նշված եկամուտների, նախընտրական նվիրատվությունների և ծախսերի վերաբերյալ հաշվետվությունների հիմնավորվածությունը
- Սահմանել առցանց գովազդի ֆինանսավորման հայտարարագրման գործուն համակարգ

- Համապետական ընտրությունների դեպքում բոլոր փակ և հատուկ ռեժիմով հաստատություններում հավասարապես հասանելի դարձնել մասնակցող քաղաքական ուժերի վերաբերյալ նախընտրական տեղեկատվությունը
- Ընտրողների ազատ և իրազեկ ընտրության հնարավորության ապահովում՝ հեռուստաբանավեճերի նախատեսման, անվճար եթերաժամանակի ավելացման, առցանց լրատվամիջոցների կարգավորման, քարոզչական նյութերի հասանելիության միջոցով և քարոզչություն կատարելուն կամ քարոզչություն կատարելուց հրաժարվելուն հարկադրելու դեպքերում քրեական պատասխանատվության խստացմամբ
- Սահմանել անմիջական պատասխանատվության միջոցներ նախընտրական փուլում թեկնածուների կողմից ապատեղեկատվության և ատելության խոսքի տարածման համար

Քվեարկության ընթացք

- Օրենսդրորեն ամրագրել քվեարկության ընթացքում քվեախցիկների ներսի արկղերից դատարկվող չօգտագործած քվեաթերթիկների հավաքման և պահպանման կարգի սահմանումը ԿԸՀ-ի կողմից
- Ապահովել քվեարկության իրականացումը միայն նույնականացման քարտերով՝ ակտիվ ընտրացուցակները կազմելով համապատասխան վավեր փաստաթուղթ ունեցող անձանց տվյալներով
- Կազմակերպել քվեարկության սենյակ մոտք գործելու գործընթացը այնպես, որ բացառվի գտնվելու իրավունք չունեցող անձանց ներկայության հնարավորությունը:
- Բացառել զինծառայողների քվեարկության նկատմամբ վերահսկողությունը՝ քվեարկության սենյակում վերադասի գտնվելը արգելելու, քվեարկության օրը զինվորներին զորամասի տարածքից կարճատև արձակուրդների տրամադրման և զինծառայողների քվեարկության տեղամասերի հրապարակման միջոցով: Արձակուրդը

պետք է տրամասրվի ըստ գինձառայողի պահանջի, սակայն չխաթարելով ծառայության բնականոն ընթացքը: Արձակման ընթացքում քվարկությանը մասնակցելը չի կարող համարվել պարտադիր և չափտի վերահսկվի այլ գինձառայողների, վերադասների կողմից:

- Առողջական պատճառներով սակավաշարժուն անձանց իրենց գտնվելու վայրում շրջիկ արկղի միջոցով քվեարկելու հնարավորությունն տալու համար սահմանել շրջիկ արկղի միջոցով քվեարկության հատուկ ընթացակարգ, որով մինչև քվեարկությանը նախորդող 5-րդ օրը ընտրողը կամ նրա կողմից լիազորված անձը կարող է տվյալ տարածքը սպասարկող պետական բժշկական հաստատության կողմից տրված տեղեկանքով հայտ ներկայացնել լիազոր մարմնի համապատասխան բաժին՝ տնային կամ ստացիոնար բուժօգնության պայմաններում շրջիկ արկղի միջոցով քվեարկելու համար: Շրջիկ քվեատուփով քվեարկելու հայտ ներկայացրած անձանց ցանկը դիտարկվում է որպես առանձին տեղամաս, ինչը հնարավորություն կտա վերահսկվող կամ կեղծված քվեարկության, կամ այլ չարաշահումների ի հայտ գալու դեպքում չեղարկել այդ «շրջիկ տեղամասի» արդյունքները և բացառել դրանց ազդեցությունը մյուս տեղամասերի վրա: Այս նպատակով յուրաքանչյուր ընտրական տարածքում կարող են ձևավորվել շրջիկ տեղամասային հանձնաժողովներ:

Քվեարկության արդյունքների ամփոփում

- Քվեաթերթիկների հաշվարկը զուգահեռաբար իրականացնել էլեկտրոնային տարբերակով:

Առաջարկվող մեխանիզմ՝ Յուրաքանչյուր տեղամասի տրամադրվում է 1 երկկողմանի սկաներ (օրինակ), որը ծրագրավորված է և միացված ընդհանուր համակարգին: Հաշվարկի ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության ծրարից հանում է դրոշմանիշով

քվեաթերթիկը, նշում է, որ այն սահմանված նմուշի է և վավեր, տեսանելի է այն դարձնում բոլորին և անց է կացնում սկաներով (կամ փոխանցում է տեխնիկական սարքավորման մասնագետին, որ կատարում է այդ գործողությունը): Քվեաթերթիկը սկանավորվելուց հետո հանձնաժողովի անդամները այն դնում են կուսակցության համապատասխան տրցակի վրա: Չսահմանված նմուշի կամ անվավեր քվեաթերթիկները սկանավորվում են վավեր քվեաթերթիկների սկանավորումից և ամփոփումից հետո: Յուրաքանչյուր քվեաթերթիկի սկանավորումը տևում է մոտավորապես 2-3 վայրկյան: Տվյալները միանգամից (բլոքչեյնով) փոխանցվում են ընդհանուր սերվերին և փոփոխման ենթակա չեն: Տեղամասերի մակարդակով քվեարկության արդյունքները հաշվարկին զուգահեռ էլեկտրոնային արձանագրությունները հայտնվում են ԿԸՅ կայքում: Քվեաթերթիկների քանակի 3 %-ից ավել անճշտությունների դեպքում կատարվում է քվեաթերթիկների պարտադիր վերահաշվարկ:

Խախտումների վիճարկում

- Վերանայել դիմում-բողոքների ընդունման համակարգը՝ Կենտրոնական և Տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից ընդունելով էլեկտրոնային ստորագրությամբ փաստաթղթերը
- Ընդլայնել ընտրական գործընթացների հետ կապված խախտումների բողոքարկման սուբյեկտների կազմը ներառելով ընտրությունների նկատմամբ հանրային վերահսկողություն իրականացնող դիտորդներին և դիտորդական կազմակերպություններին
- Սահմանել դիմումների ընդունման և պատշաճ քննության ողջամիտ ժամկետներ՝ նախատեսելով ընտրությունների արդյունքների չեղարկում և նոր ընտրությունների նշանակում

- Ներդնել թեժ գծով դիմում-բողոքներ ընդունելու և դրանց սեղմ ժամկետներում քննարկելու ընթացակարգ (Կարգը կարող է սահմանվել ԿԸՀ որոշմամբ),
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանել, որ ընտրական խախտումների հետ կապված իրավախախտումները քննում է Տարածքային ընտրական հանձնաժողովները և Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: Վարչական դատավարության օրենսգրքից հանել ընտրական իրավունքի խախտումներով վարչական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգը:

«Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի կազմի մասին

Դիտորդական առաքելությունն իրականացվել է «Անկախ դիտորդ» հասարակական դաշինքի անդամ և գործընկեր կառույցների կողմից:

Դրանք են՝

~ Հելսինկյան Զաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

~ Իրազեկ քաղաքացիների միավորում

~ Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ

~ «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն ՀԿ

~ «Գորիսի մամուլի ակումբ» ՀԿ

~ «Հաշմանդամություն և ներառական զարգացում» ՀԿ

~ «Ազաթ» Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն հասարակական կազմակերպություն

«Հելսինկյան Զաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»

հեռ. (+374 322) 4 22 68: ֆաքս: (+374 322) 4 12 36

Ինտերնետային կայքէջ:

Էլ. Փոստ: hcav@hcav.am

«Իրազեկ քաղաքացիների միավորում»

հեռ. (+374 41) 355042

Ինտերնետային կայքէջ: <http://uicarmenia.org/>, Էլ. Փոստ: uicarmenia@gmail.com

Twitter: @IndObserverArm

Facebook: @Անկախ դիտորդ - Independent Observer

E-mail: independentobserverarm@gmail.com

